

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԶԻՆՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
0514 ԴԻԶԱՅՆ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
<<ԴԻԶԱՅՆԵՐ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԳՈՐԾԸՆԹԱՅԻՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորումը ստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումը ստույգների կիսամյակների							
		Քնն.	Ստու- գաքք	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		5-րդ կուրս	
					Ընդա- մենը	Այդ թվում			3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.	7-րդ կիս.	8-րդ կիս.	9-րդ կիս.	10-րդ կիս.
						Տես. ուսու ց.	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինա ր պարա պ-մունք	17 շաբ	13 շաբ.	17 շաբ.	13 շաբ.	17 շաբ.	13 շաբ	16 շաբ.	2աբ.
1.	ԸՆԴՄԱՆՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՄԱՆՈՒՄՆԱԿԱՆ															
1	Հայրցյեզվի խոսքի մշակույթի հիմունքներ		3;4տ		72	54	18		36	36						
2	Տնտեսագիտության հիմունքներ		5տ		54	44	6	4			54					
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6տ		54	48		6				54				
4	Իրավունքի հիմունքներ		5տ		36	30	6				36					
5	Պատմություն		5տ		54	48		6			54					
6	Ռուսաց լեզու		3;4տ		72	12	60		32	40						
7	Օտար լեզու		3;4տ		72	16	56		34	38						
8	Ֆիզիկական կուլտուրա		2,3,4,5 ,6,7,8, 9		212	8	204		34	26	34	26	34	26	32	
9	Էկոլոգիայի հիմունքներ		6տ		36	28	8					36				
10	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ դրավի ճակների հիմնահարցեր		3տ		18	18			18							
	ԸՆԴԱՄԵՆԸ				680	306	358	16	154	140	178	116	34	26	32	
2.	ԱՌԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ															
1	Հաղորդակցություն		3տ		54	14	40		54							
2	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		60	34	26		60							
3	Ընդհանուր աշխատանքային գործունեության հիմունքներ		5տ		54	12	42		54							
	ԸՆԴԱՄԵՆԸ				168				168							
3.	ԸՆԴՄԱՆՈՒՄՆԱԿԱՆ ԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ															
1	Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում				18	6	12		18							
2	Թղթի վրա գծանկարի տեղադրման մասնագիտական պահանջները				54	14	40		54							

3	Գծանկարում համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները				36	6	30		36							
4	Գծանկարում ճեպանկարի ընկալման և կիրառման մեթոդները				54	16	38		54							
5	Գծանկարում տարբեր նյութերի կիրառման անհրաժեշտությունը և օգտագործման տեխնիկան				72	8	64		72							
6	Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները				72	6	68			72						
7	Գծանկարում ծավալային և տոնային խնդիրների լուծման մեթոդները				108	18	90					72	36			
8	Գունանկարչության մասնագիտական օրինաչափությունները				54	10	44					54				
9	Հաստոցային գունանկարչության ժանրերը և խնդիրները				72	16	56					72				
10	Մոնումենտալ գեղանկարչության առանձնահատկությունները				72	12	60								72	
11	Կերպարվեստում գեղանկարչության արտահայտչամիջոցները և կոմպոզիցիոն խնդիրները				72	12	60								72	
12	Գեղագիտություն և արվեստի ճանաչողություն				36	32	4		36							
13	Երկրաչափական գծագրության հիմնախնդիրները				36	12	24		36							
14	Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները				54	14	40			54						
15	Երկրաչափական գծագրության պահանջները, խնդիրները, մեթոդները և հնարավորությունները				54	12	42					54				
16	Կտրվածքների ֆունկցիոնալ կարևորությունը պրոեկցիոն գծագրության մեջ				54	10	44				54					
17	Գունատեսություն				36	10	26		36							
18	Հորինվածքի կոմպոզիցիայի հիմունքները դիզայնում				36	10	24		36							
19	Արխիտեկտոնիկա				36	12	24				36					
20	Նյութագիտություն և նյութերի տեխնոլոգիա				36	36					36					
21	Քանդակագործության հիմունքները				18	8	10					18				
22	Քանդակագործական աշխատանքի նախապատրաստում				36	4	32					36				
23	Երկրաչափական մարմինների և պարզ իրերի քանդակային կատարման ձևերն ու պարզ մեթոդները				36		36					36				
24	Հարթաքանդակի և բարձրաքանդակի առանձնահատկությունները, պահանջները և խնդիրները				36	2	34							36		
25	Կլոր քանդակի հիմնախնդիրները և կատարման մեթոդները				36	2	34							36		
26	Տիպոգրաֆիկա և շրիֆտ				36	10	26							36		
27	Արվեստի պատմություն և քաղաքակրթություն				36	22	14		36							

28	Համաշխարհային արվեստի զարգացման կարևորագույն դարաշրջանները				36	36					36					
29	Համաշխարհային արվեստի պատմությունը և զարգացումը ըստ աշխարհագրական տարածաշրջանների				36	4	32					36				
30	Հայ կերպարվեստի պատմությունը և նրա զարգացման օրինաչափությունները				36	30	6						28	8		
31	Դիզայնի պատմություն և մեթոդաբանություն				36	32	4				36					
32	Պլաստիկ անատոմիա				18	12	6					18				
	ԸՆԴԱՄԵՆԸ				1458	434	1024			288	180	270	126	270	172	152
	ՀԱՏՈՒԿՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ															
33	Դիզայնի նախագծման հիմունքները				18	12	6				18					
34	Երկրաչափական պարզ ձևերով նախագծային և կոմպոզիցիոն խնդիրների իրականացում				36	8	28				36					
35	Բիոնիկական ուսումնասիրության հիմքով նախագծային առաջարկների իրականացում				54	8	46				54					
36	Փաթեթի նախագծային առաջարկ գրաֆիկական ոճավորումով				72	12	60					72				
37	Երկրաչափական մարմինների կառուցվածքային հիմքով նոր էլեմենտների ձևավորում				54	10	44					54				
38	Պարզ ֆունկցիոնալ կենցաղային իրի նախագծում				72	8	64					72				
39	Բնակելի ֆունկցիոնալ տարածքի կարճատև նախագծի /կյառագուրա/ կատարում				72	18	54								72	
40	Ֆիրմային նշանի կամ ապրանքանիշի գրաֆիկական նախագիծ				54	10	44								54	
41	Միջավայրի կազմակերպման դեկորատիվ էլեմենտի նախագիծ				72	14	58								72	
42	Պլակատի գրաֆիկական պահանջները, կիրառման ոլորտները և առանձնահատկությունները				72	10	62								72	
43	Արտադրական ուսուցում և աշխատանք նյութի վրա				54	10	44					54				
44	Արտադրական պրոցեսներ, հաստոցներ, գործիքներ				36	6	30					36				
45	Մանրակերտի պատրաստման նյութերը և կիրառման հնարավորությունները				36	10	26					36				
46	Փնտրողական /էսքիզային/ մանրակերտի պատրաստում պարզ նյութերով				54	4	50					28	26			
47	Ծավալային լուծումներով իրի մասշտաբային մանրակերտի պատրաստում ժամանակակից նյութերով				72	12	60						72			
48	Մանրակերտում կիրառվող նյութերի մշակման, հարդարման ձևերն ու մեթոդները				72	0	72								72	
49	Էրզոնումիկա և ֆունկցիոնալ վերլուծություն				54	10	44						54			
50	Բիոնական նախագծային արվեստում				54	48	6						54			

51	Դիզայն լուսանկարչություն				54	16	38							54		
52	Համակարգչային գրաֆիկայի ժամանակակից հնարավորությունները				72	14	58						72			
53	Համակարգչային գրաֆիկական ծրագրեր				72	0	72							72		
54	Կետային գրաֆիկա /Adobe Photoshop/				72	0	72							72		
55	Վեկտորային գրաֆիկա /Corel Draw/				72	0	72							72		
					1350	240	1110				108	126	226	278	270	342
	ԸՆԴԱՄԵՆԸ				60				2	20						38
	ՊԱՀՈՒՍՏԱՑՒՆԺԱՄԵՐ				100					20	38		30			12
									612	468	612	468	612	468	576	
6.	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				400											
	ՊՐԱԿՏԻԿԱ				42											
	ՄԻՋԱՆԿՑԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ															
	ՊԵՏԱԿԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ															
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36	36	36	36	36	36	36

IV. ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՏ ԿԱԲՐՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Գրաֆիկա				ԿԱԲՐՆԵՏՆԵՐ
2	Կոլաժ			1	Դիզայն-նախագծային
				2	Գծագրական երկրաչափության
				3	Գունատեսության և կոմպոզիցիայի հիմունքների
				4	Արվեստի և դիզայնի պատմության
				5	Նյութագիտության և նյութերի տեխնոլոգիայի
1	Ուսումնական	2	7	6	Գծանկարի և գունանկարի
2	Մասնագիտական	4	7	7	Քանդակագործության
3	Մասնագիտական	6	7		
4	Նախաավարտական	8	21		
					ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
			42	1	Էրգոնոմիկայի
				2	մակետավորման
				3	լուսանկարչության
					ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ					
Հունիսի 22-ից հուլիսի 5-ը ընդհանուր մասնագիտական նահապետական մասնագիտական մոդուլներից					

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքները յուրաքանչյուր ամսական արդյունքի ստուգելու, ինչպես նաև առաջին ամսական արդյունքի արդյունքի վերաբերյալ կատարվող հաստատության առաջին ամսական արդյունքի արդյունքի /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Առաջին ամսական արդյունքի /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանվում է ՀՀ կրթության նախարարության կողմից:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև առաջին ամսական արդյունքի արդյունքի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բոլոր ջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել լեյն խումբերի՝ յուրաքանչյուր ուսումնական ամսական 8 ուսանող՝ էլն էլ լուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրաքանչյուր մասի համար: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական տեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնական խորհուրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսակները ստուգվող կարող են կազմակերպվել ինքնաշարժային պարապմունքի ձևով: Ուսումնական խորհուրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է լուսուցանողը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց չավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է լուսուցանողը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից երկայնակ ծավալվող նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է լուսուցանողը և ուսումնական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութերը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբերակներով՝ մարզական կուլմբերում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, էլն էլ լուսուցանողի պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական գործնական ուսուցման, արձակուրդի և հանրապետական պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր ստուգությունը: Ամանորին Սուրբ ծննդի տոների շաբաթը լուսուցանողի հաշվին է առանձին նյութերի և յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմվելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների երկայնակ ծրագրի ծրագրի և ստուգությունների անցկացման ձևերը հաստատում է ուսումնական խորհուրդը:
7. Պետական կառավարման նախագրով ամսական կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է լուսուցանողը և ուսումնական խորհուրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության նախարարության սահմանվող կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ առարկայի պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձևով արտվում է հաշվել տվյալ ժամը՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, էլն էլ լուսուցանողի և ուսուցիչների համար, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլիդասիչը	ԱՀ-Հ-3-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում` 14 ժամ գործնական պարապմունք` 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակիսապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ճիշտ է ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերն ու բաղադրիչները, 3) ճիշտ է ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակներն ու բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ճիշտ է ուղղորդում նպատակային հաղորդակցմանը,

	5) անձնական հատկանիշները ճիշտ է օգտագործում գործնական հաղորդակցության մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում միաբարեին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում հետաքրքրություններ և հաճոյախոսում, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ պատրաստել զեկույց և հաղորդում, կառաջադրվեն թեմատիկ քննարկումներ, որոնց ընթացքում ուսանողը հանդես կգա իր հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում միաբարեին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կիրառելանուղղակի հաղորդակցման ձևերը
	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք` պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ տեխնիկական միջոցներ, 4) կազմում է գրություններ` ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ` հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես` հարց ու պատասխան, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում` էլնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա մշակված թեմաներ, դերային խաղերի սցենարներ,

	հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 8 ժամ
Ուսումնառության արդյունք4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում` ըստ իրավիճակի, գրուցակցի կամ հասցեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները` հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել` հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն գործնական աշխատանքներ` որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվեն իրավիճակային խաղեր` անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, գրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես` հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում` ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 8 ժամ

Ուսումնառության արդյունք 5.	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվություն, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում են համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և դրանք օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվեն իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, դերային խաղերի և տարատեսակ այլ սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԵՎԱՌԱՋԻՆՕԳՆՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱՍՕ-3-11-001
Մոդուլի նպատակը	Մովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները

	<p>պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>60 ժամ</p> <p>տեսական ուսուցում՝ 34 ժամ</p> <p>գործնական պարապմունք՝ 26 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 3) ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ըյուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգակից պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ճիշտ է ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, դրանց պահպանման անհրաժեշտության և չպահպանելու դեպքում հնարավոր հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ: Ստորև ներկայացվում է արդյունքի

	<p>ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ol style="list-style-type: none"> 1.անվտանգության հիմնական կանոններն՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, 2.տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 3.հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 4.էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը: 5.կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները: <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք2	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>
Գատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է ներկայացնում կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) Ճիշտ է ներկայացնում արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) Ճիշտ է ներկայացնում առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4)Ճիշտ է ներկայացնում կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար</p>

	<p>սահմանված աշխատանքային պայմանների ապահովման նկոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում` 14 ժամ գործնական աշխատանք` 10 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ցուցաբերել առաջին օգնություն</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը, 3) ճիշտ է կատարում արհեստական շնչառության նսրտի աշխատանքի վերականգնման գործողությունը, 4) ճիշտ է կատարում արյան հոսքի դադարեցման նբացվածքների վիրակապման գործողությունը, 5) ճիշտ է կատարում այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողությունները, 6) ճիշտ է կատարում վիրակապման և անշարժացման գործողությունը` տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ճիշտ է ներկայացնում տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում` նկարագրել) առաջին օգնության գործողություններ` ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես` հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում` ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 10 ժամ գործնական աշխատանք` 10 ժամ
Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը « Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Ը Ն Դ Յ Ա Ն Ո Ւ Ը Հ Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր »	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-3-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային մշակույթ ու էթիկա դրսևորելու, դեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու ու համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում` 12 ժամ գործնական պարապմունք` 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը նուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք են:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) փնտրի և գտնի աշխատանք, 2) հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ, 3) արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը, 4) ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգակիսապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,</p> <p>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</p> <p>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),</p> <p>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</p> <p>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքի ցազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքերի, կողմերի իրավունքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքի ցազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը՝ հիմնավորելով և լինելով համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական</p>

	<p>պահանջները,</p> <p>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>3) ներկայացնում է գործընկերներին կատամամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության նրբություններ,</p> <p>5) ցուցաբերում է գործընկերները շնորհակալարժեքներով և հասկանալու կարողություններ:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կատեգորիա աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ու աշխատակցի հասկանալու կարողությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 10 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Արդյունավետ աշխատել թիմում` պահպանելով էթիկայի նորմերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է կազմակերպությանն պատկանող և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերներին կատամամբ` ըստ նրանց վարքագծի</p>

	<p>դրսևորման,</p> <p>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կատեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհարգալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելուն ախապայմանները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p>

	<p>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակաւալացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումն ուսանողի մոտ կդիտարկվի նաև գործնական ուսուցման գործընթացում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 12 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ>>

Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5 – 12-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել գծանկարը որպես կերպարվեստի բոլոր ճյուղերի հիմք: Տալ գիտելիքներ գծանկարի բազմաթիվ տեխնիկական և մեթոդական միջոցների, ինչպես նաև գծանկարի հիմնական սկզբունքներին:
Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք են:
Ուսումնասիրության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի գծանկարը որպես կերպարվեստի բոլոր ճյուղերի և մասնագիտական ուսուցման հիմք, 2) ներկայացնի գծանկարի բազմաթիվ տեխնիկական և մեթոդական միջոցները, առարկայական միջավայրի և բնության

	<p>ընկալմանու վերաբերյալ մեթոդները,</p> <p>3) ներկայացնի նկարչական հեռանկարչության մեթոդները և սկզբունքները,</p> <p>4) ներկայացնի գրաֆիկական արվեստի առանձնահատկությունները և ճյուղերը,</p> <p>5) ներկայացնի հանձնարարվող նկարչակ անաշխատանքների ընդունված չափերը, նյութերը և մատուցման ձևերը,</p> <p>6) բացատրի գծանկարում առաջադրանքների կատարման պարզից-բարդ սկզբունքը:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել լցման կարը որպես կերպարվեստի բոլոր ճյուղերի և մասնագիտական ուսուցման հիմք
Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ներկայացնել լցման կարի դերը գրաֆիկական արվեստում,</p> <p>2) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը գունանկարչությունում,</p> <p>3) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը քանդակագործության մեջ,</p> <p>4) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը ճարտարապետության մեջ և դիզայնում:</p>
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն գծանկարը որպես կերպարվեստի բոլոր ճյուղերի և մասնագիտական ուսուցման հիմք ընդհանուր հարցերի վերաբերյալ: Ուսանողին կտրվեն հարցեր, պետք է լինի ճիշտ պատասխաններ:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը բավարար է, եթե հարցերին տրվեն անսխալ պատասխան և էսքիզները կատարված լինեն ճիշտ տվյալ արվեստի ճյուղին համապատասխան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է գրականություն, արվեստի ստեղծագործությունների հանրագիտարան, մեծ վարպետների ալբոմներ, սկավառակներ՝ ցուցահանդեսների և թանգարանների, արվեստանոցային պայմաններ գծանկարները կատարելու համար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
Ուսումնառությւն անարդյունք 2	Ներկայացնել լցման կարի բազմաթիվ տեխնիկական և մեթոդական միջոցները, առարկայական միջավայրի և բնության ընկալման ու վերաբերյալ մեթոդները
Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ներկայացնել լցման կարի տեխնիկական միջոցները,</p> <p>2) կարողանում է ներկայացնել լցման կարի մեթոդական ձևերն ու միջոցները,</p>

	<p>3) կարողանում է ներկայացնել առարկայական միջավայրի բնության ընկալմանու վերարտադրման ձևերն ու սկզբունքները,</p> <p>4) կարողանում է ներկայացնել բնության ընկալման ու վերարտադրման օրինաչափությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր գծանկարի բազմաթիվ տեխնիկական միջոցների, բնության ընկալման և վերարտադրման մեթոդների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն և գծանկարում օգտագործում է տեխնիկական միջոցները, գծանկարի մեթոդական ձևերը, վերարտադրման ձևերն ու սկզբունքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսուցողական գրականություն, մեծ վարպետների աշխատանքների վերատպություններ, (ռեպրադուկցիաներ): Նպատակահարմար է գործնական պարապմունքներն անցկացնել արվեստանոցում՝ նկարչական հաստոցի (մոլբերտների) և լուսանկարչական պարագաների օգնությամբ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել նկարչական հեռանկարչության մեթոդները և սկզբունքները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարում է հեռանկարչական մեթոդները պարզ երկրաչափական ձևերի գծանկարում, 2) կիրառում է հեռանկարչական մեթոդներն առարկայական պատկերներում, 3) կիրառում է հեռանկարչական մեթոդները միջավայրային պատկերներում:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր նկարչական հեռանկարչության մեթոդների և սկզբունքների մասին:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը բավարար է, եթե ուսանողը բավարար պատասխան է տալիս մեթոդների և սկզբունքի վերաբերյալ և կատարում է գործնական աշխատանք գծանկարից: Օգտագործելով գիտելիքները պարզ երկրաչափական մարմիններով նատյուրմորտում, կենցաղային առարկաներով նատյուրմորտում, ինչպես նաև հեռանկարչության մեթոդը միջավայրային պատկերներում՝ արվեստանոց, բնանկար:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ֆոնդերում պահված լավագույն աշխատանքները, ուսումնասիրել վերատպություններ մեծ վարպետների նատյուրմորտներից, բնապատկերներից: Գործնական աշխատանքը կատարել արվեստանոցային պայմաններում, անպայման օգտագործելով գիպսե երկրաչափական մարմիններ, կենցաղային առարկաներ:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գրաֆիկական արվեստի առանձնահատկությունները և ճյուղերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գրաֆիկական արվեստի առանձնահատկությունները և ճյուղերը, 2) ներկայացնում է գծանկարի անփոխարինելի դերը գրաֆիկայում, 3) ներկայացնում է գծանկարում պատկերային մասի ճիշտ տեղադրումը, 4) ներկայացնում է գծանկարում համաչափությունների և տոնային հարաբերությունների առանձնահատկությունները, 5) ներկայացնում է նյութի ընկալման և ֆակտուրային լուծման տեխնիկական հնարքները գծանկարում:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր գրաֆիկական արվեստի առանձնահատկությունների ու ճյուղերի վերաբերյալ: Արդյունքի ձեռք բերումը բավարար է, եթե ուսանողը ներկայացնում է գծանկարի դերը գրաֆիկական արվեստում, նրա անփոխարինելի դերը գրաֆիկայում, գործնական աշխատանքում՝ գծանկարում ճիշտ է տեղադրում պատկերային մասը, պահպանում է համաչափություններն ու տոնային հարաբերությունները և ճիշտ լուծում է տալիս նյութի ընկալման և ֆակտուրային տեխնիկական հնարքներին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական աշխատանք: Անհրաժեշտ է արվեստանոցային պայմաններ, նկարչական բոլոր պարագաներով, ֆոնդում պահպանված լավ նմուշների ուսումնասիրություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հանձնարարվող նկարչական աշխատանքների ընդունված չափերը, նյութերը և մատուցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գրաֆիկական աշխատանքների կատարման ընդունված չափերը, ըստ ֆորմատների, 2) ներկայացնում է գրաֆիկայում կիրառվող նյութերն իրենց տեխնիկական հնարքներով և բազմազանությամբ, 3) ներկայացնում է կատարվող գրաֆիկական աշխատանքների մատուցման ձևերը:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր գծանկարում ընդունված չափերի (ֆորմատներ) նյութերի և մատուցման ձևերի վերաբերյալ: Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:
Մեթոդաբանությունը և	Դասախոսություն: Ուսումնառության ընթացքում օգտագործել ուսուցողական գրականություն, ֆոնդում պահպանված

ռեսուրսները	գծանկարների օրինակներ և վերատպություններ մեծ վարպետների աշխատանքներից:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Բացատրել գծանկարում առաջադրանքների կատարման պարզից-բարդ սկզբունքը
Կատարման չափանիշներ	<p>1) Ճիշտ է բացատրում գծանկարում առաջադրանքների կատարման պարզից-բարդ սկզբունքը,</p> <p>2) Ճիշտ է ներկայացնում երկրաչափական մարմինների պատկերային ընկալման և վերարտադրման սկզբունքները,</p> <p>3) Ճիշտ է ներկայացնում նատյուրմորտի և բնանկարի պատկերային և հեռանկարային ընկալման ու կատարման օրենքները և սկզբունքները,</p> <p>4) Ճիշտ է ներկայացնում բնորդի և կոմպոզիցիոն աշխատանքների կատարման տեխնիկական և նյութերի կիրառման հնարավորությունները</p>
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր՝ օգտագործելով պարզից-բարդ սկզբունքը, Դյուրերի մարմինների պարզեցման մեթոդը: Արդյունքը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքում ճիշտ կներկայացնի երկրաչափական պատկերների ընկալման և վերարտադրման սկզբունքները, նատյուրմորտի և բնանկարի պատկերային ու հեռանկարային ընկալման և կատարման սկզբունքները, ինչպես նաև բնորդի և կոմպոզիցիոն աշխատանքների կատարման տեխնիկական և նյութերի կիրառման հնարավորությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսության և գործնական աշխատանքների համար անհրաժեշտ են ձեռնարկներ՝ գծանկարում կառուցման միջոցների վերաբերյալ, վերատպություններ, ալբոմներ, գործնական աշխատանք կատարելու համար արվեստանոցում օգտագործել երկրաչափական պարզ մարմիններ, կենցաղային առարկաներ, ինչպես նաև բնորդ
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԹՂԹԻ ՎՐԱ ԳԾԱՆԿԱՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ թղթի վրա գծանկարի ճիշտ տեղադրման պահանջների վերաբերյալ և դրանք գործնականում կիրառել ու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ

	տեսակ անուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը նուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՌԿ 5-12 -001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի գծանկարի տեղադրման մեթոդները և պահանջները, 2) ներկայացնի նատյուրմորտի մասշտաբային ընկալման խնդիրը, 3) ներկայացնի գծանկարի տեղադրման պահանջները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գծանկարի տեղադրման մեթոդները և պահանջները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կիրառում գծանկարի տեղադրման մեթոդները գիպսե երկրաչափական մարմիններով նատյուրմորտում, 2) ճիշտ է կիրառում տեղադրման օրենքները նատյուրմորտի հորիզոնական և ուղղահայաց առանցքներով, 3) ճիշտ է տեղաբաշխում առաջարկված չափի մեջ նկարվող իրերի պատկերները, 4) ճիշտ է ներկայացնում նատյուրմորտի տեղադրումը՝ հաշվի առնելով հորիզոնի գիծը:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվի գործնական աշխատանք՝ երկրաչափական մարմիններով նատյուրմորտ, օգտագործելով հորիզոնական և ուղղահայաց առանցքների տեղադրման մեթոդները, անպայման հաշվի առնելով հորիզոնի գիծը: Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը գործնական աշխատանքում ցուցաբերում է անհրաժեշտ իմացություն գծանկարի տեղադրման մեթոդների և պահանջների վերաբերյալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական աշխատանքի համար անհրաժեշտ են արվեստանոցային պայմաններ, համապատասխան առարկաներ նատյուրմորտի համար և ածխատանքի կատարում նկարչական հաստոցի վրա: Օգտագործել A2 ֆորմատի թուղթ, ածուխ, սանգինա և մատիտներ, ռետին:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ

Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել նատյուրմորտի մասշտաբային ընկալման խնդիրը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է նատյուրմորտում օգտագործվող իրերի մասշտաբային փոխհարաբերությունը, 2) ներկայացնում է նատյուրմորտի ծավալային ընկալման առանձնահատկությունը, 3) ներկայացնում է նատյուրմորտի ընկալման դաշտի կարևորությունը, 4) ներկայացնում է նատյուրմորտում կիրառվող իրերի տեղադրման փոխհարաբերությունը:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր նատյուրմորտի մասշտաբային ընկալման խնդիրների վերաբերյալ և նրանց մասշտաբային փոփոխությունների, նատյուրմորտի ծավալային ընկալման առանձնահատկությունների, նատյուրմորտի ընկալման դաշտի կարևորության, նատյուրմորտում կիրառվող իրերի տեղադրման փոխհարաբերությունների մասին:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը գործնական առաջադրանքի ժամանակ կցուցաբերի նատյուրմորտի մասշտաբային ընկալման խնդիրների իմացություն:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Դասախոսության և գործնական աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ուսուցողական գրականություն, մեծ վարպետների աշխատանքների վերատպություններ: Գործնական պարապմունքները նպատակահարմար է անցկացնել արվեստանոցում՝ նկարչական հաստոցի և մյուս նկարչական պարագաների օգնությամբ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գծանկարի տեղադրման պահանջները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է թղթի հորիզոնական և ուղղահայաց դիրքերում տեղադրման պահանջները, 2) ներկայացնում է տեղադրման համար անհրաժեշտ տեխնիկական ձևերը և մեթոդները, 3) ներկայացնում է նատյուրմորտի տեսողական չափման մեթոդները և կիրառվող գործիքները:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն գծանկարի տեղադրման պահանջների վերաբերյալ հարցեր:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը գործնական աշխատանքում՝ նատյուրմորտում ճիշտ է օգտագործում հորիզոնական և ուղղահայաց դիրքերում տեղադրման պահանջները, ճիշտ է օգտագործում նատյուրմորտում տեղադրման չափման մեթոդները, կարողանում է նպատակային օգտագործել կիրառվող գործիքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Գործնական աշխատանքի համար անհրաժեշտ են ֆոնդում պահվող գծանկարի օրինակներ, մեծ վարպետների ալբոմներ, ինչպես նաև չափման գործիքների հետ ճիշտ օգտագործման կանոններ, անհրաժեշտ են արվեստանոցային պայմաններ,</p>

	ինչպես նաև նատյուրմորտի համար տարբեր առարկաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳԾԱՆԿԱՐՈՒՄ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-003
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ գծանկարում համաչափությունների ճիշտ ընկալման վերաբերյալ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12- 002 <<Թղթի վրա գծանկարի տեղադրման մասնագիտական պահանջները>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի համաչափությունների ընկալման կարևորությունը գծանկարում, 2) ներկայացնի ծավալային և հարթային պատկերների համաչափությունների ընկալման առանձնահատկությունները, 3) ներկայացնի համաչափությունների կիրառման օրենքները տարածական պատկերներում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակիսակա հիմունքներով:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել համաչափությունների ընկալման կարևորությունը գծանկարում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում են նատյուրմորտի իրերի համաչափությունների ընկալման ձևերը, 2) ներկայացնում են գիպսեղեկորատիվ հարթաքանդակի համաչափությունների ընկալման առանձնահատկությունները, 3) ներկայացնում են բարդ եղեկորատիվ պատկերների հորիզոնական և ուղղահայաց առանցքային համաչափությունները, 4) ներկայացնում են պատկերների համաչափությունների փոխհարաբերությունը:
Գնահատման միջոցը	Կոնկրետ հարցադրումների միջոցով բացահայտել ուսանողի՝ գծանկարում համաչափությունների ընկալման խնդիրների

	<p>վերաբերյալ գիտելիքները:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը բավարար է, եթե ուսանողը, բացի հարցադրումներից, գործնական առաջադրանքում կարողանում է ճիշտ կատարել նատյուրմորտում դրված իրերի համաչափությունները, զիպսե դեկորատիվ հարթաքանդակի համաչափությունները և պատկերների միմյանց նկատմամբ համաչափությունների փոխհարաբերությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական աշխատանքում ուսուցման համար անհրաժեշտ են համաչափությունների վերաբերյալ համապատասխան գրականություն, ֆոնդերում պահպանված լավագույն աշխատանքների ուսումնասիրություն, մեծ վարպետների ալբոմներ, արվեստանոցային պայմաններ, նատյուրմորտի առարկաներ, դեկորատիվ հարթաքանդակներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել ծավալային և հարթային պատկերների համաչափությունների գործնական կիրառման առանձնահատկությունները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է երկրաչափական մարմինների համաչափությունները և կալման սկզբունքը, 2) ներկայացնում է ծավալային իրերով նատյուրմորտի պրակտիկ պատկերման տեխնիկական հնարքները, 3) ներկայացնում է համաչափությունների կիրառման կարևորությունը հարթային պատկերներում, 4) ներկայացնում է մարդու գլխի պատկերման համաչափությունների օրենքները, 5) ներկայացնում է մարդու մարմնի պատկերման անատոմիական համաչափությունները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Ուսանողին կտրվեն հարցադրումներ ծավալային և հարթային պատկերների համաչափությունների գործնական կիրառման առանձնահատկությունների մասին:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը գործնական առաջադրանքի կատարման ժամանակ ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն և գծանկարում ցույց է տալիս երկրաչափական մարմինների համաչափությունները, ծավալային իրերով նատյուրմորտում պատկերներում տեխնիկական հնարքները, կարողանում է ճիշտ կիրառել համաչափությունները հարթապատկերային առաջադրանքներում, համաչափություն ճշգրտիտ օգտագործում է մարդու գլխի և ֆիգուրայի կառուցման ժամանակ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական աշխատանք: Անհրաժեշտ է համապատասխան գրականություն (մարդու անատոմիա): Գործնական աշխատանքը պետք է անպայման կատարվի արվեստանոցային պայմաններում, նկարչական պիտույքների կիրառմամբ: Անհրաժեշտ են բնորդներ՝ գլխի և ֆիգուրայի համաչափությունները նկարելու համար:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 18 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել համաչափությունների կիրառման օրենքները տարածական պատկերներում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է համաչափությունների ճշգրիտ վերարտադրումը բնապատկերում, 2) ներկայացնում է համաչափությունների գրագետ կիրառումը ճարտարապետական կառույցում, 3) ներկայացնում է համաչափությունների հիմնախնդիրները կոմպոզիցիոն աշխատանքներում, 4) ներկայացնում է համաչափությունների կիրառման ճշգրտությունը նկարչական հեռանկարում:
Գնահատման միջոցը	Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն` համաչափությունների կիրառման օրենքները տարածական պատկերներում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը բնապատկերում, ճարտարապետական կառույցում, կոմպոզիցիոն աշխատանքներում, նկարչական հեռանկարում ճիշտ է օգտագործում համաչափությունների կիրառման օրենքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն, գործնական աշխատանք: Անհրաժեշտ է համապատասխան գրականություն, մեծ վարպետների աշխատանքների վերատպություններ: Կոմպոզիցիոն տարածական պատկերներում օգտագործել համաչափությունների կիրառման օրենքները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳԾԱՆԿԱՐՈՒՄ ՃԵՊԱՆԿԱՐԻԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-004
Մոդուլի նպատակը	Այս մոդուլին պատակն է ուսանողին տալ ճեպանկարի ընկալման և կիրառման մեթոդների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում` 16 ժամ գործնական աշխատանք` 38 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցառաջան հրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-003 <<Գծանկարում համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները>> մոդուլը:
Ուսումնառության	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի ճեպանկարի կատարման մեթոդները, 2) ներկայացնի ճեպանկարի կատարման նյութերը, 3) ներկայացնի ճեպանկարի կատարման պահանջները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված շտաբային քննարկման համար սահմանված կատարման չափանիշներ ի բավարարման կարողակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ճեպանկարի կատարման մեթոդները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ճեպանկարը որպես գծանկարի արագ կատարվող նախնական տարբերակ, 2) ներկայացնում է ճեպանկարը որպես գծանկարի ուսուցման վարժանք, 3) կատարում է մարդու, կենդանիների և շրջակա միջավայրի ճեպանկարներ, 4) ներկայացնում է ճեպանկարի կատարման մեթոդները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի, գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի ճեպանկարի կատարման մեթոդները, ճեպանկարը որպես գծանկարի արագ կատարվող նախնական տարբերակ գործնական աշխատանքով, որպես գծանկարի ուսուցման վարժանք, պարզ առարկաներից, կենդանիներից, թռչուններից մինչև մարդ, շրջակա միջավայր:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ են ուսումնական ձեռնարկներ, պահոցներում պահված լավ օրինակներ: Նպատակահարմար է գործնական աշխատանքը կատարել արվեստանոցում, կենդանաբանական այգում, բուսաբանական այգում, հասարակական մարդաշատ վայրերում՝ այգի, շուկա, բաղնիք և այլն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ճեպանկարի կատարման նյութերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ճեպանկարի կատարման նյութերը՝ իրենց տեխնիկական հնարավորություններով, 2) կատարում է ճեպանկար ծուխով, 3) կատարում է ճեպանկար փափուկ մատիտով, 4) կատարում է ճեպանկար սանգինայով,

	<p>5) կատարում է ճեպանկարտուշով և վրձինով,</p> <p>6) կատարում է ճեպանկարմար կերներով,</p> <p>7) կատարում է ճեպանկարխառը նյութերով,</p> <p>8) կատարում է ճեպանկարյուղամատի տներով,</p> <p>9) կատարում է ճեպանկարտարբեր տոնային թղթերի վրա:</p>
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն հարցեր՝ ճեպանկարի կատարման նյութերի և նրանց տեխնիկական հնարավորությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը բավարար կհամարվի, եթե ուսանողը գործնական աշխատանքի միջոցով կկատարի ճեպանկար ածուխով, փափուկ մատիտով, սանգինայով, տուշով և վրձինով, խառը նյութերով, օգտագործելով տարբեր տոնային թղթեր:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Գործնական աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ճեպանկարի կատարման նյութերը, ճիշտ օգտագործելով դրանց տեխնիկական հնարավորությունները: Ուսումնասիրել մեծ վարպետների ճեպանկարները վերատպումներով, ալբոմներ, ֆոնդերում պահված լավագույն աշխատանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ճեպանկարի կատարման պահանջները
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ճեպանկարի կատարման պլաստիկական խնդիրները,</p> <p>2) ներկայացնում է ճեպանկարի արագ կատարման պահանջները,</p> <p>3) ներկայացնում է ճեպանկարի տեղադրման նարտահայտման ձևերը,</p> <p>4) ներկայացնում է ճեպանկարի կատարման կերպարային մճշտությունը,</p> <p>5) ներկայացնում է շարժման կատարման պահանջները ճեպանկարում,</p> <p>6) կատարում է ծավալային պահանջներով ճեպանկարներ,</p> <p>7) կատարում է ընդհանրացումներով ճեպանկարներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանք կատարելու հիման վրա, բացահայտելով ճեպանկարի պահանջները.</p> <p>ա. ճեպանկարի կատարման պլաստիկ խնդիրները,</p> <p>բ. ճեպանկարի արագ կատարման պահանջները,</p>

	<p>գ.Ճեպանկարի ճիշտ տեղադրումը թղթի մեջ, դ.կերպարային ճշտությունը, ե.բնորդի շարժումը, զ.կատարում է ծավալային պահանջները, է.Ճեպանկարը պետք է լինի ընդհանրացված: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքը կատարվում է հիմնականում անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնասիրել պլաստիկ անատոմիա նկարիչների համար ձեռնարկը, ունենալ Ճեպանկարի շատ քանակության թղթեր նկարչական պարագաներ, նյութեր: Ուսուցումը նպատակահարմար է կատարել արվեստանոցում, բնորդը պարտադիր է:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
ՍՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԳԾԱՆԿԱՐՈՒՄՏԱՐԲԵՐՆՅՈՒԹԵՐԻԿԻՐԱՌՄԱՆԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸԵՎՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՏԵԽՆԻԿԱՆ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-005
Մոդուլի նպատակը	<p>Այս մոդուլին պատկանում է ուսանողի մոտ ձևավորել գծանկարչության մեջ օգտագործվող նյութերի կիրառմանն տեխնիկայի մասին գիտելիքներ ու դրանք գործնականում կիրառելու կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>72 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 64 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-004 <<Գծանկարում Ճեպանկարի ընկալմանն կիրառման մեթոդները>> մոդուլը:</p>
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի գծանկարչության մեջ օգտագործվող նյութերը, 2) ներկայացնի գծանկարում կիրառվող նյութերի տեխնիկական հնարավորությունները:
Մոդուլի գնահատման կարգը	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակիա պահովում է:</p>

Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գծանկարչության մեջ օգտագործվող նյութերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարում է գծանկար գրաֆիտային մատիտով, 2) կատարում է կարճատև և ազատ ոճի գծանկար ածուխով, 3) կատարում է միագույն աշխատանք ջրաներկով, 4) կատարում է գծանկար սանգինայով, 5) կատարում է գծանկար տուշով:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Գծանկարում տարբեր նյութերի կիրառման և նրանց տեխնիկաների ճիշտ օգտագործման միջոցով կգնահատվեն ուսանողի կարողությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կկարողանա կատարել կարճատև և ազատ ոճի գծանկար ածուխով, միագույն աշխատանք ջրաներկով, գծանկար սանգինայով և տուշով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անցկացնել արվեստանոցում՝ ձեռքի տակ ունենալով գծանկարչության մեջ օգտագործվող նյութերը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գծանկարում կիրառվող նյութերի տեխնիկական հնարավորությունները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարում է շտրիխային և տոնային գծանկար գրաֆիտային մատիտով, 2) կատարում է տոնային լուծումներով աշխատանքներ ածուխով, 3) կատարում է աշխատանքներ ջրաներկի լվացման տեխնիկայով, 4) կատարում է գծանկար կավճամատիտային նյութերով՝ մուգ տոնային թղթերի վրա, 5) կատարում է տոնային լուծումներով գծանկար ետիսինի հնարավորությունների օգտագործմամբ, 6) կատարում է աշխատանք տարբեր նյութերով խոնավ թղթի վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական առաջադրանքի միջոցով, որը կուղեկցվի գծանկարում կիրառվող նյութերի տեխնիկական հնարավորությունների մասին տեղեկություններով: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ճիշտ, գրագետ և անթերի կկատարի իր առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և	Գործնական աշխատանքները պետք է անցկացվեն արվեստանոցային պայմաններում, նկարչական տարբեր նյութերը

ռեսուրսները	պարտադիր են: Անհրաժեշտ է ունենալ մեծ վարպետների գծանկարների ալբոմներ, համակարգչային դիտումներ, պահոցների լավագույն աշխատանքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
ՍՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԳԾԱՆԿԱՐԻԿԱՌՈՒՑՄԱՆՕՐԵՆՔՆԵՐԸԵՎՄԵԹՈՂՆԵՐԸ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-006
Մոդուլինպատակը	Այսմոդուլինպատակնէուսանողինձանոթացնելգծանկարի կառուցմանընդունվածօրենքներիևկիրառմանմեթոդներին:
Մոդուլիտևոդությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 68 ժամ
Մուտքայինպահանջները	ԱյսմոդուլնուսումնասիրելուցառաջանհրաժեշտէուսումնասիրելԴՈԿ 5-12- 005 <<Գծանկարումտարբերյութերիկիրառմանանհրաժեշտությունըևօգտագործմանտեխնիկան>>մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի գծանկարիկառուցմանօրենքները, 2) ներկայացնի գծանկարի կառուցման մեթոդները:
Մոդուլիզնահատմանկարգը	Մոդուլիընդունելիկատարողականըյուրաքանչյուրարդյունքիհամարսահմանվածկատարմանչափանիշներիբավարար մակարդակիպահովումնէ:
Ուսումնառությանարդյունք 1	Ներկայացնելգծանկարիկառուցմանօրենքները
Կատարմանչափանիշներ	1) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըերկրաչափականմարմիններովնատյուրմորտում, 2) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըառարկայականատյուրմորտում, 3) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըզանգի, գլխիքանդակիևբնորդիդիմանկարի գծանկարներում, 4) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըմարդումարմնի, վերջույթների, գիպսեմոդելների գծանկարներում, 5) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըբնորդիցկատարվածգծանկարչականաշխատանքներում, 6) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըճարտարապետականկառույցներիևնրանցտարբերիգծանկարներում, 7) կիրառումէգծանկարիկառուցմանօրենքներըբնականկարում:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի գիտելիքները գծանկարի կառուցման օրենքների վերաբերյալ: Իսկ գործնական աշխատանքի ժամանակ պետք է ճիշտ օգտագործի գծանկարի կառուցման օրենքները երկրաչափական մարմիններով նատյուրմորտում, առարկայական նատյուրմորտում, գանգի, գլխիքանդակի երնորդի դիմանկարի գծանկարներում, մարդու մարմնի, վերջույթների, գիպսեմոդելների գծանկարներում, բնորդի ցկատարված գծանկարչական աշխատանքներում, ճարտարապետական կառույցների նրանց տարրերի գծանկարներում, բնանկարում: Այս օրենքը կարողանա ճիշտ կիրառել ճարտարապետական կառույցների գծագրերում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական պարապմունքների համար օգտագործել մասնագիտական գրականություն, պլաստիկ անատոմիա նկարիչների համար ձեռնարկներ, կառուցման օրենքների վերաբերյալ տարբեր նկարիչների` Լեոնարդո դա Վինչի, Ա. Դյուրեր և այլ հեղինակների առաջարկություններ` երկրաչափական մարմիններից սկսած մինչև բնորդ (մերկ): Ֆոնդերում պահված լավագույն գծանկարների ուսումնասիրություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 32 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գծանկարի կառուցման մեթոդները
Կատարման չափանիշ	<ol style="list-style-type: none"> 1) կիրառում է գծանկարի կառուցման առանցքային մեթոդը, 2) կիրառում է գծանկարի կառուցման համեմատական մեթոդը, 3) կիրառում է գծանկարի կառուցման տարածական մեթոդը, 4) կիրառում է գծանկարում ծավալների թափանցիկ պատկերման մեթոդը, 5) կիրառում է գծանկարում մասշտաբային կառուցման նտեղափոխման մեթոդը, 6) կիրառում է գծանկարում հորիզոնական նուղղահայաց առանցքներով կառուցման մեթոդը:
Գնահատման միջոցը	Գործնական պարապմունքի ժամանակ ուսանողին հանձնարարվում է կատարել գծանկար` օգտագործելով գծանկարի կառուցման մեթոդները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարված է հիմնականում անսխալ, առաջարկված հանձնարարականում ճիշտ են օգտագործվել և պահպանվել են գծանկարի կառուցման մեթոդները:
Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ

ռեսուրսները	համապատասխան գրականություն, համակարգչով նյութերի ցուցադրման հնարավորություն, հանրահայտ նկարիչների գործերի ուսումնասիրում, առարկաներ, բնորոշներ: Գործնական աշխատանքը անպայման կատարել արվեստանոցում՝ նկարչական հաստոցով և նկարչության համար անհրաժեշտ բոլոր նյութերով և պիտույքներով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳԾԱՆԿԱՐՈՒՄԾԱՎԱԼԱՅԻՆ ԵՎ ՏՈՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-007
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ զծանկարում ծավալային ստոնային խնդիրների լուծման մեթոդներին մասին գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	108 ժամ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցածրագույն պահանջներն ուսումնասիրելի ԴՈԿ 5-12-006 <<Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի ծավալային ստոնային խնդիրները զծանկարում, 2) ներկայացնի զծանկարում ծավալային ստոնային խնդիրների լուծման մեթոդները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդարաքան շտաբային քննարկման արժեքի վաճկատարման չափանիշների բավարարման կարգա կիսապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ծավալային ստոնային խնդիրները զծանկարում
Կատարման չափանիշներ	1) կատարում է կարճատև ստոնային զծանկար ծավալային իրերով, 2) ներկայացնում է ծավալային ստոնային հիմնական խնդիրները զծանկարում, 3) ներկայացնում է տոն, կիսատոն, արտացոլում, փայլի ասկացողությունները զծանկարում, 4) ներկայացնում է ծավալային զծանկար շտրիխային տեխնիկայով, 5) ներկայացնում է ծավալային զծանկար տոնային խնդիրներով:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները ծավալային և տոնային խնդիրները գծանկարում: Իսկ գործնական աշխատանքի ժամանակ պետք է տիրապետի տոն, կիսատոն, արտացոլում, փայլ միջոցներին, կարողանա կիրառել շտրիխային, տոնային տեխնիկաները
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Օգտագործել ֆոնդերում պահված լավագույն օրինակները, գծանկարի և օֆորտների վերատպություններ, մեծ վարպետների ստեղծագործությունների ուսումնասիրություն: Աշխատանքը պետք է կատարել արվեստանոցային պայմաններում՝ նկարչական հաստոցով (մոլբերտ), անհրաժեշտ առարկաներով, նկարչական պարագաներով (A2 վատման, մատիտ, ածուխ) բնորդ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 9 ժամ գործնական աշխատանք՝ 40 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գծանկարում ծավալային և տոնային խնդիրների լուծման մեթոդները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գծանկարում ծավալային և տոնային արտահայտման խնդիրները արհեստական կենտրոնացված լուսավորությամբ, 2) ներկայացնում է գծանկարում ծավալային և տոնային արտահայտման խնդիրները բնական լուսավորությամբ, 3) կատարում է ծավալային և տոնային խնդիրներով գծանկար շտրիխային մեթոդով, 4) ներկայացնում է գծանկարի ծավալային լուծումներ տոնային մեթոդով:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական աշխատանքի միջոցով: Կազմակերպվում է իրավիճակ, որտեղ արհեստական լույսը կենտրոնացված է լամպի միջոցով: Բնական լուսավորությամբ գծանկարում պետք է լուծվեն ծավալային և տոնային խնդիրները: Գծանկարները պետք է կատարվեն շտրիխով և տոնային մեթոդներով: Արդյունքը համարվում է ձեռք բերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի, գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկներ, օգտագործել պահոցներում պահվող գծանկար՝ նկարված տարբեր լուսավորության պայմաններում: Նպատակահարմար է գործնական պարապմունքները անցկացնել արվեստանոցում, ապահովել արհեստական լուսավորություն ստանալու պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 9 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ

ՄՈԴՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳՈՒՆԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ>>

Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-008
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գունային ընկալման և գունանկարչության մասին գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում` 10 ժամ գործնական աշխատանք` 44 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցառաջան հրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>>, ԴՈԿ 5-12-002 <<Թղթի վրա գծանկարի տեղադրման մասնագիտական պահանջները>>, ԴՈԿ 5-12-003 <<Գծանկարի համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները>>, ԴՈԿ 5-12-006 <<Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) բացատրի գունանկարչության մեջ գունային ընկալման նրա ճիշտ ընտրության ձևերը, 2) ներկայացնի գունանկարչության հիմնական առանձնահատկությունները, 3) ներկայացնի գունանկարչության հաստոցային և մոնումենտալ-դեկորատիվ ձևերը, 4) ներկայացնի գունային հագեցվածության, տոնային և ֆակտուրային, ինչպես նաև հակադրության և ընդգծվածության տեխնիկական հնարքները գունանկարում, 5) ներկայացնի գունանկարչության մեջ կիրառվող նյութերը և նրանց տեխնիկաները, 6) ներկայացնի նկարչական հեռանկարչության մեթոդները և սկզբունքները գունանկարում:
Մոդուլի զնաեսական կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված կարողությունների համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգա կիապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բացատրել գունանկարչության մեջ գունային ընկալման նրա ճիշտ ընտրության ձևերը
Կատարման չափանիշներ	1) Բացատրում է գունային հարաբերության նկատմամբ ընտրությունը, 2) հիմնավորում է գույների ճիշտ ընտրությունը և մատուցման ձևերը:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի, գործնական առաջադրանքների միջոցով: Առաջադրվող հարցերի շրջանակը կներառի այնպիսի հարցադրումներ, որոնք կբացահայտեն ուսանողի ձեռք բերումները՝ գունահատման մեջ գունային ընկալման ունակությունները: Գործնական առաջադրանքների միջոցով կգնահատվեն ուսանողի կարողությունները, գունային հարաբերության, գամայի ընտրության, գույնի ճիշտ ընտրության և մատուցման ձևերի համար: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը գործնական աշխատանքի ժամանակ բոլոր պահանջները կատարում է անթերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական և տեսական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ գույնի ընկալման, գամայի ընտրության և ճիշտ մատուցման ձևերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործել ուսումնական ձեռնարկներ, մեծ վարպետների վերատպություններ, պահոցների լավ օրինակներ և անպայման գործնական աշխատանքը կատարել արվեստանոցային պայմաններում և նկաչական անհրաժեշտ պիտույքների օգտագործմամբ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գունահատման հիմնական առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունային պատկերների ընկալման մեթոդները, 2) ներկայացնում է գունային պատկերների վերարտադրման մեթոդները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատելու համար հանձնարարությունները պետք է լինեն գործնական առաջադրանքներ, որի կատարման ժամանակ ուսանողը պետք է ձեռք բերի կարողություններ՝ գունային պատկերների ընկալման մեթոդների վերաբերյալ և այն վերարտադրելու ունակությամբ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, երբ ուսանողը կարողանում է գրագետ կատարել գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ գունային պատկերների ընկալման և վերարտադրման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվում են վերատպություններ մեծ վարպետներից, պահոցների լավ օրինակներ, գեղանկարչությանը վերաբերող լավ ալբոմներ: Ուսուցումը պետք է տեղի ունենա արվեստանոցային պայմաններում: Ձեռքի տակ ունենալ առարկաներ, բնորդ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գունանկարչության հաստոցային և մոնումենտալ-դեկորատիվ ձևերը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունանկարչության հաստոցային ձևերը, 2) ներկայացնում է գունանկարչության մոնումենտալ-դեկորատիվ ձևերը՝ ըստ տեսակների:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է տեսական և գործնական առաջադրանքի միջոցով, որի ընթացքում ուսանողը կներկայացնի հաստոցային և մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչության տեսակները: Գործնական աշխատանքի ժամանակ ուսանողը կկարողանա ցույց տալ նրանց նմանություններն ու առանձնահատկությունները: Էսքիզների միջոցով կբացահայտվի ուսանողի գիտելիքները՝ վիտրաժի, խճանկարի, որմնանկարի, գոբելենի առանձնահատկությունների վերաբերյալ: Արդյունքը կհամարվի բավարար, երբ գործնական առաջադրանքների միջոցով կբացահայտվի ուսանողի էսքիզ անելու կարողությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով, նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ՝ հաստոցային և մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչության ձևերի և տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում կօգտագործվեն մեծ վարպետների ստեղծագործություններ հաստոցային գեղանկարչությունից, ինչպես նաև վերատպություններ, համակարգչային դիտումներ, մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչության նմուշներ: Հաստոցային գեղանկարչության համար անհրաժեշտ է արվեստանոցային պայմաններ և նկարչական պիտույքներ, իսկ մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչության համար էսքիզներ կատարելու պայմաններ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գունային հագեցվածության, տոնային և ֆակտուրային, ինչպես նաև հակադրության և ընդգծվածության տեխնիկական հնարքները գունանկարում:
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունային հագեցվածության կարևորությունը գունանկարում, 2) ներկայացնում է տոնային և ֆակտուրային լուծումների առանձնահատկությունները գունանկարում, 3) ներկայացնում է հակադրության և ընդգծվածության կիրառման հնարքները գունանկարում:
Գնահատման միջոցը	Մովորողների գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով կտրվեն հարցեր գունային հագեցվածության, տոնային

	<p>և ֆակտուրային լուծումների առանձնահատկությունների, հակադրության և ընդգծվածության կիրառման վերաբերյալ:</p> <p>Ուսանողին կտրվեն գործնական առաջադրանքներ, որոնց միջոցով կբացահայտվեն ուսանողի գիտելիքները և կորսությունները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե առաջադրանքները կատարվեն պահանջներին համապատասխան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքը ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով, նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ գունային հագեցվածության, տոնային և ֆակտուրային, հակադրության և ընդգծվածության տեխնիկական հնարքների վերաբերյալ: Առաջադրանքները կատարել արվեստանոցային պայմաններում, օգտագործել նկարչական հաստոց և պիտույքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում` 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք` 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել գունանկարչության մեջ կիրառվող նյութերը և նրանց տեխնիկաները
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գունանկարում կիրառվող նյութերը և նրանց տեխնիկաների կարևորությունը,</p> <p>2) կիրառում է ջրաներկը, յուղաներկը, տեմպերան, գուաշը, ակրիլային ներկերը` իրենց կիրառման համապատասխան տեխնիկաներով և հնարավորություններով:</p>
Գնահատման միջոցը	<p>Սովորողին կհանձնարարվեն գործնական աշխատանքներ` գունանկարչության մեջ օգտագործվող տարբեր նյութերով առաջադրանքներ, որոնց միջոցով կբացահայտվեն ուսանողի կարողություններն ու հմտությունները:</p> <p>Արդյունքը կհամարվի բավարար, ձեռք բերումը հիմնավորված, եթե ուսանողը բոլոր նյութերով աշխատել է ճիշտ` համապատասխան նյութի պահանջներին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքը ձեռք է բերվել տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր գեղանկարչական նյութեր, ուսումնական ձեռնարկներ, վերատպություններ տարբեր նյութերի վերաբերյալ և առաջադրանքները կատարել արվեստանոցային պայմաններում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում` 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք` 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել նկարչական հեռանկարչության մեթոդները և սկզբունքները գունանկարում
Կատարման չափանիշներ	<p>1) կիրառում է հեռանկարչական մեթոդներն առարկայական պատկերներում (նատյուրմորտ),</p> <p>2) կիրառում է հեռանկարչական մեթոդները միջավայրային պատկերներում (բնանկար)։</p>

	3) կիրառում է հեռանկարչական մեթոդները կոմպոզիցիոն աշխատանքներում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի նկարչական հեռանկարչության մեթոդները և սկզբունքները գունանկարում, իսկ գործնական առաջադրանքի միջոցով (նատյուրմորտ) ստուգվելու է ուսանողի կարողությունները՝ հեռանկարչական մեթոդներն առարկայական պատկերներում, հեռանկարչական մեթոդները միջավայրային պատկերներում (բնանկար) և հեռանկարչական մեթոդները կոմպոզիցիոն աշխատանքներում: Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքը կատարել է հիմնականում անսխալ, պահպանված են անհրաժեշտ պահանջները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է արվեստանոցային պայմաններ, ինչպես նաև պլեներային պայմաններ և վերատպություններ մեծ նկարիչներից, որտեղ պարզ երևում է հեռանկարչության մեթոդները կոմպոզիցիայում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՀԱՍՏՈՑԱՅԻՆ ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-009
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել հաստոցային գունանկարչությունը որպես կերպարային արվեստի հիմնական և հնագույն ձև, ծանոթացնել նրա ժանրերին և խնդիրներին:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 56 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-008 <<Գունանկարչության մասնագիտական օրինաչափությունները>> մոդուլը:
Ուսումնասիրության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի հաստոցային գունանկարչությունը իր պատմական զարգացման փուլերով,

	<p>2) ներկայացնի հաստոցային գեղանկարչության ժանրերը,</p> <p>3) ներկայացնի հաստոցային գեղանկարչության պահանջները և օգտագործման նյութերը:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշներ իբրև վարարման կարգակիս պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաստոցային գունանկարչությունը իր պատմական զարգացման փուլերով
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գունանկարի մեթոդով կատարված աշխատանքներ տարբեր դարաշրջաններից և ժանրերից,</p> <p>2) բացահայտում է գունանկարի գունային և կոմպոզիցիոն առանձնահատկությունները,</p> <p>3) ներկայացնում է տարբեր երկրներում և տարբեր դարաշրջաններում կատարված գունանկարչական աշխատանքներ՝ մեկնաբանելով կատարման ոճը և մեթոդները,</p> <p>4) կատարում է տարբեր երկրների գեղանկարիչների աշխատանքների համեմատական վերլուծություն,</p> <p>5) ներկայացնում է հաստոցային գեղանկարչության պահանջները և խնդիրները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի գիտելիքները՝ հաստոցային գեղանկարչության զարգացման, նրա ոճերի, ժանրերի փոփոխումը տարբեր դարաշրջաններում և կարողանա կատարել տարբեր երկրների գեղանկարչական աշխատանքների համեմատական վերլուծություն:</p> <p>Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը տիրապետում է հաստոցային գեղանկարչության պատմական զարգացման փուլերի տեսական գիտելիքներին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Այն կազմակերպվում է համակարգչային դիտումներով, տարբեր դարաշրջանների հաստոցային գեղանկարչության վերատպությունների ուսումնասիրությամբ, արվեստի վերաբերյալ հանրագիտարաններով, հայ դասական նկարիչների վերատպությունների ուսումնասիրությամբ՝ սկսած գրքային գեղանկարչությունից մինչև մեր օրերը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	տեսական ուսուցում՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հաստոցային գեղանկարչության ժանրերը
Կատարման չափանիշներ	1) պարզաբանում է ժանրերի ֆունկցիոնալ տարբերությունները,

	<p>2) կատարում է նատյուրմորտից պրակտիկ աշխատանք՝ թղթի չափի ազատ ընտրություն,</p> <p>3) կատարում է գեղանկարչական աշխատանք՝ բնանկար, կիրառելով տարածական հեռանկարի մեթոդները,</p> <p>4) կատարում է պրակտիկ աշխատանք՝ օգտագործելով ճիշտ տեղադրման մեթոդները,</p> <p>5) կատարում է պրակտիկ աշխատանք գունանկարչությունից՝ պահպանելով կառուցման պահանջները,</p> <p>6) կատարում է բնորդից գունանկարչական աշխատանք՝ հաշվի առնելով անատոմիական առանձնահատկությունները,</p> <p>7) կատարում է ազատ աշխատանք կոլաժային տեխնիկայով:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա:</p> <p>Ուսանողին հանձնարարվելու է հաստոցային գեղանկարչության տարբեր ժանրերի առաջադրանքներ՝ օգտագործելով նատյուրմորտ, բնորդ, բնապատկեր և թեմատիկ-կոմպոզիցիոն աշխատանքներ:</p> <p>Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը գեղանկարչության ժանրերի մասին իր գիտելիքները կարողանում է օգտագործել գործնական աշխատանքների ժամանակ, ներկայացնելով ժանրերի տարբերություններն ու առանձնահատկությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անցկացվում են արվեստանոցային պայմաններում, անհրաժեշտ է ունենալ տարբեր առարկաներ, բնորդներ, պլեներային դասաժամեր, գեղանկարչական հաստոց (մուրբերտ), նկարչական պիտույքներ, տարբեր տեսակի ներկեր և կոլաժային տեխնիկայով ազատ աշխատանք կատարելու համար՝ գունավոր թղթեր, կտորներ: Օգտագործել համաշխարհային արվեստի գլուխգործոց համարվող ալբոմները:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 30 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հաստոցային գեղանկարչության պահանջները և օգտագործման նյութերը
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է հաստոցային գեղանկարչության մեջ տեխնիկայի, կոմպոզիցիոն, գունային, թեմատիկ նյութի ընտրության խնդիրները,</p> <p>2) ներկայացնում է գունանկարում կիրառվող նյութերը և գործիքները,</p> <p>3) կատարում է պարզ իրերով նատյուրմորտի առաջադրանք՝ ջրաներկով,</p> <p>4) կատարում է խառը իրերով բարդ նատյուրմորտ՝ A 2 չափի վրա գուաշով,</p>

	<p>5) կատարում է դիմանկար բնորոշից՝ ակրիլ ներկերով,</p> <p>6) ներկայացնում է գունանկարչության նյութերի համատեղ օգտագործման հնարավորությունները</p> <p>7) ներկայացնում է գունանկարչական նյութերի կիրառման տեխնիկական բազմազանությունը:</p>
Քնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, երբ ուսանողը կկարողանա հաստոցային գեղանկարչության մեջ տեխնիկայի, կոմպոզիցիոն, գունային, թեմատիկ նյութի ընտրության խնդիրները կիրառել գործնական առաջադրանքի ժամանակ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, արվեստանոցային պայմաններում:</p> <p>Օգտագործվում են նկարչական նյութեր և գործիքներ, նկարչական ձեռնարկներ, նկարչության տեխնիկային վերաբերվող ձեռնարկներ, վերասպություններ մեծ վարպետներից, համակարգչային դիտումներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 26 ժամ</p>
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՍՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-010
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ մոնումենտալ գեղանկարչության մասին և իրականացնել պրակտիկ աշխատանք:
Մոդուլի տևողությունը	<p>72 ժամ</p> <p>տեսական ուսուցում՝ 12 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 60 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-009 <<Հաստոցային գունանկարչության ժանրերը և խնդիրները>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <p>1) ներկայացնի մոնումենտալ գեղանկարչությունը որպես ինքնուրույն ուղղություն, պարզաբանել նրա առանձնահատկությունները և ձևերը,</p> <p>2) ներկայացնի մոնումենտալ գեղանկարչության ձևերը և կիրառվող նյութերի տեխնիկական կատարման չափանիշները,</p>

	3) ներկայացնի մասշտաբային խնդիրները, կատարման տեխնիկական հնարքները մոնումենտալ գեղանկարչության մեջ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշներ իբրև վարարման կարգակից պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մոնումենտալ գեղանկարչությունը որպես ինքնուրույն ուղղություն, պարզաբանել նրա առանձնահատկությունները և ձևերը:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մոնումենտալ գեղանկարչության առանձնահատկությունները, 2) ներկայացնում է մոնումենտալ գեղանկարչության կատարման տեխնիկական պահանջները, 3) ներկայացնում է մոնումենտալ գեղանկարչության համար կիրառվող նյութերը, 4) ներկայացնում է փուլային և աշխատանքային միջավայրում մոնումենտալ գեղանկարչության կիրառման տարբերակները և պահանջները, 5) ներկայացնում է որմնանկարի հիմնախնդիրները և կատարում էսքիզային առաջարկ պարզ կրկնվող էլեմենտներով, 6) ներկայացնում է խճանկարի հիմնախնդիրները և պահանջները, 7) կատարում է խճանկարի էսքիզային առաջարկ կոնկրետ միջավայրի համար:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է տեսական և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը հստակ շարադրում է մոնումենտալ գեղանկարչության առանձնահատկությունները, կատարման տեխնիկական պահանջները, կրառվող նյութերը: Իսկ գործնական առաջադրանքի ժամանակ կատարում է էսքիզներ որմնանկարից, խճանկարից:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե առաջադրանքները կատարված են հիմնականում անսխալ, պահպանված են անհրաժեշտ համաչափությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են օրինակելի էսքիզներ պահոցներից, համաշխարհային արվեստի գլուխգործոցներից վերատպություններ, ուսուցողական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մոնումենտալ գեղանկարչության ձևերը և կիրառվող նյութերի տեխնիկական կատարման չափանիշները

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մոնումենտալ գեղանկարչության հիմնական ձևերը՝ որմնանկար, դեկորատիվ պանո, խճանկար, վիտրաժ,</p> <p>2) ներկայացնում է որմնանկարի տեմպերային ներկերով կատարման տեխնիկան՝ պրակտիկ աշխատանքում,</p> <p>3) ներկայացնում է որմնանկարի ակրիլ ներկերով կատարման տեխնիկան՝ պրակտիկ աշխատանքում,</p> <p>4) ներկայացնում է խճանկարի կատարման տեխնիկան և օգտագործվող խճաքարի հնարավորությունները,</p> <p>5) ներկայացնում է կերամիկական մանրասալիկների (սմալտա) կիրառման ֆունկցիոնալ հնարավորությունները,</p> <p>6) կատարում է էսքիզային առաջարկներ խճանկարի նյութի կիրառման հնարավորություններով:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ուսուցումը գնահատվելու է գործնական աշխատանքներ կատարելու հիման վրա: Էսքիզների միջոցով կատարվելու է պրակտիկ աշխատանք:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական և կարողությունները ձեռք բերված, եթե տեխնիկական տեսանկյունից պրակտիկ աշխատանքը ճիշտ է, ներկերը և նյութերը ճիշտ են ընտրվել և կիրառվել:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Անհրաժեշտ են արվեստանոցային պայմաններ, գործիքներ, նյութեր՝ ներկեր, սոսինձներ, կտրիչներ, կերամիկական սալիկներ և այլ անհրաժեշտ պարագաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 30 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել մասշտաբային խնդիրները, կատարման տեխնիկական հնարքները մոնումենտալ գեղանկարչության մեջ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մասշտաբների տեսակները, նրանց կիրառման օրինակները՝ ստեղծագործական և նախագծային աշխատանքում,</p> <p>2) ներկայացնում է կատարված էսքիզի մասշտաբով մեծացման տեխնիկան և աշխատանքի հաջորդականությունը,</p> <p>3) ներկայացնում է պատի մակերեսի նախնական մշակման աշխատանքի տեխնոլոգիան և նյութերը,</p> <p>4) ներկայացնում է որմնանկարում, պանոյում, խճանկարում, վիտրաժում նյութերի համատեղ կիրառման հնարավորությունը և տեխնիկան,</p> <p>5) ներկայացնում է խճանկարի գունային լուծումներ իրականացնելու տեխնիկական հնարավորությունները խճաքարերով,</p> <p>6) ներկայացնում է խճանկարի մոդուլային, առանցքային բլոկներով հավաքման և պատի վրա մոնտաժման տեխնիկան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի</p>

	<p>շրջանակը պետք է բացահայտի նրա գիտելիքները մասշտաբների տեսակների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքի միջոցով կգնահատվի ուսանողի կարողությունները մոնումենտալ գեղանկարչության (որմնանկար, խճանկար, վիտրաժ, դեկորատիվ պանո) մեջ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման պրակտիկ աշխատանքի ընթացքում օգտագործել անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ, գործիքներ, արվեստանոցային պայմաններ: Օգտագործել ուսուցողական գրականություն, դիդակտիկ նյութեր, մեծ վարպետների վերատպություններ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ</p>
<p>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը <<Կ Ե Ր Պ Ա Ր Վ Ե Ս Տ Ո Ւ Մ Գ Ե Ղ Ա Ն Կ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Չ Ա Մ Ի Ջ Ո Ց Ն Ե Ր Ը Ե Վ Կ Ո Մ Պ Ո Ջ Ի Ց Ի Ո Ն Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը >></p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ԴՈԿ 5-12-011</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ գունանկարի արտահայտչամիջոցների փոփոխման, զարգացման, կոմպոզիցիոն և թեմատիկ խնդիրների բազմազանության մասին:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>72 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 60 ժամ</p>
<p>Մուտքային պահանջները</p>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-010 <<Գունանկարչության նյութերը և օգտագործման հնարավորությունները>> մոդուլը:</p>
<p>Ուսումնառության արդյունքները</p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի գունանկարչության արտահայտչամիջոցների և նյութի փոփոխման ժամանակային զարգացման պայմանները, 2) ներկայացնի կոմպոզիցիոն և թեմատիկ բազմազանությունը գունանկարչությունում,

	3) ներկայացնի գունանկարի կատարման առանձնահատկությունները կերպարվեստի պատմական զարգացման հիմքով,
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակից պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գունանկարչության արտահայտչամիջոցների և նյութի փոփոխման ժամանակային զարգացման պայմանները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է արտահայտչամիջոցների տարբերակները հեղինակային աշխատանքներում, 2) կատարում է նատյուրմորտ՝ մակերեսի սպիտակ ծածկույթով կտավի վրա, 3) կատարում է բարդ նատյուրմորտ մուգ ծածկույթով կտավի վրա՝ ակտիվ ներկերով, 4) կատարում է կոմպոզիցիոն աշխատանք տարբեր գունային և տոնային ծածկույթներ ունեցող սովորաբար վրա ակրիլ ներկերով, 5) կատարում է բնանկար՝ ջրաներկի համար նախատեսված հատուկ թղթի վրա, 6) կատարում է գունանկարչական առաջադրանք օգտագործելով տարբեր էֆեկտներ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական պարապմունքների ժամանակ: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը հիմնավորելու է իր գիտելիքները արտահայտչամիջոցների տարբերակների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքներով ցույց է տալիս տարբեր նյութերով արտահայտչամիջոցներ և գունանկարչական տարբեր էֆեկտներ ստանալու իր կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե բոլոր չափանիշները կատարվել են անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պահոցների լավ օրինակներ գունավոր թղթեր, նկարչական պարագաներ, ցուցադրական նյութեր: Աշխատանքը պետք է կատարել արվեստանոցային պայմաններում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կոմպոզիցիոն և թեմատիկ բազմազանությունը գունանկարչությունում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կոմպոզիցիոն խնդիրների բազմազանությունը գունանկարում, 2) կատարում է սիմետրիկ կոմպոզիցիոն լուծումով ռաջադրանք (նատյուրմորտ, որմնանկար), 3) կատարում է ծաղիկներով նատյուրմորտ՝ կիրառելով գունային շեշտադրման սկզբունքը,

	<p>4) նկարում է նատյուրմորտ խառը տեխնիկայով՝ իրականացնելով տոնային խնդիրները,</p> <p>5) կատարում է բնանկար գունային շերտերի տեխնիկայի կիրառմամբ, նյութերի ազատ ընտրությամբ:</p>
Գնահատման միջոցը	<p>Սովորողների գիտելիքները ստուգվելու են տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Կտրվեն հարցեր գունանկարչությունում կոմպոզիցիոն խնդիրների բազմազանության վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքի միջոցով կբացահայտվեն սիմետրիկ կոմպոզիցիոն լուծումների, գունային շեշտադրման սկզբունքի խառը տեխնիկային տիրապետելու կարողություններ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է գունանկարչության համաշխարհային վարպետների օրինակներ, ուսուցողական գրականություն, նատյուրմորտի նյութեր, արվեստանոցային պայմաններ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 25 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել գունանկարի կատարման առանձնահատկությունները կերպարվեստի պատմական զարգացման հիմքով</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ոճի, կատարման տեխնիկայի և կոմպոզիցիոն լուծումների համալիր դրվածքի կարևորությունը գունանկարչությունում, 2) կատարում է ռեալիստական ոճով երկարատև աշխատանք, 3) կատարում է կրկնօրինակման աշխատանք՝ ճանաչված վարպետների գործերից, 4) ներկայացնում է առարկայական նատյուրմորտ տարբեր ոճերով՝ ռեալիստական, դեկորատիվ, աբստրակտ, սյուռռեալիստական և տարբեր ժամանակակից ոճերով:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը նկարագրում է մ գունանկարի կատարման առանձնահատկությունները կերպարվեստի պատմական զարգացման փուլերում: Գործնական առաջադրանքի ժամանակ կատարում է առարկայական նատյուրմորտ տարբեր ոճերով:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքը կատարված է հիմնականում անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում</p>

	օգտագործվելու է գունանկարչության համաշխարհային վարպետների օրինակներ, ուսուցողական գրականություն, նատյուրմորտի նյութեր, արվեստանոցային պայմաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 25 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-012
Մոդուլին պատկեր	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել արվեստի գեղագիտական հարստությանը, նրա ստեղծման պատմությանը, դիտարկել գեղագիտությունը որպես գիտություն և տեսություն, բնորոշել նրա հիմնախնդիրների դաշտը և արժեքը, ներկայացնել արվեստը որպես սոցիալական երևույթ և հասարակական գիտակցության ձև, տալ նպատակային բացատրություն արվեստի տեսակների մասին: Ներկայացնել դիզայնը որպես գիտության և արվեստի սինթեզի, նրա նպատակների, ոլորտների և նախագծային դրվածքի մասին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 32 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>> և ԴՈԿ 5-12-008 <<Գունանկարչության մասնագիտական օրինաչափությունները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի արվեստի գեղագիտական հարստությունը, նրա ստեղծման պատմությունը, գիտական և տեսական հիմնավորումը, 2) ներկայացնի գեղագիտության հիմնախնդիրները և նրա արժեքների տեսական համակարգերը, 3) ներկայացնի արվեստը որպես սոցիալական երևույթ և հասարակական գիտակցության ձև, 4) ներկայացնի արվեստի տեսակները, նրանց դասակարգումը և զարգացումը, ըստ ժանրերի և կոմպոզիցիոն դրվածքի, 5) բնութագրի դիզայնը որպես գիտության և արվեստի սինթեզ, նպատակն ու ոլորտները և նախագծային դրվածքը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշներ քաղված արարման կարգից:

	դակիապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել արվեստի գեղագիտական հարստությունը, նրա ստեղծման պատմությունը, գիտական և տեսական հիմնավորումը:
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արվեստի գեղագիտական հարստությունը, 2) ներկայացնում է արվեստի ստեղծման պատմությունը, 3) ներկայացնում է գիտական և տեսական հիմնավորումը:
Գնահատման միջոցը	Հարց ու պատասխանի միջոցով ուսանողին կտրվեն հարցեր գեղագիտությունը որպես գիտություն և տեսություն և նրա հիմնախնդիրների մասին: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված հարցերին տալիս է ճշգրիտ և գրագետ պատասխան:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցումը կատարվում է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, վերատպություններ, համակարգիչ, կինոդահլիճ՝ արվեստի վերաբերյալ վավերագրական ֆիլմեր դիտելու համար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գեղագիտության հիմնախնդիրները և նրա արժեքների տեսական համակարգերը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արվեստի գեղագիտական հիմնախնդիրները, 2) ներկայացնում է գեղագիտության տեսական համակարգերը, 3) ներկայացնում է հիմնախնդիրներից և տեսական համակարգից բխող վերլուծական հիմնավորումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ստուգվելու են ուսանողի գիտելիքները արվեստի գեղագիտական հիմնախնդիրների, գեղագիտության տեսական համակարգերի և դրանից բխող հիմնավորումների վերաբերյալ: Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար, եթե հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսության ժամանակ անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկներ, արվեստի տարբեր ժամանակաշրջանի ալբոմներ, հանրագիտարաններ, համակարգիչ՝ ինտերնետային ցանցով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել արվեստը որպես սոցիալական երևույթ և հասարակական գիտակցության ձև
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է արվեստը որպես սոցիալական երևույթ, 2) ներկայացնում է արվեստի փուլային և պատմական զարգացումը, 3) ներկայացնում է արվեստը որպես հասարակական գիտակցության և գաղափարախոսության արտահայտման ձև:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Սովորողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն հարցեր արվեստի պատմական զարգացման վերաբերյալ: Ուսանողը պետք է կարողանա ներկայացնել, թե տվյալ ստեղծագործությունը արվեստի պատմական զարգացման որ փուլին է պատկանում:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք՝ ռեֆերատ: Ուսուցման ժամանակ անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, վերատպություններ, արվեստի վերաբերյալ հանրագիտարան, արվեստի մասին վավերագրական ֆիլմեր, ինտերնետ, գրադարանից օգտվելու կուլտուրա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել արվեստի տեսակները, նրանց դասակարգումը և զարգացումը, ըստ ժանրերի և կոմպոզիցիոն դրվածքի
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է արվեստի տեսակներն՝ ըստ իրենց պատմական դրվածքի և զարգացման, 2) ներկայացնում է արվեստի տեսակներն՝ ըստ ժանրերի, 3) ներկայացնում է արվեստի ստեղծագործություններն՝ ըստ կոմպոզիցիոն դրվածքի:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն հարցեր՝ արվեստի տեսակների, նրանց զարգացման պատմական ժամանակաշրջանների, արվեստի ժանրերի վերաբերյալ: Կարող են ներկայացնել նաև ռեֆերատներ:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար, եթե հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական աշխատանքների՝ ռեֆերատների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ արվեստի տեսակների, ժանրերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործել վերատպություններ, ցուցադրում մեծ էկրանով, ֆիլմեր, գրադարանից օգտվելու մշակույթ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	գործնական ժամ` 2 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Բնութագրել դիզայնը որպես գիտության և արվեստի սինթեզ, նպատակնու ոլորտները և նախագծային դրվածքը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է դիզայնը որպես գիտության և արվեստի սինթեզ, 2) ներկայացնում է դիզայնը որպես արվեստի ինքնուրույն տեսակ, 3) ներկայացնում է դիզայնի նպատակը և ոլորտները, 4) ներկայացնում է դիզայնի նախագծային դրվածքը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Մովորողը հստակ շարադրում է դիզայնը որպես գիտության և արվեստի սինթեզ, նպատակն ու ոլորտները և նախագծային դրվածքը: Արդյունքը համարվում է ձեռք բերված` կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն: Ուսումնառության ընթացքում անհրաժեշտ է օգտագործել համապատասխան գրականություն, դիզայնի վերաբերյալ ալբոմներ, ամսագրեր, համակարգչային դիտումներ, ֆիլմեր, դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, սեմինարներ:
Ուսուցման երշխսավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-013
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գծագրական երկրաչափության օրենքների և մեթոդների կիրառման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում` 12 ժամ գործնական աշխատանք` 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք է:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) տիրապետի գծագրման աշխատանքային մեթոդներին և առանձնահատկություններին, 2) իրականացնի ծավալային մոդելների գծագրական պրոեկցիոն կառուցման մեթոդները` կոորդինատների առանցքների և

	<p>երեք պատկերային հարթությունների օգնությամբ, ինչպես նաև գծագրական գործիքներն ու օժանդակ միջոցները,</p> <p>3) տիրապետի գծագրական երկրաչափության տարաբնույթ խնդիրների իրականացման մեթոդներին և գծագրական խնդիրներն իրականացնող համակարգչային նախագծային ծրագրերին,</p> <p>4) ներկայացնի գծագրական երկրաչափության տեխնիկական կատարման սկզբունքները,</p> <p>5) ներկայացնի դետալի գծագրական հատույթների, պատռվածքների, լծորդումների և առանձին կարևոր հանգույցների գծագրման մեթոդները և պահանջները:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված ցուցանիշներին համարժեցիկ և անվտանգ կատարման չափանիշների բավարարման կարգի հիման վրա:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել գծագրման աշխատանքային մեթոդներին և առանձնահատկություններին
Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է գծագրման աշխատանքային մեթոդներին,</p> <p>2) տիրապետում է գծագրման աշխատանքային առանձնահատկություններին:</p>
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն հարցեր գծագրման աշխատանքային մեթոդների և առանձնահատկությունների վերաբերյալ: Արդյունքը կհամարվի ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, գծագրական կուլմաններ, տախտակներ, գործիքներ և գծագրության համար նախատեսված արվեստանոց, համակարգիչ, մեծ էկրան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել ծավալային մոդելների գծագրական պրոեկցիոն կառուցման մեթոդները՝ կոորդինատների առանցքների և երեք պատկերային հարթությունների օգնությամբ, ինչպես նաև գծագրական գործիքներն ու օժանդակ միջոցները
Կատարման չափանիշներ	<p>1) գծում է գծագիրը որպես իրի հարթ գրաֆիկական պատկեր,</p> <p>2) իրականացնում է ծավալային մոդելների գծագրական պրոեկցիոն կառուցման տեսակները,</p> <p>3) իրականացնում է կոորդինատների առանցքների և երեք պատկերային հարթությունների կիրառման սկզբունքները,</p> <p>4) ճիշտ է կիրառում գծագրական գործիքները և օժանդակ միջոցները:</p>
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են ուսանողի գիտելիքները՝ գծագրական պրոեկցիոն կառուցման տեսակների,

	<p>կոորդինատների առանցքների և երեք պատկերային հարթությունների վերաբերյալ: Իսկ գործնական հանձնարարությունների ժամանակ ցույց տա գծագրելու կարողությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ և գրագետ է պատասխանում առաջադրված հարցերին, իսկ գործնական առաջադրանքը կատարում է անթերի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, գծագրության վերաբերյալ ուսումնական ձեռնարկներ, խնդիրների ձեռնարկ, մեթոդական նյութեր, համակարգիչ, պրոեկցիոն սարքեր և անպայման գծագրության պայմաններն ապահովող արվեստանոց կամ լսարան, գծագրական գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել գծագրական երկրաչափության տարաբնույթ խնդիրների իրականացման մեթոդներին և գծագրական խնդիրներն իրականացնող համակարգչային նախագծային ծրագրերին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է միջավայրի մարմինները հեռանկարային սկզբունքով, 2) գծագրում է մարմինները ստվերների և հայելային պատկերների արտահայտմամբ, 3) կիրառում է համակարգչային ծրագրերը գծագրական աշխատանքի ընթացքում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական պարապմունքների միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է գծագրել` օգտագործելով մարմինների և միջավայրի հեռանկարային մեթոդները, մարմինների ստվերները, հայելանման պատկերների և արտացոլման գծագրման մեթոդներ, ինչպես նաև ներկայացնել գծագրական խնդիրները ներկայացնող համակարգչային ծրագրերին վերաբերող գիտելիքներ:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե հարցերին ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ, իսկ գործնական առաջադրանքները կատարվում են գրագետ և անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է օգտագործել գծագրական երկրաչափության համար նախատեսված ուսումնական ձեռնարկներ, գծագրական անհրաժեշտ պիտույքներ, համակարգիչ, մեծ ցուցադրման համար էկրան և գծագրության պայմաններն ապահովող արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 6 ժամ

Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գծագրական երկրաչափության տեխնիկական կատարման սկզբունքները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարում է իրի չափագրում՝ պահանջվող մեթոդներով և գործիքներով: 2) կիրառում է գծագրական ֆորմատների ընդունված ձևերը, 3) ճիշտ է կարդում աշխատանքային և գաբարիտային գծագրերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են ուսանողի գիտելիքները գծագրական երկրաչափության տեխնիկական կատարման սկզբունքների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքի ժամանակ ստուգվելու են ուսանողի իրի չափագրման կարողությունները պահանջվող մեթոդներով և գործիքներով, աշխատանքային և գաբարիտային գծագրերի ճիշտ կարդալը: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը անսխալ կատարի իրի չափագրումը, ճիշտ կարդա աշխատանքային և գաբարիտային գծագրերը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Անհրաժեշտ է օգտագործել մասնագիտական գրականություն, ինտերնետ կայքով համակարգիչ, տեսաերիզ, պլակատներ, գծագրական պիտույքներով հագեցած լսարան կամ արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել դետալի գծագրական հատույթների, պատռվածքների, լծորդումների և առանձին կարևոր հանգույցների գծագրման մեթոդները և պահանջները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում դետալի գծագրական հատույթները, նրանց մեթոդները և պահանջները, 2) ճիշտ է կատարում դետալի պատռվածքները, նրանց մեթոդները և պահանջները, 3) ճիշտ է կատարում դետալի գծագրական լծորդումները, նրանց մեթոդները և պահանջները, 4) ճիշտ է կատարում դետալի կարևոր հանգույցների գծագրումը, նրանց մեթոդները և պահանջները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, բայց ավելի շատ գործնական հանձնարարությունների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել դետալի գծագրական հատույթներ, դետալի պատռվածքները, դետալի լծորդումները համապատասխան մեթոդներով ու առաջադրանքների պահանջներով:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարված են հիմնականում անսխալ, պահպանված են անհրաժեշտ կատարման մեթոդները և պահանջները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր՝ դետալներ, մասնագիտական ձեռնարկներ, պահոցներում պահված օրինակելի գծագրեր, գծագրական պիտույքներ, հատուկ կահավորված գծագրական լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՊՐՈԵԿՑԻՈՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՕՐԵՆՔՆԵՐԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-014
Մոդուլին պատկեր	Այս մոդուլին պատկանելու սանդղին տալիս մասնագիտական գիտելիքներ՝ պրոեկցիոն գծագրության օրենքների մասին նորանբաց գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցառաջան հրաժեշտելու սումասիրել ԴՈԿ 5-12-013 <<Երկրաչափական գծագրության հիմնախնդիրները>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի պրոեկցիոն գծագրության աշխատանքային գործընթացը և կատարման մեթոդները, 2) ներկայացնի տրամաբանական տարածական պատկերացման խնդիրները՝ պարզ, միջին և բարդ լուծումներով, 3) ներկայացնի պրոեկցիոն և երկրաչափական գծագրության պրակտիկ կիրառման կարևորությունը նախագծային աշխատանքներում,
Մոդուլի զնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակից պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պրոեկցիոն գծագրության աշխատանքային գործընթացը և կատարման մեթոդները
Կատարման չափանիշներ	1) իրականացնում է գծագրի կատարման նախապատրաստական աշխատանքներ, 2) իրականացնում է շարժական քանոնի ամրացումը, 3) պատրաստում է աշխատանքի համարանհրաժեշտ բոլոր գծագրական գործիքները,

	<p>4) կատարում է գծագրվող առարկայի չափագրում,</p> <p>5) կատարում է թղթի վրա առարկայի պրոեկցիաների, իզոմետրիայի և դետալների դասավորության էսքիզային սխեման:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքներ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակ ստուգվելու են գծագրի կատարման նախապատրաստական աշխատանքները, շարժական քանոնի ամրացման ձևերը, աշխատանքի համար անհրաժեշտ գործիքների օգտագործման վերաբերյալ գիտելիքները: Իսկ գործնական առաջադրանքների ժամանակ ստուգվելու են ուսանողի՝ գծագրվող առարկայի չափագրման, թղթի վրա առարկայի պրոեկցիաների իզոմետրիայի և դետալների դասավորության էսքիզային սխեմայի կատարման վերաբերյալ կարողությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգի պլակատներ, օրինակելի գծագրեր և գծագրության պահանջներին համապատասխան լսարան:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել տրամաբանական տարածական պատկերացման խնդիրները՝ պարզ, միջին և բարդ լուծումներով
Կատարման չափանիշներ	<p>1) գծագրում է գլանաձև հիմքով առարկայի պրոեկտման պարզ տրամաբանական խնդիր,</p> <p>2) գծագրում է ուղղանկյան հիմքով առարկայի միջին բարդության տրամաբանական խնդիր,</p> <p>3) գծագրում է բազմանկյան ձևով առարկայի պրոեկտման բարդ լուծումներով խնդիր:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հաճնարարություն կատարելու հիման վրա Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ տրամաբանական տարածական խնդիրների լուծումների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական մասնագիտական ձեռնարկներ և գծագրերով ցուցադրական պլակատներ, գծագրության պիտույքներ և համապատասխան կահավորված լսարան:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 14 ժամ

Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պրոեկցիոն և երկրաչափական գծագրության պրակտիկ կիրառման կարևորությունը նախագծային աշխատանքներում,
Կատարման չափանիշներ	1) իրականացնում է պարզ իրի նախագծային գծագիր պրոեկցիաներով, կտրվածքով, տարածական տեսքով, 2) գծագրում է նախագծի դետալների և հանգույցների գծագրեր լծորդումներով և կտրվածքներով, 3) գծագրում է նախագծված իրի առանձին դետալների հավաքման սխեման տարածական պատկերներով, 4) իրականացնում է իրերի գաբարիտային գծագրերը՝ գծերի տարբեր տեսակների օգտագործմամբ:
Գնահատման միջոցը	Մովորողների գիտելիքները գնահատվելու նպատակով կտրվեն մի շարք առաջադրանքներ նախագծային աշխատանքներում պրոեկցիոն և երկրաչափական գծագրության պրակտիկ կիրառման կարևորության վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է անսխալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական մասնագիտական ձեռնարկներ և գծագրերով ցուցադրական պլակատներ, գծագրության պիտույքներ և համապատասխան կահավորված լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-00-15
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ մասնագիտական գիտելիքներ երկրաչափական գծագրության մեթոդների և հնարավորությունների մասին, ներկայացնել նրա պահանջները և հնարավորությունները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցառաջան հրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-014 <<Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) կատարի երկրաչափական գծագրության պահանջները և հնարավորությունները,

	<p>2) ներկայացնի լծորդումների կատարման մեթոդները և խնդիրների բազմազանությունը,</p> <p>3) ներկայացնի գծագրության ժամանակ օգտագործվող գծերի տեսակները:</p>
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ըյուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակիա պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել երկրաչափական գծագրության պահանջները և հնարավորությունները
Կատարման չափանիշներ	<p>1) Ճիշտ ներկայացնում գծագրական խնդիրների կատարման տարբերակներ տարբեր ֆարմատների վրա,</p> <p>2) Ճիշտ ներկայացնում առարկայի պրոեկցիաները պլաստիկ լուծումներով,</p> <p>3) Ճիշտ ներկայացնում մասշտաբային լուծումներ գծագրերում,</p> <p>4) Ճիշտ ներկայացնում երկրաչափական գծագրերի չափանշումը սլաքների կախված անարտահայտմամբ,</p> <p>5) Ճիշտ ներկայացնում չափերի շղթայի կիրառումը գծագրում,</p> <p>6) Ճիշտ կատարում երկրաչափական գծագրության հնարավորությունները նախագծային գրաֆիկական լուծումներում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի գիտելիքները երկրաչափական գծագրության պահանջների և հնարավորությունների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքների միջոցով ստուգվելու են ուսանողի կարողությունները երկրաչափական գծագրության հնարավորությունները նախագծային գրաֆիկական լուծումներով աշխատանքներում:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրված խնդիրները կկատարի ճիշտ և գրագրեւտ, կցուցաբերի նյութի էական կարևորությունը ներկայացնող մասերի կարողություն:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ուսուցողական գրականություն, թեմային վերաբերվող ցուցադրական պլակատներ, համակարգիչ, գծագրական պիտույքներ և անպայման գործնական աշխատանքը կատարվի գծագրական պահանջներին համապատասխան լսարանում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել լծորդումների կատարման մեթոդները և խնդիրների բազմազանությունը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է լծորդվող կետերի և գծերի միացման մեթոդները,

	<p>2) ներկայացնում է գծից-գիծ սահմանանցման ձևերը՝ լծորդման ձևերով,</p> <p>3) ներկայացնում է երկու շրջանագծերի լծորդման մեթոդները,</p> <p>4) ներկայացնում է լծորդման խնդիրների տարբերակներ՝ օգտագործելով շրջանագիծ և գիծ,</p> <p>5) ներկայացնում է կազմած գծերի համակարգը կազմված մի քանի կորերից կամ կորերից և ուղիղներից:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի լծորդումների կատարման մեթոդները և խնդիրները: Գործնական առաջադրանքի միջոցով կգնահատվի ուսանողի կարողությունները կետ և գծի միացման, գծից-գիծ, երկու շրջանագծեր, շրջանագիծ և գիծ, գիծ և կորագիծ լծորդման գծագրերում:</p> <p>Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե գծագրերը կատարված են գրագետ և անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Դասախոսություն և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ուսուցողական գրականություն, լծորդմանը վերաբերվող ցուցադրական պլակատներ, համակարգիչ, գծագրական պլիտոյքներ և անպայման գործնական աշխատանքը կատարվի գծագրական պահանջներին համապատասխան լսարանում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գծագրության ժամանակ օգտագործվող գծերի տեսակները
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է հիմնական հոծ գծերի օգտագործումը գծագրում,</p> <p>2) ներկայացնում է բարակ հոծ գծի օգտագործումը գծագրում,</p> <p>3) ներկայացնում է ալիքավոր հոծ գծի օգտագործումը գծագրում,</p> <p>4) ներկայացնում է ընդհատվող գծակետային բարակ գծի օգտագործումը գծագրում,</p> <p>5) ներկայացնում է ընդհատվող գծիկային գծի կիրառման տարբերակներ,</p> <p>6) ներկայացնում է չափասլաքի, չափագծի, արտաբերման գծերի կիրառման պահանջները գծագրերում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի գիտելիքները գծագրության ժամանակ օգտագործվող գծերի տեսակների վերաբերյալ: Իսկ գործնական հանձնարարության միջոցով ուսանողը պետք է ցույց տա իր կարողություններն ու հմտությունները գծագրման ժամանակ գծերի տեսակների ճիշտ և տեղին օգտագործմամբ:</p>

	Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե առաջադրանքը կատարված է գրագետ և հմտորեն:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ուսուցողական գրականություն, զծերի տեսակներին վերաբերվող ցուցադրական պլակատներ, համակարգիչ, զճագրական պիտույքներ և անպայման գործնական աշխատանքը կատարվի զճագրական պահանջներին համապատասխան լսարանում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Ս Ը << Կ Տ Բ Վ Ա Շ Ք Ն Ե Բ Ի Ֆ Ո Ւ Ն Կ Ց Ի Ո Ն Ա Լ Կ Ա Բ Ե Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Պ Ը Ո Ն Կ Ց Ի Ո Ն Գ Ծ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ե Ջ >>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-016
Մոդուլին պատասկը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կտրվածքների և զճագրերը կիրառելու հնարավորությունների վերաբերյալ կարողություններ:
Մոդուլի սևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցանառառանհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-015 <<Երկրաչափական զճագրության պահանջները, խնդիրները, մեթոդները և հնարավորությունները>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի կտրվածքի տեսակները և առանցքային տարբերությունները, 2) ներկայացնի կտրվածքը աքսոնոմետրիկ պրոեկցիաների համակարգում, 3) ներկայացնի կտրվածքի կիրառումը նախագճային առաջարկներում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակիս պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կտրվածքի տեսակները և առանցքային տարբերությունները
Կատարման չափանիշներ	1) կատարում է առարկայի ֆրոնտալ կտրվածքի զճագիր, 2) կատարում է առարկայի հորիզոնական կտրվածքի զճագիր,

	<p>3) կատարում է առարկայի պրոֆիլ կտրվածքի գծագիր,</p> <p>4) ներկայացնում է երեք կտրվածքների միասնական կարևորությունը,</p> <p>5) իրականացնում է կտրվածքների շտրիխավորում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով կստուգվեն ուսանողի գիտելիքները կտրվածքի տեսակների և տարբերությունների վերաբերյալ: Իսկ գործնական հանձնարարություններով կստուգվեն ուսանողի կարողությունները առարկայի ֆրոնտալ հորիզոնական, պրոֆիլ կտրվածքների և նրանց ճիշտ շտրիխավորման ձևերի ու պահանջների կատարմամբ:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե հարցերին ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ, իսկ գործնական առաջադրանքները կատարվում են անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թեմային համապատասխան ցուցադրական նյութեր, գծագրական պիտույքներ և գծագրության պահանջներին համապատասխան կահավորված արվեստանոց:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կտրվածքը աքսոնոմետրիկ պրոեկցիաների համակարգում
Կատարման չափանիշներ	<p>1) կատարում է գլանաձև առարկայի կտրվածքի գծագրի թիվերի կհամակարգում,</p> <p>2) կատարում է ուղղանկյուն հիմքով պրիզմայի կտրվածքի գծագիր դիմետրիկ համակարգում,</p> <p>3) ներկայացնում է տարբեր երկրաչափական ձևաստեղծում ունեցող առարկաների հատման համար ճիշտ պրոեկցիոն համակարգ,</p> <p>4) ներկայացնում է կտրող հարթության արտահայտման ձևերը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի կողմից աքսոնոմետրիկ պրոեկցիաների կտրվածքի վերաբերյալ գիտելիքները: Իսկ գործնական հանձնարարության կատարմամբ կստուգվեն ուսանողի՝ գլանաձև առարկայի իզոմետրիկ, ուղղանկյուն հիմքով պրիզմայի դիմետրիկ և տարբեր տեսակի երկրաչափական ձև ունեցող տարբեր առարկաների կտրածքներ գծագրելու կարողությունները:</p>

	Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կատարի բոլոր պահանջները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թեմային համապատասխան ցուցադրական նյութեր, տարբեր կտրվածքներին վերաբերող ցուցադրական պլակատներ,զծագրական պիտույքներ և զծագրության պահանջներին համապատասխան կահավորված արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 14 ժամ
Ուսումնառությանարդյունք 3	Ներկայացնել կտրվածքի կիրառումը նախագծային առաջարկներում
Կատարմանչափանիշներ	1) կատարում է առանցքային ֆրոնտալ կտրվածքի զծագիր նախագծված իրի համապատասխան, 2) կատարում է իրի կտրվածքի զծագիր գունային ընդգծվածություն, 3) կատարում է ֆունկցիոնալ կտրվածքների զծագիր մի քանի հարթություններով, 4) կատարում է կտրվածքի զծագիր մանրակերտի վրա էլեմենտների մասնատման շնորհիվ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով կստուգվեն ուսանողի գիտելիքները նախագծային առաջարկներում կտրվածքի կիրառման վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքների միջոցով կբացահայտվեն ուսանողի նախագծված իրի ֆրոնտալ կտրվածքի, կտրվածքի գունային ընդգծվածության, մի քանի հարթություններով կտրվածքի, ինչպես նաև մանրակերտի էլեմենտների կտրվածքի վերաբերյալ կարողությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թեմային համապատասխան ցուցադրական նյութեր, ինչպես նաև մանրակերտեր, տարբեր կտրվածքներին վերաբերող ցուցադրական պլակատներ, զծագրական պիտույքներ և զծագրության պահանջներին համապատասխան կահավորված արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 16 ժամ
ՄՈԴՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-017
Մոդուլինպատասկը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել դիզայնի նախագծային գործունեության ոլորտներում գունատեսության վերաբերյալ կարողություններ:

Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-008 <<Գունանկարչության մասնագիտական օրինաչափությունները>> , ԴՈԿ 5-12-012 <<Գեղագիտությունն արվեստի ճանաչողություն>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի գունատեսությունը որպես գիտություն, 2) ներկայացնի մարդու կողմից գույնի ընկալման առանձնահատկությունները, 3) ներկայացնի գույնի կիրառման տեսությունը պրակտիկ նախագծային գործունեության տարբեր ոլորտներում, 4) ներկայացնի գույնի տեսության և գույնի դասակարգման խնդիրները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ըյուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակից պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գունատեսությունը որպես գիտություն
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունատեսությունը որպես գիտություն, 2) ներկայացնում է գունատեսության կիրառման կարևորությունը նախագծային հորինվածքներում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը կբացահայտի, թե ինչ է ներկայացնում գունատեսությունը որպես գիտություն: Իսկ գործնական առաջադրանքների միջոցով կգնահատվեն ուսանողի կարողությունները գունատեսության նախագծային հորինվածքներում կիրառելու ժամանակ: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսուցողական ձեռնարկներ, դիդակտիկ պլակատներ կամ պահոցներում լավագույն պահպանված նաժազծայի հորինվածքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու կողմից գույնի ընկալման առանձնահատկությունները

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գույնի ընկալման առանձնահատկությունները,</p> <p>2) ներկայացնում է գույնը որպես գեղարվեստական արտահայտչականության ինքնատիպ միջոց,</p> <p>3) ներկայացնում է գույնը որպես դիզայն նախագծային մտքի բացահայտման կարևորագույն միջոց:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Մովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ գույնի ընկալման առանձնահատկությունների, մարդու կողմից գույնը որպես գեղարվեստական արտահայտման միջոցի վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե նախագծային հորինվածքներում գույնը մտքի բացահայտման կարևոր միջոց պատկերվի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքների ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ օրինակներ, ալբոմներում տեղադրված լավագույն նմուշներ: Գործնական աշխատանքը պետք է կատարվի արվեստանոցային պայմաններում, որտեղ կան թեք սեղաններ, նկարչական պիտույքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել գույնի կիրառման տեսությունը պրակտիկ նախագծային գործունեության տարբեր ոլորտներում</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գույնի հատկությունների հիմնական տեսական դրույթները,</p> <p>2) ներկայացնում է գունային հորինվածքների կազմակերպման եղանակները,</p> <p>3) ներկայացնում է գունային հորինվածքների կազմակերպման սկզբունքները:</p>
Գնահատման միջոցը	<p>Մովորողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն հարցեր՝ գույնի կիրառման պրակտիկ նախագծային գործունեության տարբեր ոլորտների, հիմնական տեսական դրույթների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքների ժամանակ ուսանողը կիրառում է գունային հորինվածքների տարբեր եղանակներ և սկզբունքներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե սահմանված բոլոր չափանիշները կատարվել են:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ուսուցողական գրականություն, պահոցներում պահվող նախագծային հորինվածքների լավագույն օրինակներ, համակարգի՝ ինտերնետ կայքով, հարմարավետ արվեստանոց՝ նախատեսված կոմպոզիցիոն գործերի համար:</p>
Ուսուցման երաշխավորված	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p>

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գույնի տեսության և գույնի դասակարգման խնդիրները,
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է քրոմատիկ և աքրոմատիկ գույների համակարգերը, 2) ներկայացնում է գույնը որպես ֆիզիկական և հոգեֆիզիոլոգիական մեծություն, 3) ներկայացնում է գունային սանդղակի (սպեկտրի) հիմնական, լրացուցիչ, օժանդակ և հակադիր գույները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Կտրվեն հարցեր գույնի դերի և գույնը որպես ֆիզիկական և հոգեֆիզիոլոգիական մեծության վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքների ժամանակ կստուգվեն ուսանողի կարողությունները քրոմատիկ և աքրոմատիկ գույների, գունային սանդղակի հիմնական, լրացուցիչ, օժանդակ և հակադիր գույների վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է օգտագործել ուսումնական գրականություն, համակարգիչ, ցուցադրական պլակատներ, մեծ էկրան: Գործնական աշխատանքները կատարել կոմպոզիցիայի համար նախատեսված թեք սեղաններով արվեստանոցում, ունենալ նկարչական և զծագրական պիտույքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՀՈՐԻՆՎԱԾՔԻ (ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ) ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԴԻԶՍՅՆՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-018
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել ծավալային պատկերացման և մտածելակերպի, ինչպես նաև հորինվածքի (կոմպոզիցիոն) հիմնական հարցադրումներին, հիմնվելով հորինվածքի գործոնների ֆունկցիոնալ կիրառման և օրինաչափություններ վրա:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-011 <<Կերպարվեստում գեղանկարչության արտահայտչամիջոցները և կոմպոզիցիոն խնդիրներ>>, ԴՈԿ 5-12-017

	<<Գունատեսություն>>մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի ծավալային պատկերացման և ձևաստեղծման վերլուծություն և հիմնավորում, 2) բացատրի հարթային, ծավալային և ծավալա-տարածական հորինվածքում գույնի կիրառման կարևորությունը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգով հաստատվում է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ծավալային պատկերացման և ձևաստեղծման վերլուծություն և հիմնավորում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է պարզ կենցաղային իրերի ֆունկցիոնալ և ծավալագոյացման վերլուծություն, 2) ներկայացնում է հորինվածքի գործոնների համաչափությունների, ռիթմիկ դրվածքի, հակադրությունների, ինչպես նաև մասշտաբային հիմնախնդիրների կիրառումը առարկայական միջավայրում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվելու է բանավոր հարցերի և գործնական աշխատանքի հիման վրա: Բանավոր հարցումների միջոցով ուսանողը հիմնավորում է պարզ կենցաղային իրերի ֆունկցիոնալ և ծավալագոյացման վերլուծությունը: Իսկ գործնական աշխատանքի ժամանակ կատարում է հորինվածքի համաչափությունների, ռիթմիկ, հակադիր, ինչպես նաև մասշտաբային հիմնախնդիրների կիրառումը առարկայական միջավայրում: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, ձևակերպումները կատարում է գրագետ, իսկ գործնական առաջադրանքը կատարում է անթերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական առաջադրանքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական նյութեր, համակարգիչ, պրոեկցիոն սաքք, համապատասխան կոմպոզիցիոն արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 12 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Բացատրել հարթային, ծավալային և ծավալա-տարածական հորինվածքում գույնի կիրառման կարևորությունը
Կատարման չափանիշներ	1) բացատրում է հորինվածքի ծավալային իրականացման հնարավորությունը աքրոմատիկ (միագույն) և քրոմատիկ (բազմագույն) լուծումների տարբերակներով, 2) ներկայացնում է ծավալա- տարածական հորինվածքը պրակտիկ աշխատանքով:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի

	<p>շրջանակը պետք է ներկայացնի հարթային, ծավալային և ծավալա-տարածական հորինվածքում գույնի կիրառման կարևորությունը: Գործնական առաջադրանքի միջոցով պետք է կատարի հորինվածքի ծավալային լուծումը աքրոմատիկ և քրոմատիկ տարբերակներով և պրակտիկ աշխատանքում ցույց տա ծավալա-տարածական հորինվածքը:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Ուսուցման ընթացքում օգտագործելու են դիդակտիկ նյութեր, ցուցադրական լավ կատարված օրինակներ, ուսուցողական գրականություն, համապատասխան կոմպոզիցիոն արվեստանոց:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԱՐԽԻՏԵԿՏՈՆԻԿԱ>></p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ԴՈԿ 5-12-019</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ծավալա-ձևերի հիմնական հատկությունների և նրանց կառուցման օրինաչափությունների, տեկտոնիկ համակարգերի և ձևաստեղծման մեթոդների ու գեղարվեստական արտահայտչականության միջոցների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>36 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ</p>
<p>Մուտքային պահանջները</p>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-013 <<Երկրաչափական գծագրության հիմնախնդիրները>>, ԴՈԿ 5-12-017<<Գունատեսություն>>, ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքի(կոմպոզիցիայի) հիմունքները դիզայնում>> մոդուլները:</p>
<p>Ուսումնառության արդյունքները</p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի ընդհանուր տեղեկություններ արվեստի տեկտոնիկայի, երկրաչափական ձևերի, հարթային, ծավալային, հորինվածքների ձևաստեղծման հիմունքներին մասին, 2) ներկայացնի ընդհանուր տեղեկություններ հորինվածքային օրինաչափությունների մասին, 3) ներկայացնի ընդհանուր տեղեկություններ հորինվածքների գեղարվեստական միջոցների մասին:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակիսապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ընդհանուր տեղեկություններ արխիտեկտոնիկայի, երկրաչափական ձևերի, հարթային, ծավալային, հորինվածքների ձևաստեղծման հիմունքների մասին:
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ընդհանուր տեղեկություններ արխիտեկտոնիկա ձևաստեղծման հարթ մակերևույթի ձևափոխումը ռելիեֆի և ծավալային ձևերի,</p> <p>2) ներկայացնում է մոդուլային համակարգերի ձևաստեղծման տարբերակները (կոմբինատոր փոխակերպումներ),</p> <p>3) ներկայացնում է տեկտոնիկ համակարգերը ծավալա-տարածական կառուցվածքներում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի արխիտեկտոնիկայի ձևաստեղծման և ծավալային ձևերի, մոդուլային համակարգերի ձևափոխման տարբերակների իրականացումը: Իսկ գործնական առաջադրանքի միջոցով կգնահատվի ուսանողի՝ հարթ մակերևույթների ձևափոխումը ծավալայինի, մոդուլային ձևաստեղծման կարողությունները և հմտությունները:</p> <p>Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը բանավոր և գործնական առաջադրանքները կատարի կատարման չափանիշներին համապատասխան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պահոցներում պահված աշխատանքների լավ օրինակներ, համակարգիչ, նկարչական և գծագրական պիտույքներ, գործնական աշխատանքը անպայման կատարել համապատասխան արվեստանոցային պայմաններում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ընդհանուր տեղեկություններ հորինվածքային օրինաչափությունների մասին
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է էլեմենտների համաչափության և փոխկապակցության, կենտրոնի դոմինանտի առկայության, մասերի հավասարակշռության և ամբողջականության մասին,</p> <p>2) ներկայացնում է հորինվածքային օրինաչափությունների կիրառման հնարավորությունը հարթային, ծավալային և</p>

	տարածական ձևաստեղծումներում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողը պետք է ցույց տա իր գիտելիքները հորինվածքային օրինաչափությունների մասին, իսկ գործնական առաջադրանքներում կարողանա օգտագործել հորինվածքային օրինաչափությունների կիրառման հնարավորությունները հարթային, ծավալային և տարածական ձևաստեղծումներում: Արդյունքի յուրացումը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պահոցներում պահված աշխատանքների լավ օրինակներ, դիդակտիկ նյութեր, սովորաթղթեր, նկարչական և գծագրական պիտույքներ, գործնական աշխատանքը անպայման կատարել համապատասխան արվեստանոցային պայմաններում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ընդհանուր տեղեկություններ հորինվածքների գեղարվեստական միջոցների մասին
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ընդհանուր տեղեկություններ հորինվածքի հիմնական գործոնների (ռիթմ, համաչափություն, հավասարակշռություն, սիմետրիա, ասիմետրիա, դինամիկա, ստատիկա, մասշտաբայնություն, ֆակտուրա, գույնի) մասին, 2) ներկայացնում է հորինվածքի գեղարվեստական միջոցների արխիտեկտոնիկ կիրառումը դիզայնի տարբեր ոլորտներում, 3) ներկայացնում է հորինվածքի կմախքային (կարկասային) և թաղանթային, թաղանթային և ծալքային համակարգերի ստեղծման մեթոդները և ստեղծված մակերևույթների դեկորատիվ հատկությունները, 4) ներկայացնում է երկրաչափական նմանության և համաչափության դերը ձևի տեսողական (վիզուալ) ընկալման մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով բացահայտվում է ուսանողի գիտելիքները հորինվածքի գեղարվեստական տարատեսակների մասին: Իսկ գործնական առաջադրանքների միջոցով բացահայտվում է հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմնական գործոնների (սիմետրիկ ասիմետրիկ, դինամիկ ստատիկ) վերաբերյալ ուսանողի կարողությունները և գիտելիքները: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ճիշտ կիրառի գեղարվեստական միջոցները դիզայնի տարբեր ոլորտներում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պահոցներում ցուցադրման համար լավ օրինակներ, համակարգիչ, գծագրական և նկարչական պիտույքներ, կոմպոզիցիայի համար անհրաժեշտ սեղաններով արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-020
Մոդուլին պատկերում	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել ավանդական և ժամանակակից կոնստրուկտիվ և հարդարման նյութերի հիմնական տեսակներին, նրանց կիրառման ձևերին, առանձնահատկություններին և հնարավորություններին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-005 <<Գծանկարում ձևական կարիքն կալմանն կիրառման մեթոդները>> , ԴՈԿ 5-12-011 <<Կերպարվեստում գեղանկարչության արտահայտչամիջոցները և կոմպոզիցիոն խնդիրները>> և ԴՈԿ 5-12-033 <<Դիզայնն ախազման հիմունքները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի ավանդական և ժամանակակից կոնստրուկտիվ և հարդարման նյութերի հիմնական տեսակները, կիրառման ձևերը, առանձնահատկությունները և հնարավորությունները (քար, փայտ, մետաղ, պլաստմասսա, ապակի, սինթետիկ նյութեր, ներկեր և ծածկույթներ), 2) ներկայացնի նյութերի բազմաբնույթ հատկությունները, դասակարգումը, որակի գնահատումը, 3) ներկայացնի նյութերի արտադրման և կիրառման տեխնոլոգիաները, նրանց ֆիզիկական ու քիմիական առանձնահատկությունները: Ներկայացնի մեթոդական ցուցումներ՝ նյութերի ռացիոնալ ընտրության, համատեղ կիրառման վերաբերյալ, 4) բացատրի նյութերի ծավալագոյացման առանձնահատկությունները, նրանց մշակման հնարավորությունները, ներկայացնել նյութերի տեխնիկական մշակման հաստեցները և գործիքները,

	5) ներկայացնի նյութերի նկատմամբ կիրառվող ֆունկցիոնալ, գեղագիտական, տնտեսական, արտադրական պահանջները: Բացատրի բնական և արհեստական նյութերի բազմազանությունը:
Մոդուլի զնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնվող քանակությամբ համարսահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակից պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ավանդական և ժամանակակից կոնստրուկտիվ ու հարդարման նյութերի հիմնական տեսակները, կիրառման ձևերը, առանձնահատկությունները և հնարավորությունները (քար, փայտ, մետաղ, պլաստմասսա, ապակի, սինթետիկ նյութեր, ներկեր և ծածկույթներ)
Կատարման չափանիշներ	1) օգտագործում է ավանդական կոնստրուկտիվ և հարդարման նյութերի հիմնական տեսակները, 2) ներկայացնում է ավանդական կոնստրուկտիվ և հարդարման նյութերի կիրառման ձևերը, 3) օգտագործում է ժամանակակից կոնստրուկտիվ և հարդարման նյութերի հիմնական տեսակները, 4) ներկայացնում է ժամանակակից կոնստրուկտիվ և հարդարման նյութերի կիրառման ձևերն ու առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է բանավոր հարցերի միջոցով: Ուսանողը հարցերի միջոցով կներկայացնի ավանդական և ժամանակակից կոնստրուկտիվ և հարդարման նյութերի հիմնական տեսակները, առանձնահատկություններն ու հնարավորությունները: Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը պատասխանում է բոլոր հարցերին գրագետ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, դիդակտիկ նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել նյութերի բազմաբնույթ հատկությունները, դասակարգումը, որակի գնահատումը
Կատարման չափանիշներ	1) կիրառում է նյութերի բազմաբնույթ հատկությունները, 2) կատարում է նյութերի դասակարգում, 3) կատարում է նյութերի որակի գնահատում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջադրվեն հարցեր, որոնց

	<p>միջոցով կատարվեն գիտելիքները նյութերի բազմաբնույթ հատկությունների, դասակարգման և որակի գնահատման վերաբերյալ:</p> <p>Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը բոլոր հարցերին տալիս է տրամաբանական և գրագետ պատասխան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, դիդակտիկ նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել նյութերի արտադրման և կիրառման տեխնոլոգիաները, նրանց ֆիզիկական ու քիմիական առանձնահատկությունները: Ներկայացնել մեթոդական ցուցումներ՝ նյութերի ռացիոնալ ընտրության, համատեղ կիրառման վերաբերյալ:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կիրառում է նյութերի արտադրման և կիրառման տեխնոլոգիաները, 2) ներկայացնում է նյութերի ֆիզիկական և քիմիական առանձնահատկությունները, 3) իրականացնում է նյութերի ռացիոնալ ընտրություն և համատեղ կիրառում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի նյութերի արտադրման և կիրառման տեխնոլոգիաների, նրանց ֆիզիկական և քիմիական առանձնահատկությունների վերաբերյալ իմացությունը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը պատասխանում է բոլոր հարցերին գրագետ և տրամաբանորեն:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, դիդակտիկ նյութեր, մեթոդական նյութեր, համակարգիչ, համապատասխան լաբորատորիա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Բացատրել նյութերի ծավալագոյացման առանձնահատկությունները, նրանց մշակման հնարավորությունները, ներկայացնել նյութերի տեխնիկական մշակման հաստոցները և գործիքները:
Կատարման չափանիշներ	1) բացատրում է նյութերի ծավալագոյացման առանձնահատկությունները,

	<p>2) բացատրում է նյութերի մշակման հնարավորությունները,</p> <p>3) ներկայացնում է նյութերի տեխնիկական մշակման հաստոցները և գործիքները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի միջոցով: Այս արդյունքը ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է ներկայացնի նյութերի ծավալաստեղծման առանձնահատկությունները, նրանց մշակման հնարավորությունները, նյութերի տեխնիկական հաստոցներն ու գործիքները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված հարցերին կպատասխանի ընդհանուր առմամբ ճիշտ, կցուցաբերի նյութի էական կարևորություն ներկայացնող մասերի իմացություն:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, դիդակտիկ նյութեր, մեթոդական նյութեր, պլակատներ, համակարգիչ, համապատասխան լաբորատորիա:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ներկայացնել նյութերի նկատմամբ կիրառվող ֆունկցիոնալ, գեղագիտական, տնտեսական, արտադրական պահանջները:</p> <p>Բացատրել բնական և արհեստական նյութերի բազմազանությունը:</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է նյութերի նկատմամբ կիրառվող գեղագիտական պահանջները,</p> <p>2) ներկայացնում է նյութերի նկատմամբ կիրառվող տնտեսական և արտադրական պահանջները,</p> <p>3) ներկայացնում է բնական նյութերի բազմազանությունը,</p> <p>4) ներկայացնում է արհեստական նյութերի բազմազանությունը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի նյութերի ֆունկցիոնալ, գեղագիտական, տնտեսական, արտադրական պահանջները: Կարողանա ներկայացնել բնական և արհեստական նյութերի բազմազանությունը:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե առաջադրված հարցերին տալիս է գրագետ և ամբողջական պատասխան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, դիդակտիկ նյութեր, մեթոդական նյութեր, պլակատներ, համակարգիչ, համապատասխան լաբորատորիա:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p>

ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ>>

Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-021
Մոդուլինպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել քանդակագործության կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ կարողություններ:
Մոդուլիտևոդությունը	18 ժամ տեսականուսուցում՝ 8 ժամ գործնականաշխատանք՝ 10ժամ
Մուտքայինպահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>> , ԴՈԿ 5-12-003 <<Գծանկարի համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները>>, ԴՈԿ 5-12-006 <<Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները>> , <<Գծանկարումծավալայինևտոնայինխնդիրներիլուծմանմեթոդները>>,ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքիկոմպոզիցիայիհիմունքներըդիզայնում>>մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնիքանդակագործությանառանձնահատկությունները, գործիքները, նյութերըևնրանցկիրառմանհնարավորությունները, 2) ներկայացնի քանդակի ծավալային, տարածական ընկալման և վերարտադրման ձևերն ու մեթոդները, չափագրման և մասշտաբային ընկալման կիրառման ձևերը, 3) ներկայացնի քանդակի տեսակները և առանձնահատկությունները, 4) ներկայացնի ծավալային քանդակագործության հիմնական նյութերը, 5) ներկայացնիփոքրպլաստիկծավալների, կամերայինևմոնումենտալքանդակագործությանառանձնահատկությունները
Մոդուլիզնահատմանկարգը	Մոդուլիընդունելիկատարողականըյուրաքանչյուրարդյունքիհամարսահմանվածկատարմանչափանիշներիբավարարմակարգակիապահովումնէ:
Ուսումնառությանարդյունք 1	Ներկայացնել քանդակագործության առանձնահատկությունները, գործիքները, նյութերը և նրանց կիրառման հնարավորությունները
Կատարմանչափանիշներ	1) ներկայացնում է քանդակագործությունը որպես կերպարվեստի հիմնական ճյուղերից մեկը,

	<p>2) ներկայացանում է քանդակագործության առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ էօգտագործում քանդակագործության գործիքները և նրանց կիրառման հնարավորությունները,</p> <p>4) ճիշտ էօգտագործում քանդակագործության նյութերը և նրանց կիրառման հնարավորությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է նկարագրի քանդակագործությունը որպես կերպարավեստի հիմնական ճյուղ և բացատրի նրա առանձնահատկությունները: Իսկ գործնական առաջադրանքների միջոցով կբացահայտվեն ուսանողի կարողությունները քանդակագործության գործիքների և նյութերի ու նրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրված հարցերին տալիս է գրագետ պատասխան, իսկ գործնական աշխատանքը կատարում է անթերի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման համար օգտագործվելու են օրինակներ՝ մեծ վարպետների ստեղծագործություններից, վերատպություններ, ալբոմներ, կինո սրահում դիտումներ, դիդակիկ նյութեր, գործիքներ, քանդակագործության հաստոցներ, նախատեսված արվեստանոցային պայմաններ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել քանդակի ծավալային, տարածական ընկալման և վերարտադրման ձևերն ու մեթոդները, չափազրման և մասշտաբային ընկալման կիրառման ձևերը
Կատարման չափանիշներ	<p>1) կիրառում է քանդակի ծավալային, տարածական ընկալման վերարտադրման ձևերը,</p> <p>2) կիրառում է քանդակի ծավալային, տարածական ընկալման վերարտադրման մեթոդները,</p> <p>3) օգտագործում է չափազրման և մասշտաբային ընկալման կիրառման ձևերը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Բանավոր հարցերի միջոցով ստուգվելու է ծավալային, տարածական ընկալման և վերարտադրման, չափազրման ու մասշտաբային ընկալման ձևերի ու մեթոդների վերաբերյալ ուսանողի ընդհանուր իմացության մակարդակը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, վերատպություններ, համակարգիչ ինտերնետ կապով, սկավառակներ քանդակագործության վերաբերյալ:

	Համապատասխան արվեստանոց, հաստոց, կավ, գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել քանդակի տեսակները և առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) իրականացնում է հարթաքանդակի, բարձրաքանդակի և կլոր քանդակի աշխատանքներ՝ պահանջվող խնդիրների համաձայն, 2) կիրառում է ֆորմայի պատրաստման տեխնոլոգիան և մեթոդները, 3) ներկայացնում է ձուլման տեխնոլոգիան և մեթոդները, 4) պատրաստում է քանդակի կարկասային լուծումների տարբերակներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կկատարվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր՝ քանդակի տեսակների և առանձնահատկությունների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքի ժամանակ կբացահայտվեն ուսանողի՝ հարթաքանդակի, բարձրաքանդակի և կլոր քանդակի կատարման պահանջները ու ֆորմայի պատրաստման և ձուլման տեխնոլոգիայի վերաբերյալ կարողությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են քանդակի նյութեր, կավ, գիպս, բոռնգ, կարկասի համար մետաղական ձողեր, արվեստանոցային պայմաններ, օգտագործվելու են մասնագիտական ձեռնարկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ծավալային քանդակագործության հիմնական նյութերը
Կատարման չափանիշներ	1) օգտագործում է քանդակագործության հիմնական նյութերը փուլային աշխատանքի ընթացքում, 2) իրականացնում է քանդակագործության մեջ տարբեր նյութերի համատեղ կիրառման հնարավորությունները:
Գնահատման միջոցը	Մովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ փուլային աշխատանքում քանդակագործության հիմնական և տարբեր նյութերի համատեղ կիրառման հնարավորությունների վերաբերյալ: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է բոլոր չափանիշներին համապատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսուցողական և քանդակի ձուլման տեխնոլոգիաներին վերաբերող գրականություն, գործիքներ, սարքավորումներ, նյութական բազա: Նպատակահարմար է գործնական պարապմունքներն անցկացնել քանդակի համապատասխան արվեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել փոքր պլաստիկ ծավալների, կամերային և մոնումենտալ քանդակագործության առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1)իրականացնում է փոքր պլաստիկ ծավալներ իրենց առանձնահատկություններով, 2)կիրառում է կամերային քանդակագործության տեսակները, 3) ներկայացնում է մոնումենտալ քանդակագործության ինքնուրույն էսքիզային աշխատանք:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն հարցեր փոքրիկ պլաստիկ ծավալների, կամերային և մոնումենտալ քանդակագործության վերաբերյալ: Իսկ գործանական առաջադրանքների ժամանակ ուսանողը պատրաստելու է մոնումենտալ քանդակագործության ինքնուրույն էսքիզային աշխատանք: Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում հարցերին, իսկ գործնական առաջադրանքը կատարում է անթերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն, գործնական առաջադրանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, վերատպություններ, պահոցներում պահվող լավ օրինակներ, վավերագրական ֆիլմեր՝ մոնումենտալ քանդակագործության վերաբերյալ, արվեստանոցային պայմաններ, քանդակի հաստոց, կավ, պլաստիլին, բոնդ, անհրաժեշտ գործիքներ սարքավորումներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՏՐԱՍՏՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-022
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ քանդակագործական պրակտիկ աշխատանքի նախապատրաստմանն կազմակերպման պահանջներին և ներկայացնել վերաբերյալ, ինչպես նաև ներքին գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ

	տեսականուսուցում՝ 4ժամ գործնականաշխատանք՝ 32ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու ցառաջան հրաժեշտ է տուսումնասիրել ԴՈԿ 5-12-021 <<Քանդակագործության հիմնախնդիրները>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի քանդակագործական պրակտիկաշխատանքի նախապատրաստման պահանջները, 2) ներկայացնի քանդակագործական պրակտիկաշխատանքի նախապատրաստման պահանջները, 3) ներկայացնի քանդակագործական աշխատանքի կատարման մեթոդական ձևերը:
Մոդուլի զնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ըյուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշներ իբավարարմակ արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել քանդակագործական պրակտիկաշխատանքի նախապատրաստման պահանջները
Կատարման չափանիշներ	1) իրականացնում է աշխատանքի նախապատրաստական փուլը՝ տարածքով, մակերեսով, հաստոցներով և գործիքներով: 2) պատրաստում է առաջադրանքի չափերի համապատասխան տախտակ (պլանշետ), 3) մշակում է առաջադրանքի համար պահանջվանյութը՝ կավ կամ պլաստիլին, 4) նախապատրաստում է աշխատանքային հիմնական և օժանդակ գործիքները, 5) ապահովում է աշխատանքային լուսավորությունը, 6) ընտրում է դիտման դիրքը, 7) ապահովում է աշխատանքային պայմանների հարմարավետությունը:
Գնահատման միջոցը	Հարց ու պատասխանի և գործնականի առաջադրանքի միջոցով կգնահատվի ուսանողի կարողությունները քանդակի պրակտիկ աշխատանքի նախապատրաստման պահանջների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում հարցերին, իսկ գործնական առաջադրանքը կատարում է անթերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական պարապմունքների համար անհրաժեշտ է ունենալ՝ արվեստանոց, աշխատանքային մակերես՝ սեղան, առաջադրանքի համար տախտակ (պլանշետ), պահանջված նյութ՝ կավ կամ պլաստիլին, հիմնական և օժանդակ գործիքներ, համապատասխան լուսավորություն, դիտման դիրք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել քանդակագործական պրակտիկ աշխատանքի նախապատրաստման պահանջները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իրականացնում է գծանկարով կատարած էսքիզներ, 2) նախապատրաստում է կատարվող աշխատանքի համար կոնստրուկտիվ էլեմենտներ, 3) նախապատրաստում է կավ ծեծելու փայտե մուրճ կամ հարմար փայտ, 4) նախապատրաստում է կավը կամ պլաստիլինը ծածկելու պոլիէթիլեն, 5) մշակում և նախապատրաստում է որոշակի քանակությամբ կավ կամ պլաստիլին, 6) հաշվարկում է կատարվող աշխատանքի մասշտաբային հարցերը և էլեմենտների համաչափությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական պարապմունքների հիման վրա: Գործնական հանձնարարությամբ ուսանողը կատարելու է քանդակագործական աշխատանքի կազմակերպման նախապատրաստական պահանջները: Արդյունքը յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը գործնական առաջադրանքը կատարում է անսխալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական պարապմունքները կազմակերպելու համար անհրաժեշտ է՝ կավ ծեծելու փայտե մուրճ կամ հարմար փայտ, կավը կամ պլաստիլինը ծածկելու պոլիէթիլեն, մշակած որոշ քանակի կավ կամ պլաստիլին, աշխատանքը կատարել արվեստանոցային պայմաններում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնում է քանդակագործական աշխատանքի կատարման մեթոդական ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իրականացնում է աշխատանքը մանր ծեփվածքներով, 2) իրականացնում է ծավալային լուծումները նախապատրաստված գնդաձև կավե գնդիկների միջոցով, 3) ծեփումը կատարում է ափերի մեջ պատրաստված պարանաձև երկար կավով կամ պլաստիլինով, 4) նյութի ծեփումը կատարվում է քանդակագործական գործիքներով:
Գնահատման միջոցը	Գործնական առաջադրանքի միջոցով գնահատվելու է ուսանողի՝ քանդակագործական աշխատանքի կատարման մեթոդական ձևերի կարողությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում ցույց են տրվում իրական աշխատանքային փորձի օրինակներ՝ մանր ծեփվածքներով, կավե գնդիկների միջոցով, պարանաձև երկար կավով կամ պլաստիլինով: Անհրաժեշտ են արվեստանոցային պայմաններ և քանդակագործական գործիքներ, հաստոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մ Ո Դ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը << Ե Ր Կ Ր Ա Չ Ա Փ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Ի Ե Վ Պ Ա Ր Ջ Ի Ր Ե Ր Ի Ք Ա Ն Դ Ա Կ Ա Յ Ի Ն Կ Ա Տ Ա Ր Մ Ա Ն Ձ Ե Վ Ե Ր Ն ՈՒ Պ Ա Ր Ջ Մ Ե Թ ՈՂ Ն Ե Ր Ը >>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-023
Մոդուլին պատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել պարզ ծավալների ընկալման ու քանդակային կատարման պահանջները, ձևերը և մեթոդները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ ժամ գործնական աշխատանք՝ ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը նուսումնասիրելու ցառաջան հրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>> , ԴՈԿ 5-12-003 <<Գծանկարում համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները>> , ԴՈԿ 5-12-006 <<Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները>> , ԴՈԿ 5-12-022 <<Քանդակագործական աշխատանքի նախապատրաստում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի քանդակային աշխատանքների կատարման մեթոդական ձևերը, 2) ներկայացնի քանդակային աշխատանքների կատարման մասնագիտական պահանջները:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել քանդակային աշխատանքների կատարման մեթոդական ձևերը
Կատարման չափանիշներ	1) իրականացնում է պարզ իրերի ներկրաչափական ձևերի ծավալային քանդակային աշխատանքի գործիքների և նախապատրաստման, 2) կատարում է պարզ էլեմենտներով նատյուրմորտի բարելեֆային աշխատանք՝ ուղղահայց հարթության վրա,

	<p>3) իրականացնում է աշխատանքնատյուրմորտի իրականացման հիմնարկը,</p> <p>4) կատարում է քանդակի ծավալային մշակումները և ներկայացնում է հատուկ գործիքներով:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն քանդակային աշխատանքների առաջադրանքներ, որով կբացահայտվեն նրա կարողությունները կատարման մեթոդական ձևերի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում գործնական աշխատանքի պահանջները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Գործնական պարապմունքների կազմակերպման համար անհրաժեշտ է ունենալ՝ պարզ իրեր, երկրաչափական մարմնի գիպսե քանդակներ, պարզ էլեմենտներ նատյուրմորտի համար: Անհրաժեշտ է նաև արվեստանոցային պայմաններ, կավ և մշակման համար հատուկ գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել քանդակային աշխատանքների կատարման մասնագիտական պահանջները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) օգտագործում է աշխատանքի կատարման համար միատարր և միագույն պլաստիլին, 2) օգտագործում է քանդակագործական հաստոց՝ կլոր քանդակի կատարման դեպքում, 3) ապահովում է աշխատանքի ցուցադրման համար պահանջվող ավարտական տեսք, 4) ապահովում է աշխատանքի կատարման պրոցեսների հաջորդականությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի քանդակի մասնագիտական պահանջները: Գործնական առաջադրանքի միջոցով կգնահատվեն ուսանողի կարողությունները աշխատանքի կատարման պրոցեսների հաջորդականության վերաբերյալ, ինչպես նաև քանդակին պահանջվող ցուցադրման ավարտական տեսք տալը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է արվեստանոց, քանդակի նյութեր՝ կավ կամ պլաստիլին, քանդակի հաստոց, գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>

Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը << Հ Ա Ր Թ Ա Ք Ա Ն Դ Ա Կ Ի Ե Վ Բ Ա Ր Զ Ր Ա Ք Ա Ն Դ Ա Կ Ի Ա Ռ Ա Ն Զ Ն Ա Հ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը, Պ Ա Հ Ա Ն Զ Ն Ե Ր Ը Ե Վ Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը >>	
Մողուլիդասիչը	ԴՈԿ 5-12-024
Մողուլինպատակը	Այս մողուլի նպատակն է ուսանողին հարթաքանդակի և բարձրաքանդակի մասնագիտական կատարման պահանջների, խնդիրների ու առանձնահատկությունների վերաբերյալ տալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մողուլիտևողությունը	36 ժամ տեսականուսուցում՝ ժամ գործնականաշխատանք՝ ժամ
Մուտքայինպահանջները	Այս մողուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-023<<Երկրաչափական մարմինների եվ պարզ իրերի քանդակային կատարման ձևերն ու պարզ մեթոդները>>մողուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մողուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի հարթաքանդակի և բարձրաքանդակի առանձնահատկությունները պրակտիկաշխատանքում, 2) ներկայացնի հարթաքանդակի և բարձրաքանդակի կատարման մասնագիտական պահանջները, 3) ներկայացնի հարթաքանդակների և բարձրաքանդակների ֆունկցիոնալ կիրառման առանձնահատկությունները:
Մողուլի զնահատման կարգը	Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնելի հարթաքանդակի և բարձրաքանդակի առանձնահատկությունները պրակտիկաշխատանքում
Կատարման չափանիշներ	1) կիրառում է քանդակագործության երկու տարատեսակի հիմնական տարբերությունները, 2) կիրառում է հարթաքանդակի կատարման հնարավորությունները պրակտիկաշխատանքում, 3) օգտագործում է բարձրաքանդակի կատարման հնարավորությունները պրակտիկաշխատանքում, 4) մեկնաբանում է ծավալային ոճային հարցադրումները կատարված աշխատանքներում:
Գնահատման միջոցը	Գործնական առաջադրանքի միջոցով ուսանողին տրվելու են առաջադրանքներ քանդակագործության երկու տարատեսակի՝ հարթաքանդակի և բարձրաքանդակի առանձնահատկությունների, ինչպես նաև կատարված աշխատանքներում ծավալային և ոճային հարցադրումների վերաբերյալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ արվեստանոցային

	պայմաններ, քանդակի հաստոց, գործիքներ, վերատպություններ մեծ վարպետների գործերից, պահոցների լավ օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հարթաքանդակի և բարձրաքանդակի կատարման մասնագիտական պահանջները
Կատարման չափանիշներ	1) նախապատրաստում է պրակտիկ աշխատանքի կատարման համար նյութեր և գործիքներ, 2) կատարում է պարզ իրերով կամ երկրաչափական մարմիններով կառուցված հարթաքանդակ, 3) կատարում է պարզ բուսական հարթաքանդակի կրկնօրինակում բնական չափերով, 4) իրականացնում է բարձրաքանդակի ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կիրառելով տրված էլեմենտները:
Գնահատման միջոցը	Մովորողների գիտելիքները ստուգելու նպատակով ուսանողին կտրվեն առաջադրանքներ հարթաքանդակի և բարձրաքանդակի մասնագիտական պահանջների վերաբերյալ: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը բավարարում է մասնագիտական պահանջները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են պարզ իրեր, երկրաչափական գիպսե մարմիններ, պարզ բուսական գիպսե հարթաքանդակ, արվեստանոցային պայմաններ, հաստոց, քանդակի գործիքներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հարթաքանդակների և բարձրաքանդակների ֆունկցիոնալ կիրառման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հարթաքանդակների և բարձրաքանդակների կիրառման տարբերակները հայկական ճարտարապետական կառույցերում, 2) ներկայացնում է նրանց կատարման տեխնիկայի մտածելակերպի և խնդիրների դրվածքը տարբեր ժամանակներում և երկրներում, 3) կատարում է պրակտիկ աշխատանք նյութով ներկայացնելով ձևաստեղծման հորինվածքի հիմնախնդիրները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի հայկական ճարտարապետական կառույցներում հարթաքանդակների և բարձրաքանդակների կիրառման տարբերակները, կատարման տեխնիկան և խնդիրները տարբեր ժամանակաշրջաններում

	և երկրներում: Գործնական առաջադրանքի միջոցով գնահատվելու են ուսանողի կարողությունները ձևաստեղծման հորինվածքի հիմնախնդիրների վերաբերյալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ հայ ճարտարապետության և քանդակագործության վերաբերյալ գրքեր, սկավառակներ, հայկական զարդարվեստին վերաբերող գրականություն, արվեստանոցային պայմաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԿԼՈՐ ՔԱՆԴԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-025
Մոդուլին պատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ կլոր քանդակի կատարման հիմնախնդիրների պահանջների և տարատեսակների մասին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ ժամ գործնական աշխատանք՝ ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-007 <<Գծանկարում ծավալային և տոնային խնդիրների լուծման մեթոդները>>, ԴՈԿ 5-12-14 <<Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>>, ԴՈԿ 5-12-024 <<Հարթաքանդակի և բարձրաքանդակի առանձնահատկությունները, պահանջները և խնդիրները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի կլոր քանդակի ծավալային և տարածական ընկալման ձևերը, 2) ներկայացնի կլոր քանդակի ֆորմայի պատրաստման և ձուլման տեխնոլոգիական ձևերն ու մեթոդները, 3) ներկայացնի կլոր քանդակի տարատեսակները և նրանց առանձնահատկությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ըյուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կլոր քանդակի ծավալային և տարածական ընկալման ձևերը

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իրականացնում է առարկայի ընկալման ծավալային խնդիրներ պրակտիկ աշխատանքով, 2) կիրառում է հեռանկարային հարցերը նպահանջները, 3) իրականացնում է մասշտաբային խնդիրները ծավալային լուծումներում, 4) կատարում է պարզ ծավալատարածական կոմպոզիցիոն աշխատանքեր կրաչափական մարմինների ոգտագործմամբ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ կլոր քանդակի ընկալման ձևերի, ծավալային խնդիրների, հեռանկարային պահանջների, մասշտաբային լուծումների և երկրաչափական մարմինների ոգտագործմամբ պարզ ծավալատարածական կոմպոզիցիոն աշխատանքի վերաբերյալ:</p> <p>Արդյունքը կհամարվի ձեռք բերված նյութի էական կարևորությունը ներկայացնող մասերի անթերի կատարման ժամանակ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ է արվեստանոցային պայմաններ, մասնագիտական ձեռնարկեր՝ հեռանկարային և մասշտաբային հարվերը լուծելու համար, նյութեր և գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կլոր քանդակի ֆորմայի պատրաստման և ձուլման տեխնոլոգիական ձևերն ու մեթոդները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստում է գործընթացի համար անհրաժեշտ բոլոր նյութերը և գործիքները, 2) կիրառում է գիպսի շաղախման տեխնոլոգիան, 3) ներկայացնում է կլոր քանդակի ձուլման նախապատրաստական գործընթացը, 4) իրականացնում է քանդակի ձուլման, գիպսի լցման և չորացման գործընթացը, 5) ոգտագործում է մի քանի կտորով պատրաստվող ֆորմայի միացնող և ֆիքսող ամրակների պատրաստման ձևերը, 6) իրականացնում է պատրաստի ֆորմայով քանդակի նոր օրինակի ձուլման և չորացման գործընթացը:
Գնահատման միջոցը	<p>Գործնական առաջադրանքի միջոցով գնահատվելու են ուսանողի գիտելիքները և կարողությունները կլոր քանդակի ֆորմայի պատրաստման և ձուլման տեխնոլոգիական մեթոդների, չորացման գործընթացի, պատրաստի ֆորմայով քանդակի նոր օրինակի ձուլման և չորացման գործընթացի վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է ոգտագործել գործընթացի համար անհրաժեշտ բոլոր

	նյութերը և գործիքները, գիպսի ձուլման տեխնոլոգիայի վերաբերյալ գրականություն, ֆորմայի միացնող և ֆիքսող ամրակներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքները անցկացնել արվեստանոցում, որը կհամապատասխանի ձուլման պայմաններին:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել կլոր քանդակի տարատեսակները և նրանց առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է փոքր պլաստիկ ձևերը քանդակագործության մեջ, 2) ներկայացնում է կամերային քանդակագործության առանձնահատկությունները և հնարավորությունները, 3) ներկայացնում է մոնումենտալ քանդակագործությունը, 4) կիրառում մոնումենտալ քանդակագործության տարբերակները քաղաքային միջավայրում, 5) օգտագործում է կլոր քանդակի կատարման համար պահանջվող նյութերը իր տեխնոլոգիական հնարավորություններով, 6) կիրառում է քանդակում նյութերի համատեղ օգտագործման և մասշտաբային խնդիրները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարցերի շրջանակը պետք է բացահայտի ուսանողի գիտելիքները քանդակի տարատեսակների և նրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվելու են ուսանողի՝ փոքր պլաստիկ քանդակելու, կամերային քանդակի և մոնումենտալ քանդակի փոքր տարբերակի առաջադրանքների կատարմամբ: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մոնումենտալ քանդակագործության կիրառման տարբերակները քաղաքային միջավայրում թեմային վերաբերվող նյութեր, ալբոմներ, վավերագրական ֆիլմեր, արվեստանոցային պայմաններ, հաստոց, նյութեր և գործիքներ, ֆիգուրայով աշխատանքի համար (նատուրա) բնորդ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ՏԻՊՈԳՐԱՖԻԿԱ ԵՎ ՇՐԻՖՏ>>	
Սողովի դասիչը	ԴՈԿ 5-12-026

Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել շրիֆտի ստեղծման պատմության, կառուցվածքի, կիրառման, ոճերի, տառատեսակների, շրիֆտների մշակման հիմնական կանոնների վերաբերյալ կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-013 <<Երկրաչափական գծագրության հիմնախնդիրները>>, ԴՈԿ 5-12-014 <<Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>> ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմունքները դիզայնում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի շրիֆտի ստեղծման պատմությունը, կառուցվածքը և կիրառման օրինաչափությունները, 2) ներկայացնի շրիֆտի ոճերը, տառատեսակները և նրանց մշակման հիմնական կանոնները, 3) բացատրի տիպոգրաֆիկայի՝ տեքստի գրաֆիկական ձևավորման հիմունքները և առանձնահատկությունները, 4) ներկայացնի տառատեսակի և տեքստի գրաֆիկական ձևավորման տարբերակ՝ ա.վիզուալ խաբկանքի ստեղծման միջոցով, բ. հորինվածքի հիմնական գործոնների կիրառմամբ
Մոդուլի զնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված կարողությունների համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել շրիֆտի ստեղծման պատմությունը, կառուցվածքը և կիրառման օրինաչափությունները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է շրիֆտի ստեղծման պատմությունը, 2) ներկայացնում է շրիֆտի կառուցվածքը, 3) ներկայացնում է շրիֆտի կիրառման օրինաչափությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով, նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ՝ շրիֆտի ստեղծման պատմության և անհրաժեշտության վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքների միջոցով բացահայտել շրիֆտի կառուցվածքը և կիրառման շրջանակները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե հարցերին տրվում է ճիշտ պատասխաններ, գործնական առաջադրանքները կատարվում են անթերի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ շրիֆտի պատմական զարգացման վերաբերյալ մասնագիտական ձեռնարկ, զծագրման համար թեք սեղաններ, շարժական կանոն պլանշետ, թուղթ՝ վատման և զծագրական գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շրիֆտի ոճերը, տառատեսակները և նրանց մշակման հիմնական կանոնները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է շրիֆտի ոճերը, 2) կատարում է տառատեսակի մշակում, 3) ներկայացնում և կիրառում է տառատեսակների գրաֆիկական կատարման պահանջվող կանոնները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր՝ շրիֆտի ոճերի, տառատեսակների և մշակման վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված հարցերին տալիս է զրազետ պատասխան և գործնական առաջադրանքները կատարում է անթերի, պահպանելով գրաֆիկայի կատարման պահանջվող կանոնները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական առաջադրանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, մեթոդական նյութեր, համակարգիչ, պրոեկցիոն սարք, զծագրության պայմաններ ապահովող լսարան, զծագրական պիտույքներ, տուշ, ակրիլ ռապիտային գրիչներ, վատման:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Բացատրել տիպոգրաֆիկայի՝ տեքստի գրաֆիկական ձևավորման հիմունքները և առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) բացատրում է տիպոգրաֆիկայի՝ տեքստի գրաֆիկական ձևավորման հիմունքները, հիմք ընդունելով հայկական այբուբենի տառատեսակները (մեծատառ և փոքրատառ), 2) բացատրում է հայերեն տեքստի գրաֆիկական և առարկայական ձևավորումը, 3) ներկայացնում է երկու տարբեր այբուբենների նմանատիպ տառատեսակների բազմակողմանի գրաֆիկական ձևավորումը (եզրագծային, նեգատիվ, գունավոր և ռելիեֆային տարբերակներով), 4) ներկայացնում է երկու տարբեր այբուբենների նմանատիպ տառատեսակների առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով բացահայտվելու են ուսանողի գիտելիքները տիպոգրաֆիայի վերաբերյալ: Սովորողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ հայկական այբուբենի տառատեսակների, գրաֆիկական ձևավորման հիմունքների, բազմակողմանի գրաֆիկական ձևավորման վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ձեռնարկ, մեթոդական նյութեր, համակարգիչ, հայկական մանրանկարչության գլխատառերի վերաբերյալ գրականություն, գծագրական գործիքներ և նյութեր, գծագրական պայմաններ ապահովող լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել տառատեսակի և տեքստի գրաֆիկական ձևավորման տարբերակ՝ ա.վիզուալ խաբկանքի ստեղծման միջոցով, ք. Հորինվածքի հիմնական գործոնների կիրառմամբ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է տեսողական վիզուալ խաբկանքի կիրառման հնարավորությունները՝ տառատեսակների ձևավորման ժամանակ, 2) ներկայացնում է հորինվածքի հիմնական գործոնների կարևորությունը և առանձնահատկությունները, տառատեսակների և տեքստային գրաֆիկական ձևավորումների ստեղծման դեպքում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պատք է բացահայտի գրաֆիկական ձևավորման տարբերակների վերաբերյալ գիտելիքները: Գործնական առաջադրանքների միջոցով բացահայտվելու են ուսանողի՝ տեսողական խաբկանքի կիրառման, հորինվածքի կարևորությունը տառատեսակների և տեքստային գրաֆիկական ձևավորումների ստեղծման վերաբերյալ կարողությունները: Արդյունքը համարվում է ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն, գործնական առաջադրանքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական նյութեր, համաշխարհային գրաֆիկական ձևավորումների լավագույն օրինակների ցուցադրում մեծ էկրանով, գծագրական պիտույքներ և պայմաններ ապահովող լսարան:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-027
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել համաշխարհային արվեստի կարևորագույն դարաշրջաններին, արվեստագետներին և նրանց ստեղծագործություններին: Ներկայացնել արվեստի հիմնական տեսակները, ոճերը, ժանրերը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-012 <<Գեղագիտություն և արվեստի ճանաչողություն>> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի համաշխարհային արվեստի կարևորագույն դարաշրջանները, արվեստագետներին և նրանց ստեղծագործությունները, 2) ներկայացնի արվեստի հիմնական տեսակները, ոճերը, ժանրերը, ինչպես նաև կատարողական տեխնիկաները և նյութերի կիրառումը, 3) ծանոթացնի, վերլուծի և արժեքավորի արվեստի ցանկացած ստեղծագործություն:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել համաշխարհային արվեստի կարևորագույն դարաշրջանները, արվեստագետներին և նրանց ստեղծագործությունները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է համաշխարհային արվեստի կարևորագույն դարաշրջանները, 2) ներկայացնում է համաշխարհային արվեստում ճանաչում ստացած արվեստագետներին, 3) ներկայացնում է համաշխարհային արվեստի կարևորագույն տեսակների ստեղծագործությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջադրվի երեք հարց, որոնց

	միջոցով կստուգվեն նրա գիտելիքները համաշխարհային արվեստի կարևորագույն դարաշրջանների, արվեստագետների և նրանց ստեղծագործությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար, եթե հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և սեմինար պարապմունքներ: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, արվեստի պատմության վերաբերյալ հանրագիտարաններ, վերատպություններ, կինոսրահ՝ վավերագրական և արվեստի մասին ֆիլմերի ցուցադրություն, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել արվեստի հիմնական տեսակները, ոճերը, ժանրերը, ինչպես նաև կատարողական տեխնիկաները և նյութերի կիրառումը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արվեստի հիմնական տեսակները՝ կերպարվեստ, ճարտարապետություն, դիզայն, դեկորատիվ-կիրառական, թատրոն, երաժշտություն, 2) ներկայացնում է արվեստի հիմնական ոճերը՝ ըստ դարաշրջանների, 3) ներկայացնում է արվեստի հիմնական ժանրերը՝ արվեստի տարբեր տեսակներում, 4) ներկայացնում է արվեստի տարբեր ճյուղերում կատարողական տեխնիկաները, 5) ներկայացնում է արվեստի տարբեր ճյուղերում նյութերի կիրառման հնարավորությունները և սկզբունքները:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն հարցեր՝ արվեստի տեսակների, արվեստի ոճերի, ժանրերի, ինչպես նաև արվեստի տարբեր ճյուղերում նյութերի կիրառման հնարավորությունների և սկզբունքների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն: Անհրաժեշտ է ունենալ արվեստի ժանրերին, ոճերին վերաբերվող մեծ արվեստագետների ստեղծագործությունների վերատպություններ, ալբոմներ, ֆիլմեր, սլայդներ մեծ էկրանով ցուցադրելու պայմաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ծանոթացնել, վերլուծել և արժեքավորել արվեստի ցանկացած ստեղծագործություն
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արվեստի ցանկացած ստեղծագործություն,

	2) ներկայացնում է արվեստի հեղինակային ստեղծագործությունների վերլուծման և արժեքավորման սկզբունքները:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր, անհրաժեշտ գրականություն կամ վերատպություններ: Օգտվելով տրված նյութից, սովորողը պիտի կարողանա ներկայացնել, վերլուծել և արժեքավորել արվեստի ցանկացած ստեղծագործություն: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե հարցերին կտրվեն անսխալ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք (ռեֆերատ): Անհրաժեշտ է օգտագործել համաշխարհային արվեստի գլոխգործոցների (շեդեվր) վերատպություններ, բացիկներ, ֆիլմեր, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՐԱՇՐՁԱՆՆԵՐ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-028
Մոդուլինպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել համաշխարհային արվեստի հիմնական դարաշրջանների, գեղարվեստական ոճերի, պատմական զարգացման կարոր փուլերի հետ:
Մոդուլիտևոդությունը	36 ժամ Տեսականուսուցում՝ 36 ժամ
Մուտքայինպահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-012<<Գեղագիտություն և արվեստի ճանաչողություն>>, ԴՈԿ 5-12-027 <<Արվեստի պատմություն և քաղաքակրթություն>>մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է . 1) ներկայացնի համաշխարհային արվեստի պատմության հիմնական դարաշրջանները, 2) ներկայացնի համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետների, ընդգծելով նրանց դերը արվեստի զարգացման գործում 3) ներկայացնի ռեալիստական արվեստի դերը, նշանակությունը և զարգացման առանձնահատկությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել համաշխարհային արվեստի պատմության հիմնական դարաշրջանները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է նախնադարյան դարաշրջանի արվեստը, 2) ներկայացնում է անտիկաշխարհի արվեստը՝ կերպարվեստի նկարագրական տեսությունը, 3) ներկայացնում է միջնադարի արվեստը՝ իր բազմազանությամբ, 4) ներկայացնում է վերածննդի արվեստը՝ տարբեր կրթություն (կերպարվեստ, ճարտարապետություն, թատրոն, երաժշտություն), 5) ներկայացնում է բարոկոյի, ռոկոկոյի արվեստի զարգացումը և վրոպական երկրներում, 6) ներկայացնում է կլասիցիզմի դարաշրջանը արվեստում, նրա պահանջները, 7) ներկայացնում է ժամանակակից արվեստի գեղագիտական սկզբունքները և ուղղությունները, 8) ներկայացնում է սկզբունքների ամբողջականությունը արվեստի տարբեր տեսակներում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր, որոնք միտված կլինեն նրա իմացությունների ստուգմանը համաշխարհային արվեստի պատմության հիմնական դարաշրջանների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար, եթե հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ <<Համաշխարհային արվեստի պատմություն>> հանրագիտարանի հատորները՝ ըստ պատմական դարաշրջանների, գրադարանից օգտվելու մշակույթ՝ ռեֆերատներ, էսեներ գրելու ժամական, կիոսրահ, համակարգիչ՝ ինտերնետ կայքով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետների, ընդգծելով նրանց դերը արվեստի զարգացման գործում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մեծ արվեստագետների, որպես հիմնադիրներ արվեստի նոր ուղղությունների, 2) ներկայացնում է Միլոնի և Ֆիդիասի ստեղծագործական մեծ դերը հունական արվեստում, 3) ներկայացնում է իտալական բարձր վերածննդի արվեստի երեք տիտանների՝ Լեոնարդոյին, Միքելանջելոյին և Ռաֆայելին,

	<p>4) ներկայացնում է ֆրանսիական իմպրեսիոնիզմի և պոստիմպրեսիոնիզմի ներկայացուցիչների արվեստը՝ Մանե, Մոնե, Դեգա, Վան Գոգ, Սեզան, Գոգեն, Ռոդեն,</p> <p>5) ներկայացնում է Հոլանդիայի մեծ վարպետ Ռեմբրանդի մեծ արվեստը, որպես պորտրետային ժանրի խոշոր ներկայացուցիչ,</p> <p>6) ներկայացնում է Պիկասոյի արվեստը,</p> <p>7) ներկայացնում է Դալիի արվեստը որպես սյուրռեալիստական արվեստի վառ ներկայացուցիչ,</p> <p>8) ներկայացնում է 20-րդ դարի մոդեռն արվեստի խոշոր ներկայացուցիչներին:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր՝ համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետների մասին, ընդգծելով նրանց դերը արվեստի զարգացման գործում:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված հարցերին բանավոր կամ ռեֆերատների, էսենների միջոցով տալիս է տրամաբանական և գրագետ պատասխան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն: Անհրաժեշտ է ունենալ վերատպություններ, արվեստի ստեղծագործությունների մեծ հավաքածու, գրադարանից օգտվելու մշակույթ, կինոսրահ՝ ֆիլմեր դիտելու համար, համակարգիչ՝ ինտերնետ կապով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ռեալիստական արվեստի դերը, նշանակությունը և զարգացման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ռեալիստական արվեստի ակունքները նախնադարի արվեստում,</p> <p>2) ներկայացնում է ռեալիստական արվեստի պահանջները և խնդիրները,</p> <p>3) ներկայացնում է ռեալիստական արվեստի խոշոր ներկայացուցիչներին համաշխարհային արվեստի զարգացման տարբեր փուլերում,</p> <p>4) ներկայացնում է ռեալիստական արվեստի կոմպոզիցիոն պահանջները և նրա զարգացումը,</p> <p>5) ներկայացնում է ռեալիստական արվեստի դերը կերպարվեստում,</p> <p>6) ներկայացնում է ռեալիստական արվեստի ազգային առանձնահատկությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարցերի, գործնական պարապմունքների (ռեֆերատների) միջոցով:</p> <p>Հարցերի շրջանակը պետք է բացահայտի ուսանողի կարողությունները ռեալիստական արվեստի ակունքների,</p>

	<p>պահանջների ու խնդիրների, ռեալիստական արվեստի խոշոր ներկայացուցիչների, կոմպոզիցիոն պահանջների և նրա զարգացման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, ձևակերպումները կատարում է գրագետ, իսկ ռեֆերատները անթերի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ռեալիզմին վերաբերվող վերատպություններ, ալբոմներ, կինոդիտումներ, գրադարանից օգտվել, համակարգիչ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ
ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԸՍՏ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-029
Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի գիտելիքներ ըստ տարածարջանների համաշխարհային արվեստի պատմության և զարգացման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 32 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-012 <<Գեղագիտություն և արվեստի ճանաչողություն>>, ԴՈԿ 5-12-028<<Համաշխարհային արվեստի զարգացման կարևորագույն դարաշրջաններ>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի համաշխարհային զարգացման հին մշակույթի փուլերը և հիմնական օջախները, 2) ներկայացնի վերածննդի արվեստը Եվրոպայում իր զարգացման փուլերով, 3) ներկայացնի մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության անբաժանելի կապը ճարտարապետության հետ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդյունքի պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել համաշխարհային զարգացման հին մշակույթի փուլերը և հիմնական օջախները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է քարե դարը՝ պալեոլիտ, մեզոլիտ և նեոլիտ,

	<p>2) ներկայացնում է հինմշակույթիհիմնականկենտրոնները,</p> <p>3) ներկայացնում է ՀինԵգիպտոսիարվեստը,</p> <p>4) ներկայացնումէՀինՄիջագետքիարվեստը,</p> <p>5) ներկայացնումէանտիկաշխարհիարվեստը (Էգեյան, ԿրետեՄիքենյան),</p> <p>6) ներկայացնումէհինհունականարվեստը,</p> <p>7) ներկայացնումէհինՀռոմիարվեստըևնրակապըէտոռուսկյանհունականարվեստիհետ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է բանավոր հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին տրվող հարցերը պետք է բացահայտեն նրա ձեռքբերումները համաշխարհային հին մշակույթի, ըստ փուլերի զարգացման, նրա հիմնական կենտրոններ վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, վերատպություն, <<Հին աշխարհի արվեստի պատմություն>> հանրագիտարանի առաջին հատորը, կինոսրահ՝ դիտելու գիտահանրամատչելի ֆիլմեր՝ Եգիպտոսի, Անտիկ աշխարհի վերաբերյալ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ</p>
Ուսումնառությանարդյունք 2	<p>Ներկայացնել վերածննդի արվեստը Եվրոպայում իր զարգացման փուլերով</p>
Կատարմանչափանիշներ	<p>1) ներկայացնում է վերածննդի արվեստի ընդհանուր բնութագիրը և զարգացման փուլերը,</p> <p>2) ներկայացնում է իտալական վերածննդի սկզբունքները,</p> <p>3) ներկայացնում է իտալական վերածննդի՝ Տրեչենտոյի արվեստը,</p> <p>4) ներկայացնում է իտալական վերածննդի արվեստը Ֆլորենցիայի, Պադուայի, Վենետիկի դպրոցներ</p> <p>5) ներկայացնում է բարձր վերածննդի արվեստը Ֆլորենցիայում և Վենետիկում,</p> <p>6) ներկայացնում է իտալական վերածննդի վերջին փուլը՝ ուշ վերածննդում,</p> <p>7) ներկայացնում է վերածննդի արվեստը եվրոպական երկրներում՝ Ֆրանսիա, Գերմանիա:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով, իսկ գործնական առաջադրանքները ռեֆերատների</p>

	<p>և էսսենների միջոցով: Պետք է բացահայտվեն ուսանողի գիտելիքներն ու կարողությունները Եվրոպայում արվեստի վերածննդի ժամանակաշրջանի զարգացման փուլերի, իտալական վերածննդի նշանավոր դեմքերի, Ֆրանսիայի, Գերմանիայի մեծ վարպետների ստեղծագործությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Դասախոսություն և սեմինար պարապմունքներ: Ուսուցման համար անհարժեշտ է ունենալ վերածննդին նվիրված ալբոմներ, վերատպություններ, կինոսրահ՝ ֆիլմեր դիտելու համար, սկավառակների հավաքածու՝ աշխարհի թանգարանների վերաբերյալ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության անբաժանելի կապը ճարտարապետության հետ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մոնումենտալ արվեստի հիմնախնդիրները ճարտարապետական կառույցում, 2) ներկայացնում է հունահռոմեական արվեստը մոնումենտալ արվեստում և ճարտարապետությունում, 3) ներկայացնում է իտալական մոնումենտալ արվեստը, 4) ներկայացնում է ճարտարապետության զարգացման պատմությունը և նրա ֆունկցիոնալ կապը մոնումենտալ արվեստի հետ: 5) ներկայացնում է ծավալային և հարթային ընկալման հնարավորությունները ճարտարապետական կառույցներում, 6) ներկայացնում է ճանաչված վարպետների մոնումենտալ արվեստի ստեղծագործությունները, 7) կատարում է վերլուծական աշխատանք արվեստի պատմության հիմնախնդիրների մասին:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի, իսկ գործնականը՝ ռեֆերատների: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է բացահայտի նրա գիտելիքներն ու կարողությունները մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության անբաժանելի կապը ճարտարապետության հետ: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա արվեստի հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծական աշխատանք կատարել:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Դասախոսություն և սեմինար պարապմունք: Անհրաժեշտ է ունենալ մոնումենտալ արվեստի և ճարտարապետության գլուխգործոցների վերաբերյալ գրականություն ալբոմներ, վերատպություններ, ֆիլմադարան, ինտերնետ կայքով ապահովված համակարգիչ:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ << ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ >>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-030
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ հայ արվեստի պատմական փուլերի, նրա առանձին տեսակների զարգացման և օրինաչափությունների մասին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական առաջադրանք՝ 6 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-029 << Համաշխարհային արվեստի պատմությունը և զարգացումը ըստ աշխարհագրական տարածաշրջանների >> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի հայ կերպարվեստը և նրա ճանաչված վարպետներին, 2) ներկայացնի հայ ճարտարապետության օրինաչափությունները և զարգացման առանձնահատկությունները ըստ դարաշրջանների, 3) ներկայացնի հայկական դեկորատիվ կիրառական արվեստը, 4) ներկայացնի դիզայնի նպատակը և խնդիրները, նրա դերը մարդու կյանքում:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդյունքի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հայկերպարվեստը նրա ճանաչված վարպետներին
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հայկերպարվեստի առանձնահատկությունները, 2) ներկայացնում է հայմիջնադարյան գեղանկարչությունը, 3) ներկայացնում է հայմանրանկարչության ճանաչված դպրոցները և վարպետներին, 4) ներկայացնում է դիմանկարի ժանրը հայկերպարվեստում՝ Հովնաթանյաններ, 5) ներկայացնում է 18-19-րդ դարերի հայ գեղանկարչությունը՝ իր զարգացման առանձնահատկություններով

	<p>6) ներկայացնում է Այվագովսկու, Մուրենյանցի, Բաշինջադյանի արվեստը,</p> <p>7) ներկայացնում է հայ արվեստում գրաֆիկական արվեստի առանձնահատկությունները՝ Էդգար Շահին,</p> <p>8) ներկայացնում է հայքանդակագործությունը նրա զարգացումը՝ Հակոբ Գյուրջյան, Արա Մարգարյան, Արա Հարությունյան, Երվանդ Քոչար:</p> <p>9) ներկայացնում է 20-րդ դարի հայկերպարվեստը նրան ներկայացուցիչներին,</p> <p>10) ներկայացնում է Մարտիրոս Սարյանի, Մինաս Ավետիսյանի արվեստը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջադրվեն հարցեր, որոնք միտված կլինեն նրա իմացությունների ստուգմանը՝ հայ կերպարվեստի առանձնահատկությունների, հայ միջնադարի գեղանկարչության, մանրանկարչության դպրոցների և ծաղկողների, 18-19-րդ դարերի հայ գեղանկարչության զարգացման, հայ արվեստում գրաֆիկայի առանձնահատկությունների, քանդակագործության, ինչպես նաև 20-րդ դարի և ժամանակակից արվեստագետների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը առաջադրված հարցերին կպատասխանի ընդհանուր առմամբ ճիշտ, կցուցաբերի նյութի էական կարևորություն ներկայացնող մասերի իմացություն:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Դասախոսություն և առաջադրանք ռեֆերատ: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, մանրանկարիչներից մինչև ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների պլումների վերատպություններ, կինոսրահ, համակարգիչ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել հայ ճարտարապետության օրինակալիությունները և զարգացման առանձնահատկությունները ըստ դարաշրջանների</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է հայ ճարտարապետության միջնադարյան կոթողները և ճարտարապետներին,</p> <p>2) ներկայացնում է հայ ճարտարապետության ազգային և ոճային առանձնահատկությունները,</p> <p>3) ներկայացնում է ճարտարապետական կառույցներում դեկորատիվ զարդամոտիվային և քանդակային լուծումները,</p> <p>4) ներկայացնում է շինարարական նյութերի ինքնատիպ տեխնոլոգիաների կիրառումը,</p> <p>5) ներկայացնում է հայ ճարտարապետության ծավալագոյացման և մասշտաբային խնդիրները,</p>

	6) ներկայացնում է ժամանակակից ճարտարապետությունը և նրա հիմնական խնդիրները:
Գնահատման միջոցը	Մովորողին կտրվեն հարցեր` հայ ճարտարապետության ազգային և ոճային առանձնահատկությունների, դեկորատիվ զարդամոտիվային և քանդակի լուծումների, նյութերի ինքնատիպ տեխնոլոգիաների կիրառման, ծավալային և մասշտաբային խնդիրների, ինչպես նաև ժամանակակից ճարտարապետության և նրա հիմնախնդիրների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը առաջադրված հարցերին կպատասխանի ընդհանուր առմամբ ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և սեմինար պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ <<Հայկական ճարտարապետություն>> Մ.Հասրաթյան, <<Հայկական դեկորատիվ զարդարվեստ>> ժամանակակից ճարտարապետության վերաբերյալ մասնագիտական գրականություն, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 8 ժամ գործնական աշխատանք` 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հայկական դեկորատիվ կիրառական արվեստը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հայկական կիրառական արվեստը իր ինքնատիպ ուղղություններով, 2) ներկայացնում է մետաղագործության զարգացումը և նրա դերը կիրառական արվեստում, 3) ներկայացնում է խեցեգործությունը որպես կիրառական արվեստի կարևոր ուղղություններից մեկը, 4) ներկայացնում է հայ դարբնագործությունը: 5) ներկայացնում է զարդարվեստը և նրա պատմական զարգացումը, 6) ներկայացնում է գորգագործության ազգային առանձնահատկությունները, 7) ներկայացնում է ժամանակակից կիրառական արվեստը և զարգացման օրինաչափությունները
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջադրվեն հարցեր, որոնք միտված կլինեն նրա իմացությունների ստուգմանը` հայկական դեկորատիվ կիրառական արվեստի և նրա ուղղությունների վերաբերյալ, մետաղագործության, խեցեգործության, դարբնագործության, գորգագործության և նրանց դերի ու պատմական զարգացման մասին: Հարցեր կտրվեն ժամանակակից կիրառական արվեստի և նրա զարգացման օրինաչափությունների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը առաջադրված հարցերին ընդհանուր առմամբ կպատասխանի

	ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական առաջադրանքներ (ռեֆերատ): Անհրաժեշտ է օգտագործել մասնագիտական գրականություն՝ կիրառական արվեստի, գորգագործության վերաբերյալ: Այցելություն Երևանի ժողովրդական արվեստի թանգարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել դիզայնի նպատակը և խնդիրները, նրա դերը մարդու կյանքում:
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է դիզայնի նպատակը , 2) ներկայացնում է դիզայնի հիմնախնդիրները՝ նախագծային գործունեության ոլորտում, 3) ներկայացնում է դիզայնի հզոր դերը մարդու ապրելակերպի բարելավման գործում, 4) ներկայացնում է նորագույն տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը դիզայնում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր՝ դիզայնի նպատակի, հիմնախնդիրների, մարդու ապրելակերպի բարելավման գործում նրա հզոր դերի, նորագույն տեխնոլոգիաների կիրառման և կարևորության վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը առաջադրած հարցերին կպատասխանի ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում են մասնագիտական գրականություն, ցուցադրման համար նյութեր, համակարգիչ, ինտերնետ կայքով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԴԻԶԱՅՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-031
Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի դիզայնի պատմության և ժամանակագրության, զարգացման հիմնական փուլերի, ոլորտների, ոճերի, մեթոդների և ուղղությունների վերաբերյալ գիտելիքներ ու դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ

	տեսական ուսուցում՝ 32 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-012 <<Գեղագիտություն և արվեստի ճանաչողություն>>, ԴՈԿ 5-12-30 <<Հայարվեստի պատմությունը և նրա զարգացման օրինաչափությունները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի դիզայնի պատմության և ժամանակագրության զարգացման հիմնական փուլերը 2) ներկայացնի դիզայնի հիմնական ոլորտները, ոճերը, մեթոդները և ուղղությունները, 3) բնութագրի դիզայնը որպես արվեստի ինքնուրույն տեսակ, ներկայացնել դիզայնը որպես 20-րդ դարի արվեստ, նրա պատմական ակունքները և ստեղծման օրինաչափությունները, 4) ներկայացնի դիզայնի նպատակը և խնդիրները, նրա դերը մարդու կյանքում:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդարաքան յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դիզայնի պատմության և ժամանակագրության զարգացման հիմնական փուլերը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է դիզայնի պատմությունը, 2) ներկայացնում է դիզայնի ժամանակագրության զարգացման հիմնական փուլերը, 3) ներկայացնում է դիզայնի ապագա զարգացման նորագույն և հեռանկարային ոլորտները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է բանավոր հարցերի միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը պետք է ընդգրկի դիզայնի պատմության և ժամանակագրության զարգացման հիմնական փուլերը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե հարցերին տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:
Մեթոդաբառությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվելու է դասախոսության միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ինտերնետ կայքով համակարգիչ, տեսաերիզներ, պլակատներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել դիզայնի հիմնական ոլորտները, ոճերը, մեթոդները և ուղղությունները

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է դիզայնի հիմնական ոլորտները՝ իրենց նախագծային և ֆունկցիոնալ առանձնահատկություններով (արդյունաբերական, գրաֆիկական, միջավայրի, առարկայական, հագուստի, կիրառական),</p> <p>2) ներկայացնում է դիզայն նախագծային գործունեության ոճային բազմազանությունը և մեթոդները,</p> <p>3) ներկայացնում է դիզայնի տարբեր դպրոցներում կիրառվող նախագծային մեթոդները և ուղղությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջարկվեն հարցեր դիզայնի ոլորտների (արդյունաբերական, գրաֆիկական, միջավայրի, առարկայական, հագուստի, կիրառական) ոճերի և ուղղությունների, մեթոդների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը առաջադրված հարցերին ընդհանուր առմամբ կպատասխանի ճիշտ, կցուցաբերի նյութի էական կարևորություն ներկայացնող մասերի իմացություն:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Դասախոսություն և սեմինար պարապմունքներ: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, համաշխարհային դիզայնի լավագույն նմուշներ, օրինակների ցուցադրություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Բնութագրել դիզայնը որպես արվեստի ինքնուրույն տեսակ, ներկայացնել դիզայնը որպես 20-րդ դարի արվեստ, նրա պատմական ակունքները և ստեղծման օրինաչափությունները</p>
Կատարման չափանիշներ	<p>1) բնութագրում է դիզայնը որպես արվեստի ինքնուրույն տեսակ, շեշտադրելով նրա նախագծային դրվածքը,</p> <p>2) ներկայացնում է դիզայնը որպես 20-րդ դարի արվեստ,</p> <p>3) ներկայացնում է դիզայնի պատմական ակունքները (դիզայնի գերմանական դպրոց),</p> <p>4) ներկայացնում է դիզայնի ստեղծման օրինաչափությունները՝ արդյունաբերության զարգացումը, նորագույն տեխնոլոգիաները, նյութերի կիրառումը և շուկայի մրցակցությունը:</p>
Գնահատման միջոցը	<p>Մովորողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն հարցեր՝ դիզայնը որպես ինքնուրույն արվեստի տեսակ և 20-րդ դարի ամենապահանջարկ ունեցող արվեստ, նրա ստեղծման օրինաչափությունները՝ արդյունաբերական զարգացման, նորագույն տեխնոլոգիաների, նյութերի կիրառման և շուկայի մրցակցության վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ձեռքբերումը կատարվելու է տեսական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական</p>

	գրականություն, համակարգիչ՝ ինտերնետ կապով, տեսաերիզներ, պլակատներ, ալբոմներ լավագույն դիզայներների աշխատանքներից:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել դիզայնի նպատակը և խնդիրները, նրա դերը մարդու կյանքում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է դիզայնի նպատակը , 2) ներկայացնում է դիզայնի հիմնախնդիրները՝ նախագծային գործունեության ոլորտում, 3) ներկայացնում է դիզայնի հզոր դերը մարդու ապրելակերպի բարելավման գործում, 4) ներկայացնում է նորագույն տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը դիզայնում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և սեմինար պարապմունքների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են ուսանողի գիտելիքները դիզայնի նպատակների, խնդիրների՝ նախագծային գործունեության ոլորտում, մարդու ապրելակերպի բարելավման գործում, նորագույն տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը դիզայնում:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե հարցերին ընդհանուր առմամբ, տրվում են ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և սեմինար պարապմունքներ: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկ, համակարգիչ, պրոեկցիոն սարք՝ համաշխարհային լավագույն դիզայներական գործերի ցուցադրության համար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՊԼԱՍՏԻԿ ԱՆԱՏՈՄԻԱ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-032
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել մարդու մարմնի, մասնավորապես, նրա ոսկրային և մկանային անատոմիական կառուցվածքի, մարդու անատոմիական կարևորագույն միացությունների և ֆունկցիոնալ հանգույցների շարժունակության հետ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ

	գործնականաշխատաք՝ 6 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>> , ԴՈԿ 5-12-003 <<Գծանկարում համաչափությունները նկարված և նկարատման մեթոդները>> , ԴՈԿ 5-12-008 <<Գունանկարչության մասնագիտական օրինաչափությունները>>, ԴՈԿ 5-12-25 <<Կլորքանդակի հիմնախնդիրները նկատարման մեթոդները>> , ԴՈԿ 5-12-049 <<Էրգոնոմիկական ֆունկցիոնալ վերլուծություն>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի մարդու մարմնի, մասնավորապես նրա ոսկրային և մկանային, անատոմիական կառուցվածքը, 2) ներկայացնի անատոմիան որպես կերպարվեստի և յուրաքանչյուր արվեստի հիմք, մարդու անատոմիական մարմնակազմության տարատեսակները, համաչափությունները և շարժումները, նույնիսկ զգացմունքների մկանային արտահայտման տարբեր տիպերը, 3) ներկայացնի մարդու անատոմիական կարևորագույն միացությունների և ֆունկցիոնալ հանգույցների շարժունակությունը, 4) ներկայացնի անատոմիայի տերմինաբանություն, վերլուծություն և համեմատական սխեմաների մշակման մեթոդները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված կարգով արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգով:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարդու մարմնի, մասնավորապես նրա ոսկրային և մկանային, անատոմիական կառուցվածքը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու մարմնի ընդհանուր կառուցվածքը, 2) ներկայացնում է մարդու անատոմիական առանձնահատկությունները, 3) ներկայացնում է մարդու անատոմիայի ոսկրային համակարգը, 4) ներկայացնում է մարդու անատոմիայի մկանային համակարգը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարցերի միջոցով կստուգվեն մարդու մարմնի ընդհանուր կառուցվածքը, անատոմիական առանձնահատկությունները: Իսկ գործնական առաջադրանքի միջոցով ոսկրային և մկանային համակարգի վերաբերյալ գիտելիքները: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքը (նկարել) կատարվել է հիմնականում անսխալ, իսկ

	հարցերին էլ տրվում է ճիշտ պատասխան:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, մասնագիտական ձեռնարկ՝ պլաստիկ անատոմիա նկարելու համար, պլակատներ, պրոեկցիոն սարք:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք2	Ներկայացնել անատոմիան որպես կերպարվեստի և յուրաքանչյուր արվեստի հիմք, մարդու անատոմիական մարմնակազմության տարատեսակները, համաչափությունները և շարժումները, նույնիսկ զգացմունքների մկանային արտահայտման տարբեր տիպերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է անատոմիական գիտելիքների անհրաժեշտությունը կերպարվեստում և այլ արվեստներում, 2) բացատրում է մարդու անատոմիական մարմնակազմության տարատեսակները, 3) բացատրում է մարդու անատոմիական մարմնակազմության համաչափությունները և շարժումները, 4) բացատրում է մարդու հոգեբանական իրավիճակներն արտահայտող մկանային համակարգը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարցերի միջոցով ստուգվելու են ուսանողի գիտելիքները արվեստում պլաստիկ անատոմիայի անհրաժեշտության, մարդու անատոմիայի մարմնակազմության տեսակների վերաբերյալ: Իսկ գործնական հանձնարարություններով ստուգվելու են մարդու մարմնակազմության համաչափությունների և շարժումների, մարդու հոգեբանական իրավիճակներն արտահայտող մկանային համակարգերի վերաբերյալ ուսանողի կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, բոլոր պահանջների կատարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսության և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, անատոմիական կմախքներ, մարդու դետալներ, մկանային տորս, գլուխ, պլակատ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք3	Ներկայացնել մարդու անատոմիական կարևորագույն միացությունների և ֆունկցիոնալ հանգույցների շարժունակությունը
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու

	<p>պատասխանի միջոցով ստուգվելու են ուսանողի գիտելիքները տարբեր տարիքի և սեռերի մարդկանց մոտ անատոմիական կառուցվածքային տարբերությունների վերաբերյալ: Իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ստուգվելու են մարդու անատոմիական միացությունների, հանգույցների և նրանց շարժունակության վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, դիդակտիկ նյութեր, պլակատներ, կմախք, ստորին և վերին վերջույթների կմախքներ և դետալներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնելանատոմիայիտերմինաբանություն, վերլուծությունևհամեմատականսխեմաներիմշակմանմեթոդները
Կատարմանչափանիշներ	1) ներկայացնում է մարդու անատոմիական կարևորագույն միացությունները, հանգույցները և նրանց շարժունակությունը, 2) ներկայացնում է անատոմիական կառուցվածքային տարբերությունները տարբեր տարիքի և սեռերի մարդկանց մոտ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կազմել համեմատական սխեմաներ, իսկ հարցերի միջոցով ներկայացնել անատոմիական տերմինաբանությունը և կատարելու է վերլուծություն: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը հիմնականում կատարվում է անսխալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալմասնագիտական գրականություն, գծագրական թուղթ, պիտույքներ, ցուցադրական նյութեր, սխեմա և օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԴԻԶԱՅՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-033
Մոդուլինպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել դիզայնի կոմպոզիցիոն նախագծային մտածելակերպը, ուսումնասիրման և պրակտիկ կատարման մեթոդները, ձևերը, նրանց փուլային կատարման սխեման, դիզայն նախագծման նպատակը և հիմնախնդիրները:
Մոդուլիտևոդությունը	18 ժամ

	տեսականուսուցում՝ 12ժամ գործնականաշխատանք՝ 6ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՌԿ 5-12-001 <<Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում>> , ԴՌԿ 5-12-008 <<Գունանկարչության մասնագիտական օրինաչափությունները>>, ԴՌԿ 5-12-016 <<Կտրվածքների ֆունկցիոնալ կարևորությունը պրոեկցիոն գծագրության մեջ>> , ԴՌԿ 5-12-017 <<Գունատեսություն>> , ԴՌԿ 5-12-018<<Հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմունքները դիզայնում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի դիզայնի կոմպոզիցիոն ուսումնասիրմանն պրակտիկ կատարման մեթոդները, 2) ներկայացնի նախագծային ուսուցման մեթոդական ձևերը, նրանց փուլային կատարման մեթոդական սխեման, 3) ներկայացնի դիզայն նախագծման նպատակը և հիմնական խնդիրները, 4) ներկայացնի դիզայն նախագծման ֆունկցիոնալ, կոնստրուկտիվ տեխնոլոգիական, էրգոնոմիկական և կոմպոզիցիոն հարցադրումների փոխկապակցությունը և օրինաչափությունները, դիզայն նախագծում կոմպոզիցիոն հիմնական գործոնների կիրառումը, 5) ներկայացնի ունիֆիկացված և մոդուլային համակարգերի կիրառման ձևերը, դիզայն նախագծման երկու մեթոդական ուղղությունները՝ երկրաչափական ձևերի և բիոնիկական հիմքով, 6) ներկայացնի դիզայնի տարբեր լուծումներում նախագծային հիմնախնդիրների դասակարգումը:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դիզայնի կոմպոզիցիոն ուսումնասիրման և պրակտիկ կատարման մեթոդները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է <<Դիզայն նախագծումը որպես մասնագիտության հիմք>> , 2) ներկայացնում է Դիզայն նախագծումը որպես կոմպոզիցիոն նախագծային մտածելակերպի նեո-դավալիկ երպարայնության բացահայտման միջոց, 3) կիրառում է դիզայնի կոմպոզիցիոն էզոն, 4) օգտագործում է նախագծային օբյեկտի ուսումնասիրմանն պրակտիկ կատարման մեթոդները:

Գնահատման միջոցը	<p>Ուսանողի գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն մի շարք հարցեր և առաջադրանքներ: Հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով կբացահայտվեն դիզայնի կոմպոզիցիոն ուսումնասիրման և պրակտիկ կատարման մեթոդների վերաբերյալ գիտելիքները և կարողությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարված է անսխալ, հարցերին ընդհանուր առմամբ տրվել են ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբառությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան սեղաններով ապահովված կոմպոզիցիայի արվեստանոց, տախտակ շարժվող քանոններ, գծագրական պիտույքներ, մասնագիտական գրականություն, պահոցներում պահված լավ օրինակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել նախագծային ուսուցման մեթոդական ձևերը, նրանց փուլային կատարման մեթոդական սխեման</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կիրառում է նախագծային ուսուցման մեթոդական ձևերը, 2) մշակում է կատարման մեթոդական սխեման, 3) կիրառում է գրաֆիկական պատկերման մեթոդներն ու ձևերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Հարցերի միջոցով կստուգվեն ուսանողի գիտելիքները նախագծային ուսուցման մեթոդական ձևերի վերաբերյալ, իսկ գործնական առաջադրանքների միջոցով ստուգվելու են մեթոդական սխեմաների և գրաֆիկական պատկերման մեթոդների ու ձևերի կատարման վերաբերյալ կարողությունները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբառությունը և ռեսուրսները	<p>Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ կոմպոզիցիայի համապատասխան կահավորված արվեստանոց, տախտակ՝ շարժական քանոններով, գծագրական պիտույքներ, վատման, մասնագիտական գրականություն, ցուցադրման նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել դիզայն նախագծման նպատակը և հիմնական խնդիրները</p>

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է դիզայն նախագծման սպառողական ֆունկցիոնալ վերլուծության մեթոդական հարցադրումները,</p> <p>2) կիրառում է ընդհանուրից մասնակի և պարզից-բարդ սկզբունքը,</p> <p>3) ներկայացնում է դիզայն նախագծման նպատակը և հիմնական խնդիրները:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են դիզայն նախագծման սպառողական ֆունկցիոնալ վերլուծության վերաբերյալ գիտելիքները: Գործնական առաջադրանքների միջոցով ստուգվելու են ընդհանուրից մասնակի և պարզից-բարդ սկզբունքի կատարման կարողությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե հարցերին ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ, իսկ գործնական առաջադրանքները կատարվում են անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան կոմպոզիցիայի արվեստանոց, գծագրական պիտույքներ, մասնագիտական գրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում` 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք` 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել դիզայն նախագծման ֆունկցիոնալ, կոնստրուկտիվ տեխնոլոգիական, էրգոնոմիկական և կոմպոզիցիոն հարցադրումների փոխկապակցությունը և օրինաչափությունները, դիզայն նախագծում կոմպոզիցիոն հիմնական գործոնների կիրառումը</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է դիզայն նախագծման ֆունկցիոնալ և կոնստրուկտիվ տեխնոլոգիական հարցադրումների փոխկապակցությունը և օրինաչափությունները,</p> <p>2) ներկայացնում է դիզայն նախագծման էրգոնոմիկական և կոմպոզիցիոն հարցադրումների փոխկապակցությունը և օրինաչափությունները,</p> <p>3) ներկայացնում է դիզայն նախագծման կոմպոզիցիոն հիմնական գործոնների կիրառումը:</p>
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն հարցեր դիզայն նախագծման ֆունկցիոնալ և կոնստրուկտիվ տեխնոլոգիական, էրգոնոմիկական և կոմպոզիցիոն փոխկապակցության ու օրինաչափությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքներով էլ կստուգվեն դիզայն նախագծման կոմպոզիցիոն հիմնական գործոնների կիրառման կարողությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե հարցերին ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ, իսկ</p>

	գործնական առաջադրանքները կատարվել են անսխալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրման նյութեր պահոցներից, կոմպոզիցիայի համար նախատեսված արվեստանոց, գծագրական պիտույքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 2 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ունիֆիկացված և մոդուլային համակարգերի կիրառման ձևերը, դիզայն նախագծման երկու մեթոդական ուղղությունները` երկրաչափական ձևերի և բիոնիկական հիմքով,
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքներ կատարելու հիման վրա: Հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով կսուզվեն ուսանողի գիտելիքներն ու կարողությունները ունիֆիկացված և մոդուլային համակարգերի կիրառման ձևերի, դիզայն նախագծման երկու մեթոդական ուղղությունների` երկրաչափական ձևերի և բիոնիկականի վերաբերյալ: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե հարցերին տրված են ճիշտ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, մասնագիտական գրականություն, կոմպոզիցիայի համապատասխան արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 2 ժամ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ունիֆիկացված և մոդուլային համակարգերի կիրառման ձևերը և հիմնավորումը դիզայն նախագծերում, 2) ներկայացնում է դիզայն նախագծման մեթոդը երկրաչափական ձևերի հիմքով, 3) ներկայացնում է դիզայն նախագծման մեթոդը բիոնիկական ուսումնասիրության հիմքով:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել դիզայնի տարբեր ոլորտներում նախագծային հիմնախնդիրների դասակարգումը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է դիզայնի տարբեր ոլորտներում նախագծային հիմնախնդիրների դասակարգումը, 2) ներկայացնում է դիզայն նախագծի ամբողջական փաթեթի ստեղծման պահանջը, 3) ներկայացնում է դիզայն նախագծի ներկայացման ձևերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարցերի միջոցով կստուգվեն ուսանողի` դիզայնի տարբեր ոլորտներում նախագծային հիմնախնդիրների դասակարգման վերաբերյալ գիտելիքները, իսկ

	<p>գործնական առաջադրանքներով կատարվեն դիզայն նախագծի ամբողջական փաթեթի ստեղծման, նախագծի ներկայացման ձևերի վերաբերյալ կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կոմպոզիցիայի արվեստանոց, տախտակ՝ շարժական քանոնով, գծագրական պիտույքներ, ցուցադրման համար օրինակներ, վերատպություններ, համակարգիչ՝ ինտերնետ կապով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՐԶ ՁԵՆՐՈՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-034
Մոդուլինպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ նախագծային և կոմպոզիցիոն խնդիրների երկրաչափական պարզ ձևերի հարթային ու ծավալային տեսքի մասին:
Մոդուլիսևոդությունը	36 ժամ տեսականուսուցում՝ 8ժամ գործնականաշխատանք՝ 28ժամ
Սուտքայինպահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-013 <<Երկրաչափական գծագրության հիմնախնդիրները>>, ԴՈԿ 5-12-014 <<Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>>, ԴՈԿ 5-12-033<<Դիզայն նախագծման հիմունքները>>, ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքիկոմպոզիցիայիհիմունքներըդիզայնում>>մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի նախագծայինևկոմպոզիցիոնխնդիրներիիրականացմանտարբերակներ՝ երկրաչափականպարզձևերիօգնությամբ, 2) ներկայացնի երկրաչափական պարզ ձևերը, որպես նախագծային և կոմպոզիցիոն մտքի հիմք, 3) իրականացնի կոմպոզիցիոն և նախագծային կարճատև աշխատանքներ՝ կիրառելով կոմպոզիցիոն կարևոր գործոններ:
Մոդուլիզնահատմանկարգը	Մոդուլիընդունելիկատարողականըյուրաքանչյուրարդյունքիհամարսահմանվածկատարմանչափանիշներիբավարարմակ

	արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել նախագծային և կոմպոզիցիոն խնդիրների իրականացման տարբերակներ՝ երկրաչափական պարզ ձևերի ոգնությամբ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է նախագծային և կոմպոզիցիոն պարզ խնդիրներ, 2) բացահայտում է երկրաչափական պարզ ձևերի դերը կոմպոզիցիոն նախագծային խնդիրներում, 3) տարբերակում է նախագծերում երկրաչափական հարթային պատկերներին ծավալային ձևերի կոմպոզիցիոն կիրառման տարբերություններն հնարավորություններ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերը բացահայտելու են նախագծային և կոմպոզիցիոն պարզ խնդիրների իրականացման տարբերակների, երկրաչափական հարթային պատկերների և ծավալային ձևերի վերաբերյալ գիտելիքները, որոնք կկիրառվեն նախագծային և կոմպոզիցիոն պարզ խնդիրների կատարման ժամանակ: Արդյունքի յուրացումը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, ձևակերպումները կատարում է գրագետ, իսկ գործնական խնդիրները կատարում է անթերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական նյութեր, պահոցներում պահված լավ աշխատանքներ, գծագրելու պայմաններով ապահովված արվեստանոց, գծագրական պիտույքներ, տախտակ՝ շարժական քանոններով, թուղթ, տուշ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել երկրաչափական պարզ ձևերը, որպես նախագծային և կոմպոզիցիոն մտքի հիմք
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է բոլոր պարզ երկրաչափական ձևերը հարթային և ծավալային տեսքով, 2) բացատրում է երկրաչափական ձևերի և մարմինների կառուցման սկզբունքը, 3) ներկայացնում է երկրաչափական ձևերով կատարված կոմպոզիցիայի առանցքային դրվածքը և համաչափությունների փոխհարաբերությունը, 3) բացատրում է երկրաչափական ձևերի և մարմինների առանցքային դրվածքն ու համաչափությունների

	<p>փոխհարաբերությունը,</p> <p>4) բացատրում է կոմպոզիցիոն առաջարկներում երկրաչափական մարմինների համատեղ կիրառման հնարավորություններ և տարբերակներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կհանձնարարվի գծել կամ գծագրել բոլոր պարզ երկրաչափական ձևերը՝ հարթային և ծավալային տեսքով պահպանելով կառուցման սկզբունքը, կկատարվի կոմպոզիցիայի առանցքային դրվածքը, կներկայացվի երկրաչափական մարմինների համատեղ կիրառման հնարավորություններն ու տարբերակները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, մասնագիտական գրականություն, ցուցադրման համար պահոցների անթերի կատարված կոմպոզիցիաներ, համակարգիչ, գծագրելու համար արվեստանոց, տախտակ՝ շարժական քանոններով, գծագրական պիտույքներով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իրականացնել կոմպոզիցիոն և նախագծային կարճատև աշխատանքներ՝ կիրառելով կոմպոզիցիոն կարևոր գործոններ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է նախագծային կարճատև աշխատանքի՝ կլաուզուրայի կատարման պայմանները և պահանջները, 2) վերլուծում և դասակարգում է կոմպոզիցիոն բոլոր գործոնները, 3) մեկնաբանում է կոմպոզիցիոն գործոնների առանձնահատկությունները, 4) պարզաբանում է կոմպոզիցիոն գործոնների փոխկապվածությունը և համատեղ կիրառման հնարավորությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Սովորողի գիտելիքները ստուգելու նպատակով ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ կիրառելով կոմպոզիցիոն կարևոր գործոնները կատարել կոմպոզիցիոն և նախագծային աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն և այն կատարելու կարողություններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական պարապմունքներ: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական գրականություն, գծագրական գործիքներ, ձգված թղթով տախտակ շարժվող քանոններով, ցուցադրման համար լավ

	օրինակներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքները անցկացնել կոմպոզիցիայի պահանջների համապատասխան լսարանում (արվեստանոց):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԲԻՈՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՆԱԽԱԳԾԱՑԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-035
Մոդուլին պատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել բիոնիկական՝ կենդանական և բուսական աշխարհի ուսումնասիրության մեթոդները, ծավալային ձևափոխման և զարգացման հանրահայտ ձևերը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 46 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-015 <<Երկրաչափական գծագրության պահանջները, խնդիրները, մեթոդներն ու հնարավորությունները>>, ԴՈԿ 5-12-017 <<Գունատեսություն>>, ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմունքները դիզայնում>> ԴՈԿ 5-12-033 <<Դիզայն նախագծման հիմունքները>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք . 1) ներկայացնի կենդանական և բուսական աշխարհի բիոնիկական ուսումնասիրության մեթոդները, 2) ներկայացնի բիոնիկական մարմինների ծավալային ձևափոխման և կոնստրուկտիվ զարգացման ձևերը, 3) ներկայացնի բիոնիկական ուսումնասիրության հիմքով նոր ֆունկցիոնալ ծավալների բացահայտման հնարավոր ձևերը և մեթոդները
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կենդանական և բուսական աշխարհի բիոնիկական ուսումնասիրության մեթոդները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կենդանական աշխարհի բիոնիկական վերլուծության տարբերակ, 2) ներկայացնում է բուսական աշխարհի բիոնիկական վերլուծության տարբերակ:

Գնահատման միջոցը	Այս արդյունքը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է իմանա բիոնիկայի՝ կենդանական և բուսական աշխարհի ուսումնասիրության մեթոդները: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշերի բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ բույսերի և կենդանական աշխարհի մասին գրականություն, հանրագիտարան, համակարգիչ՝ ինտերնետ կապով, կոմպոզիցիոն էսքիզներ անելու հարմարավետ արվեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բիոնիկական մարմինների ծավալային ձևափոխման և կոնստրուկտիվ զարգացման ձևերը
Կատարման չափանիշներ	1) կատարում է կենդանական աշխարհի հիմքով բիոնիկական մարմնի ծավալային ձևափոխման նմանական համեմատական աշխատանք, 2) կատարում է բուսական աշխարհի հիմքով բիոնիկական զարգացման և ծավալային ձևափոխման աշխատանք, 3) պարզաբանում է բիոնիկական ուսումնասիրության հիմքով իրականացվող նախագծերի մեթոդական առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Մոլորոդների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ կենդանական հիմքով ծավալային ձևափոխման և նմանական համեմատական, բուսական հիմքով բիոնիկական զարգացման և ծավալային ձևափոխման աշխատանքների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե նախագիծը կատարում է գրագետ և անթերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, նախագծման համար անհրաժեշտ արվեստանոց և պիտույքներ, տեսաերիզներ, համակարգիչ՝ ինտերնետ կապով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բիոնիկական ուսումնասիրության հիմքով նոր ֆունկցիոնալ ծավալների բացահայտման հնարավոր ձևերը և մեթոդները

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է բիոնիկական ուսումնասիրությունը և վերլուծությունը՝ նախագծային կոնկրետ պահանջներին համապատասխան,</p> <p>2) ներկայացնում է բիոնիկական ուսումնասիրության հիմքով իրականացված ճարտարապետական և դիզայնական նախագծեր,</p> <p>3) բացահայտում է նախագծային ոլորտում բիոնիկական հարցադրումների հեռանկարային զարգացման հնարավորությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են ուսանողի՝ բիոնիկական ուսումնասիրության հիմքով նոր ֆունկցիոնալ ծավալների բացահայտման ձևերը և մեթոդները, ինչպես նաև նախագծային ոլորտում հեռանկարային զարգացման հնարավորությունների վերաբերյալ գիտելիքները, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նախագծային կոնկրետ պահանջներին համապատասխան ճարտարապետական և դիզայնական նախագծերի կարողությունները:</p> <p>Արդյունքը կհամարվի ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մասնագիտական գրականություն, դիդակտիկ նյութեր, դիզայնի և ճարտարապետության վերաբերյալ ամսագրեր, ինտերնետ կայք, զծագրելու համապատասխան արվեստանոց, նկարչական և զծագրական նյութեր և պիտույքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՓԱԹԵԹԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՈՃԱՎՈՐՈՒՄՈՎ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-036
Մոդուլին պատկեր	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ պարզ փաթեթների, տոպրակների նախագծման պահանջների և նախագծային հիմնախնդիրների մասին:
Մոդուլի տևողությունը	<p>72 ժամ</p> <p>տեսական ուսուցում՝ 12 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 60 ժամ</p>

Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՌԿ 5-12-014 <<Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>> , ԴՌԿ 5-12-017 <<Գունատեսություն>> ԴՌԿ 5-12-018 <<Հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմունքները դիզայնում>> , <<ԴՌԿ 5-12-019 <<Արխիտեկտոնիկա>> , ԴՌԿ 5-12-020 <<Նյութագիտությունն նյութերի տեխնոլոգիա>> , ԴՌԿ 5-12-033 <<Դիզայնն ախազման հիմունքները>> մոդուլները:</p>
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի պարզ փաթեթների նախագծման պահանջները և հիմնախնդիրները, 2) ներկայացնի նախագծային գործընթացում նյութի և պատրաստման տեխնոլոգիայի ճիշտ ընտրության կարևորությունը, 3) բացահայտի փաթեթների նախագծման կոնստրուկտիվ և ֆունկցիոնալ պարզ լուծումների անհրաժեշտությունը, գրաֆիկական ոճավորման ձևերը:
Մոդուլի զննահատման կարգը	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդյակի ապահովումն է:</p>
Ուսումնառության արդյունք 1	<p>Ներկայացնել պարզ փաթեթների նախագծման պահանջները և հիմնախնդիրները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իրականացնում է մեկ կամ օգտագործվող պարզ փաթեթների գոյություն ունեցող տարբերակներ, 2) վերլուծում է պարզ փաթեթների դրական և բացասական հատկանիշները, 3) իրականացնում է փաթեթի նախագծային պահանջները, 4) իրականացնում է փաթեթի նախագծային հիմնախնդիրները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվելու է բանավոր հարցերի և գործնական աշխատանքների հիման վրա: Հարցերի միջոցով ստուգվելու են ուսանողի՝ մեկ անգամ օգտագործվող պարզ փաթեթների տարբերակների և դրանց դրական ու բացասական հատկանիշների վերաբերյալ գիտելիքները: Իսկ գործնական առաջադրանքներով գնահատվելու են փաթեթի նախագծային պահանջների ու հիմնախնդիրների վերաբերյալ կարողությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և նախագիծը գծագրում է գրագետ ու անթերի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է օգտագործել մասնագիտական գրականություն, համակարգիչ՝ ինտերնետ կապով, պահոցների լավագույն նախագծեր՝ ցուցադրման համար, գծագրելու համար նախատեսված արվեստանոց, գծագրական և նկարչական նյութեր ու պիտույքներ:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել նախագծային գործընթացում նյութի և պատրաստման տեխնոլոգիայի ճիշտ ընտրության կարևորությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կիրառում է փաթեթների պատրաստման համար օգտագործվող հիմնական նյութերը, 2) բացատրում է ընտրված նյութերի տեխնոլոգիական հնարավորությունները, 3) կատարում է նախագծային էսքիզներ, 4) պատրաստում է փաթեթի աշխատանքային մանրակերտ նմուշ ընտրված նյութով:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների հիման վրա: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը ճիշտ է ընտրում փաթեթների պատրաստման համար օգտագործվող նյութերը և բացատրում նրանց տեխնոլոգիական հնարավորությունները ու անթերի կատարում նախագծային էսքիզներ, պատրաստում փաթեթի աշխատանքային մանրակերտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ու գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ամսագրեր, մեթոդական նյութեր, մակետը պատրաստելու համար վատման, գունավոր թղթեր և էսքիզների համար պլանշետ, նկարչական ու գծագրական նյութեր և պիտույքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Բացահայտել փաթեթների նախագծման կոնստրուկտիվ և ֆունկցիոնալ պարզ լուծումների անհրաժեշտությունը, գրաֆիկական ոճավորման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է փաթեթների կոնստրուկտիվ լուծումների տարբերակներ և ֆունկցիոնալ հիմնավորում, 2) ներկայացնում է փաթեթի կոնստրուկտիվ լուծման ինքնուրույն տարբերակ, 3) մշակում է փաթեթի արտաքին գրաֆիկական ոճավորման ինքնատիպ լուծումներ:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ փաթեթի նախագծման կոնստրուկտիվ, ֆունկցիոնալ լուծումների, գրաֆիկական ոճավորման ձևերի վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը կառաջարկի փաթեթի կոնստրուկտիվ լուծման ինքնուրույն տարբերակը և առաջադրանքը կկատարի անթերի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է օգտագործել դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, պատրաստի օրինակներ՝ ցուցադրման համար, մասնագիտական ամսագրեր, համակարգիչ, արվեստանոց, նկարչական և զճագրական նյութեր ու պիտույքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ՆՈՐ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-037
Մոդուլինպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ երկրաչափական մարմինների կառուցվածքային առանձնահատկությունների և ֆունկցիոնալ նոր ծավալների ստեղծման հնարավորությունների մասին:
Մոդուլիտևոդությունը	54 ժամ տեսականուսուցում՝ 10ժամ գործնականաշխատանք՝ 44ժամ
Մուտքայինպահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-014 <<Պրոեկցիոն զճագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>>, ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմունքներըդիզայնում>> , <<ԴՈԿ 5-12-019 <<Արխիտեկտոնիկա>> , ԴՈԿ 5-12-034<<Երկրաչափական պարզձևերովնախագծայինևկոմպոզիցիոնխնդիրներիիրականացում>>մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է 1) ներկայացնի երկրաչափական մարմինների տեսակները՝ իրենց կառուցվածքային առանձնահատկություններով 2) ներկայացնի երկրաչափական մարմինների ծավալային ձևավորման մեթոդները
Մոդուլիզնահատմանկարգը	Մոդուլիընդունելիկատարողականըյուրաքանչյուրարդյունքիհամարսահմանվածկատարմանչափանիշներիբավարարման արդակիպահովումնէ:
Ուսումնառությանարդյունք 1	Ներկայացնելերկրաչափականմարմիններիտեսակները՝ իրենցկառուցվածքայինառանձնահատկություններով
Կատարմանչափանիշներ	1) կատարումէերկրաչափականմարմիններիհամաչափություններիհամեմատականվերլուծություն, 2) ապահովումէերկրաչափականմարմիններիկառուցվածքը՝ առանցքայինդրվածքով, 3) իրականացնումէերկրաչափականմարմիններիկառուցվածքայինգրաֆիկականևծավալայինլուծումներիտարբերակներ:

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է տեսական և գործնական հանձնարարությունների հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են ուսանողի գիտելիքները՝ երկրաչափական մարմինների տեսակների և իրենց կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ: Իսկ գործնական առաջադրանքներով ստուգվելու են երկրաչափական մարմինների կառուցվածքի առանցքային դրվածքի, գրաֆիկական և ծավալային լուծումների տարբերակների կատարման վերաբերյալ կարողությունները:</p> <p>Արդյունքը կհամարվի ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է մասնագիտական ձեռնարկ, գծագրական տախտակ՝ շարժական քանոններով, գծագրական և նկարչական նյութեր ու պիտույքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել երկրաչափական մարմինների ծավալային ձևավորման մեթոդները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իրականացնում է երկրաչափական մարմինների ձևափոխման ինքնուրույն աշխատանքնյութի վրա, 2) կատարում է ստացված նոր էլեմենտով ինքնատիպ կոմպոզիցիոն լուծումներ, 3) կիրառում է գունային լուծումների և ակցենտավորման ձևերն ու մեթոդները ծավալային լուծումներում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին տրվելու են առաջադրանքներ երկրաչափական մարմինների ձևափոխման ինքնուրույն աշխատանք նյութի վրա և ստացված նոր էլեմենտներով ինքնատիպ կոմպոզիցիայի ստեղծում՝ կիրառելով գունային և ակցենտավորման ձևեր ու մեթոդներ: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը հիմնավորելու է իր կատարած ծավալային կոմպոզիցիոն աշխատանքը:</p> <p>Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան սեղաններ, գծագրական տախտակ, դիդակտիկ նյութեր, պահոցներում պահված ինքնատիպ կոմպոզիցիաների օրինակներ, գծագրական և նկարչական նյութեր, պիտույքներ:</p>
Ուսուցման երաշխավորված	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p>

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 22 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՊԱՐԶ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-038
Մոդուլին պատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել ծավալային նախագծման սկզբունքները և հարցադրումները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 64 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-014 <<Պրոեկցիոն գծագրության խնդիրները, օրենքները, մեթոդները և պահանջները>>, ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքի (կոմպոզիցիայի) հիմունքները և դիզայնում>>, ԴՈԿ 5-12-033 <<Դիզայնի նախագծման հիմունքները>>, ԴՈԿ 5-12-035 <<Բիռնիկական ուսումնասիրության հիմքով նախագծային առաջարկների իրականացում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի ծավալային նախագծման հնարավոր մեթոդները և ուղղությունները, 2) բացահայտի ծավալային նախագծման ֆունկցիոնալ առանձնահատկությունները, 3) ներկայացնի երկրաչափական էլեմենտների հիմքով կենցաղային իրի նախագծման հնարավոր պահանջները:
Մոդուլի զննահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ըյուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման արդյունքի պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ծավալային նախագծման հնարավոր մեթոդները և ուղղությունները,
Կատարման չափանիշներ	1) կիրառում է ծավալային նախագծման հնարավոր մեթոդները, 1) օգտագործում է ծավալային նախագծման հնարավոր ուղղությունները, 1) իրականացնում է ծավալային նախագծման հիմնախնդիրները:
Գնահատման միջոցը	Մովորողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ ծավալային նախագծման մեթոդների, հնարավոր ուղղությունների և նախագծման հիմնախնդիրների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման

	ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, պլակատներ, մասնագիտական ձեռնարկ, նախագծային աշխատանքներ կատարելու համար համապատասխան արվեստանոց, գծագրական, նկարչական նյութեր և պիտույքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Բացահայտել ծավալային նախագծման ֆունկցիոնալ առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) իրականացնում է նախագծվող իրի ֆունկցիոնալ անհրաժեշտ պայմանները, 2) իրականացնում է ֆունկցիոնալ հիմնախնդիրների իրականացումը կոնստրուկտիվ լուծումների միջոցով, 3) ներկայացնում է առաջարկվող ծավալային լուծման և ֆունկցիայի համատեղությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է նախագծվող իրի ֆունկցիոնալ հիմնախնդիրների կատարում՝ կոնստրուկտիվ և ծավալային լուծումների համատեղությամբ: Արդյունքի յուրացումը կհամարվի ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրելու համար հարմարավետ պայմաններ, գծագրական և նկարչական պիտույքներ, ցուցադրման նյութեր, պատրաստի նախագծեր, մասնագիտական ամսագրեր, դիզայնի վերաբերյալ գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել երկրաչափական էլեմենտների հիմքով կենցաղային իրի նախագծման հնարավոր պահանջները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է երկրաչափական մարմինների ձևափոխման հնարավոր տարբերակները, 2) կիրառում է պլաստիկայի հիմախնդիրները ֆունկցիոնալ իրի ձևաստեղծման ընթացքում, 3) իրականացնում է նախագծված իրի արտաքին գունագրաֆիկական լուծումը և հարդարումը, 4) պահպանում է նախագծված իրի մասշտաբային պահանջները, 5) պատրաստում է նախագծված իրի մանրակերտը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է տեսական և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն առաջադրանքներ երկրաչափական էլեմենտների հիմքով կենցաղային իրի նախագծման պահանջների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե ուսանողը պատրաստում է նախագծված իրի մանրակերտը, իսկ հարց ու

	պատասխանի միջոցով հիմնավորում իր կատարած աշխատանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրման նյութեր, նախագծեր, մանրակերտ, մասնագիտական գրականություն, ամսագրեր, համակարգիչ, մանրակերտ պատրաստելու հարմարավետ արվեստանոց, թղթեր, ստվարաթղթեր, գծագրական և նկարչական նյութեր և պիտույքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում` 4 ժամ Գործնական աշխատանք` 24 ժամ
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԲՆԱԿԵԼԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՐՃԱՏԵՎ ՆԱԽԱԳԾԻ (ԿԼԱՈՒԶՈՒՐԱ) ԿԱՏԱՐՈՒՄ>>	
Մոդուլիդասիչը	ԴՈԿ 5-12-039
Մոդուլինպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել միջավայրի նախագծման պահանջներին և կարճատև աշխատանքի կազմակերպման մեթոդներին:
Մոդուլիտևոդությունը	72ժամ տեսականուսուցում` 18ժամ գործնականաշխատանք` 54ժամ
Մուտքայինպահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԴՈԿ 5-12-013 <<Երկրաչափականգծագրությանհիմնախնդիրները>>, ԴՈԿ 5-12-017 <<Գունատեսություն>>, ԴՈԿ 5-12-018 <<Հորինվածքի(կոմպոզիցիայի) հիմունքներըդիզայնում>>, ԴՈԿ 5-12-033 <<Դիզայննախագծմանհիմունքները>>մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է 1) ներկայացնի նախագծվող տարածքի պահանջները, 2) բացահայտի տարածքի վերահատակագծման հնարավորությունները:
Մոդուլիզնահատմանկարգը	Մոդուլիընդունելիկատարողականըյուրաքանչյուրարդյունքիհամարսահմանվածկատարմանչափանիշներիբավարարմակարգակիապահովումնէ:
Ուսումնառությանարդյունք 1	Ներկայացնել նախագծվող տարածքի պահանջները
Կատարմանչափանիշներ	1) ներկայացնումէկարճատևնախագծի (կլաուզուրայի) կատարմանմեթոդները, 2) կատարումէնախագծայինտարածքիֆունկցիոնավերլուծություն,

	<p>3) կատարում է տարածքի հատակագծի չափագրումն գոտիավորում,</p> <p>4) կատարում է տարածքի ֆունկցիոնալ նախագծի առաջարկ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվելու է բանավոր հարցերի, գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը բացահայտելու է կարճատև նախագծի կլաուզուրայի կատարման մեթոդների վերաբերյալ գիտելիքները: Իսկ գործնական առաջադրանքի միջոցով գնահատվելու են ուսանողի կարողությունները՝ տարածքի հատակագծի չափագրման և գոտիավորման, տարածքի ֆունկցիոնալ նախագծի առաջարկի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում է ճիշտ պատասխաններ, իսկ գործնական առաջադրանքները կատարվում են անթերի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական ձեռնարկներ, ճարտարապետության վերաբերյալ ամսագրեր, չափագրման միջոցներ, համապատասխան արվեստանոց, գծագրական պիտույքներ և անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Բացահայտել տարածքի վերահատակագծման հնարավորությունները
Կատարման չափանիշներ	<p>1) կատարում է հատակագծի ֆունկցիոնալ բաշխման ինքնուրույն տարբերակ,</p> <p>2) կազմում է տարածքի կազմակերպման հիմնական էլեմենտների անվանացանկը,</p> <p>3) ներկայացնում է տարածքի պատերի փովածքի և հեռանկարային լուծման էսքիզային առաջարկ,</p> <p>4) իրականացնում է տարածքի գունային հարդարման տարբերակներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվող հարցերի շրջանակը բացահայտելու է տարածքի վերահատակագծման հնարավորությունների վերաբերյալ գիտելիքները: Գործնական առաջադրանքի միջոցով գնահատվելու են ուսանողի կարողությունները հատակագծի ֆունկցիոնալ բաշխման ինքնուրույն տարբերակի, տարածքի հիմնական էլեմենտների անվանացանկի, պատերի փովածքի և հեռանկարային էսքիզների, տարածքի գունային հարդարման տարբերակների վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դասախոսություն, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն,

	ճարտարապետության վերաբերյալ ամսագրեր, էսքիզներ կատարելու համար համապատասխան դասասենյակ, գծագրական և նկարչական նյութեր, պիտույքներ, պրոեկցիոն սարք, համակարգիչ՝ ինտերնետ կապով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՖԻՐՄԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԱՄ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԻ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ>>	
Մոդուլի դասիչը	ԴՈԿ 5-12-040
Մոդուլին պատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել կողմնորոշիչ և ֆինային նշանների գրաֆիկական նախագծման մեթոդներին և պահանջներին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ
